Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Փ. ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ
8–ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ–2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդ դասարանում անցածի կրկնություն.....

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերաբերական.....
Ձայնարկություն.....
Կապ.....
Շաղկապ.....

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բառակապակցություն.....
Նախադասության տեսակներն
ըստ հաղորդակցման նպատակի
Պատմողական.....
Հրամայական.....
Հարցական.....
Բացականչական.....

Նախադասության տեսակներն ըստ կազմության
Պարզ և բարդ նախադասություններ.....
Համառոտ և ընդարձակ նախադասություններ.....
Միակազմ նախադասություններ.....

Նախադասության գլխավոր անդամներ
Ենթակա.....
Ստորոգյալ.....
Ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը .....
***Կիսամյակային կրկնություն*.....**

Նախադասության երկրորդական անդամներ
Գոյականական անդամի լրացումներ.....
Որոշիչ.....
Հատկացուցիչ.....
Բացահայտիչ.....
Բայական անդամի լրացումներ.....
Խնդիրներ.....
Պարագաներ.....

Դերբայական դարձված.....

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

Տեքստ

Մենախոսություն և երկխոսություն.....

Գիտական երկխոսություն.....

Բանավեճ.....

Տեղեկատվական տեքստ.....

Հարցազրույց.....

Ոճաբանություն

Գիտական ոճ.....

Վերլուծական շարադրություն.....

Գիտական հաղորդում. .....

Հոդված.....

Գործնական գրություններ

Արձանագրություն.....

Հաշվետվություն.....

Տարեվերջյան կրկնություն......

Հավելված.....

Նախորդ դասարանում անցածի կրկնություն

Կապակցված խոսք

Ձևաբանություն

Դպրոցն ու գրականությունը ուրիշ բան չեն, եթե ոչ ամենից առաջ լեզու...

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Հովհաննես Թումանյան

Մարդու մտքերի բանավոր կամ գրավոր արտահայտությունը խոսքն է:

Խոսել նշանակում է մտածել: Իսկ երբ դու մտածում ես, նշանակում է՝ մտքում ես խոսում:

Հաճախ ես նկատում, թե ինչպես է ուսուցիչդ որևէ աշակերտի կամ հենց քեզ դիտողություն անում՝ *մտածելո՞վ ես խոսում* կամ՝ *մտածի՛ր, նո՛ր պատասխանիր:* Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ քո խոսքը նախ ձևավորվում է քո մտքում, և եթե դու մտածում ես խոսելուց առաջ, նշանակում է՝ քո խոսքը կհնչի առավել տրամաբանված, ճիշտ ու գեղեցիկ:

Իսկ պատկերացրու՝

որքա՜ն ճիշտ և խոր է մտածում գիտնականը. չէ՞ որ նրա վերլուծական մտածողության ու դատողությունների արդյունքն է գիտական հայտնագործությունը,

որքա՜ն երկար են մտածում ու երևակայում մեր արվեստագետները,

որքա՜ն գեղեցիկ ու անկեղծ են մտածում մեր գրողներն ու բանաստեղծները, որոնց ստեղծագործությունները գերում են բոլորիս՝ անկախ տարիքից ու մասնագիտությունից:

Տեքստային աշխատանք

Ռուբեն Հովսեփյան

Մարիամ տատի գանձը

Մեր գյուղից ինձ հայտնեցին, որ մեռել է Մարիամ տատը: Մեռել է՝ օր առաջ կանխազգալով մահը: Երեկոյան լողացել է, հագել է հարս օրերի ճերմակ շապիկը, հրաժեշտ է տվել թոռներին, հարևաններին, ծոռներին ու անկողին է մտել՝ իբր քնելու, բայց մեռել է:

Նա գուցե հարյուր տարեկան էր, գուցե ավելին. ոչ ոք ստույգ չգիտեր նրա տարիքը: Չգիտեմ որ թվականից սկսած՝ նրա տարիքն այլևս չէր ավելանում, անցնող տարիներն իրար չէին գումարվում: Համենայն դեպս, ինձ համար Մարիամ տատը վերջին տարիներին նույն տարիքի էր, ինչ այն ժամանակ, երբ մենք՝ այսօրվա հասուն տղամարդիկս, գիժ ուլերի նման ոտնատակ էինք անում գյուղի բանջարանոցները, փայտե սրերով գլխատում էինք կաղամբները, նորատունկ անտառում խրախճանք էինք սարքում, և ամեն մեկս, մի-մի Դոն Կիխոտ դարձած, հարձակվում էինք նախկին սպանդանոցի կիսավերակ պատերի վրա:

Մենք վայրենի տղաներ էինք: Մեզ վռնդում էին բանջարանոցներից, բակերից, նորատունկ անտառից. խոսքները մեկ արած՝ բոլորն ուզում էին մեր միջից հանել խենթությունը, ուզում էին ընտելացնել, ինչպես երևի գիժ ուլերին են ընտելացնում:

Մեր միակ պաշտպանը Մարիամ տատն էր: Նա մեր խենթություններն ընդունում էր այնպես, ինչպես ծառերի ծաղկումն էր ընդունում, ամպերի գոռգոռոցը, առվի քչքչոցը, տաքուկ թխսկանի տակ դարսված հավկիթների ճաքճքոցը...

Նա այն բախտավոր մարդկանցից էր, ովքեր կենդանության օրոք արդեն քայլում են առասպելների ուղեկցությամբ:

Ասում էին, թե նա հմայքներով է զբաղված, կախարդ է:

Նա կարողանում էր բուժել օձի խայթոցը, զանազան հիվանդություններ, գիտեր, թե որտեղ է բուսնում այս կամ այն բանջարը, ծաղիկը, երբ է ձյուն գալու, երբ՝ անձրև, որ տարին է չորային լինելու, որ մարդն է չար, որը՝ բարի...

Նրա կովը ամենակաթնատուն էր թաղում, նրա հավերը ամենախոշոր ձվերն էին ածում, նրա այգում հասունանում էին ամենաքաղցր մրգերը:

Այդպես էր, բայց նա կախարդ չէր: Նա մեծ, իմաստուն կին էր: Նա կովի, հավերի, ծառերի հետ վարվում էր այնպես, ինչպես մեզ հետ էր վարվում:

Նա գիտեր բնությունը, գիտեր կյանքը:

Չգիտես ինչու, մենք հավատում էինք նրա շուրջ պտտվող միայն մի առասպելի: Մարիամ տատը նկուղում միշտ փակ էր պահում իր սնդուկը, որի մեջ, ըստ այդ առասպելի, անհամար գանձեր կային: Հավատում էինք երևի այն պատճառով, որ մեր ընկերը՝ Մարիամ տատի թոռը, նույնպես հավատում էր գանձի գոյությանը: Նա մեզ մանրամասն նկարագրել էր սնդուկի չափերը, գույնը, կողպեքի ձևն ու մեծությունը և խորհրդավոր բանալին, որ շղթայիկով խաչի նման միշտ կախված էր տատի վզից: Ու սնդուկը բորբոքում էր մեր երևակայությունը...

Թաղման հաջորդ օրը, երբ ես պատրաստվում էի քաղաք վերադառնալ, ընկերս՝ Մարիամ տատի թոռը, ինձ իրենց նկուղը տարավ:

- Հիշո՞ւմ ես, - ասաց,- գյուղում խոսում էին տատիս գանձերի մասին:

- Հիշում եմ, - ասացի:

Ընկերս ինձ ցույց տվեց առասպելական սնդուկը, տատի վզից հանած շղթայիկով բանալին, հսկայական կողպեքը:

Սնդուկի ներսում Մարիամ տատի շորերն էին և ընդամենը մի եռանկյունաձև ծրար՝ ռազմաճակատից չվերադարձած որդու վերջին նամակը, ծրարի մեջ՝ չորացած տերև:

Դա նամակ էլ չէր. հապճեպ գրված երկտող էր.

«Ների՛ր, մա՛յր, ծաղիկ չգտա: Հրաշքով փրկված մենավոր մի կեչի կա միայն, որի տերևն էլ ահա ուղարկում եմ քեզ»:

Ես և ընկերս ծրարի մեջ կրկին զգուշորեն փակեցինք Մարիամ տատի գանձը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Ի՞նչ խոհեր ունես այս պատմվածքը կարդալուց հետո. արտահայտվի՛ր բանավոր:

բ) Վերնագրի՛ր պատմվածքը հատվածաբար:

գ) Դո՛ւրս գրիր այն նախադասությունները, որոնք քո կարծիքով բանալի են այս պատմվածքի համար:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր շարադրություն՝ «*Բարին սկիզբ է առել իմ տատից*»:

Համո Սահյան

Ընկերներ

Ընկերներ ունեի ես,
Ընկերներ բակ ու թաղի,
Ընկերներ ամեն տեսակ
Խենթության, խիևդ ու խաղի...
Թաղի հետ քնում էինք,
Թաղի հետ զարթնում էինք,
Աղմուկով իրար գտնում
Եվ մի լուռ հառաչանքով
Իրարից զատվում էինք:
Մեզ համար քայլել չկար,
Երամով թռչում էինք,
Ի՞նչ խոսել, ի՞նչ շշնջալ,
Որոտում, ճչում էինք:
Եվ թեկուզ թաղը մեզնից
Օձիքը թափ էր տալիս,
Բայց էլի աչքի տակով
Նայում էր մեր խաղերին
Ու թաքուն ծափ էր տալիս:
Ինչ ասես՝ չէինք անում...
Քիվերին թառում էինք,
Նիզակով, պարսատիկով
Ծտերին վառում էինք:
Աքլորներ էինք լծում
Եվ ածուն վարում էինք...
Հավասար կիսում էինք
Բաղարջի պատառն անգամ,
Թե մի կերպ ճարում էինք:
Թե մեկի ոտքը ճամփին
Պատահմամբ փուշ էր մտնում,
Աշխարհը շուռ էր գալիս,
Բոլորիս գլխին մթնում:
Թե մեկիս տատը հանկարծ
Վտանգի հոտ էր առնում,
Ախ, նրա փեշը ծալ-ծալ
Բոլորիս համար բացվում,
Ճտերին պաշտպան կանգնած
Թխսամոր թև էր դառնում...
Ա՜խ ձեզ ո՞ւր փնտրեմ հիմա,
Ընկերնե՛ր բակ ու թաղի,
Ընկերնե՛ր խենթ ու խելոք,
Ընկերնե՛ր խիևդ ու խաղի...

Հարցեր և առաջադրանքներ

Ա

ա) Անգի՛ր արտասանիր տրված բանաստեղծությունը:

բ) Ի՞նչ ընդհանրություններ և ի՞նչ տարբերություններ նկատեցիր նախորդ և այս նյութերում:

գ) Ներկայացրո՛ւ արձակի և չափածոյի առանձնահատկությունները՝ ելնելով այս երկու ստեղծագործություններից:

Բ

ա) Տրված երկու տեքստերից դո՛ւրս գրիր նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի հինգական օրինակ և նշի՛ր դրանց ձևաբանական հատկանիշները:

բ) Դո՛ւրս գրիր տասը բառաձև և առանձնացրո՛ւ հիմքն ու վերջավորությունը:

գ) *«Մարիամ տատի գանձը»* պատմվածքից դո՛ւրս գրիր բառեր, որոնք, ըստ քեզ, պատմվածքին գեղարվեստական արժեք են տալիս:

Ստեղծագործական աշխատանք

Դու ևս փորձի՛ր գրել բանաստեղծություն կամ պատմվածք *ընկերության* մասին:

Խմբային աշխատանք

Դասարանում անցկացրե՛ք զրույց-բանավեճ՝ *«Ո՞վ է իսկական ընկերը»* թեմայով:

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հայերենն ունի տասը խոսքի մաս՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն:

Գոյական

Առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր գոյականի սահմանումը. բնութագրի՛ր անձ և իր ցույց տվող գոյականները, բե՛ր յուրաքանչյուրից տասական օրինակ:
2. Սահմանի՛ր հատուկ և հասարակ անունները. վերհիշի՛ր հատուկ անուններում մեծատառերի գրության կանոնները:
3. Բացատրի՛ր գոյականի կիրառությունները և թվի, առումի, հոլովի քերականական հատկանիշները:

Վարժություն

Գտի՛ր գոյականները, վերլուծի՛ր ձևաբանորեն:

Պաշտոնաթող մի գնդապետ Զանգեզուրի իր հայրենի գյուղում աղբյուր կառուցեց: Գյուղն աղբյուր չուներ, ջուրը ձորից էին բերում, երևի այդ ծարավն ապրել էր նրա մեջ և հանգիստ չէր տվել բոլոր տարիներին: Մոտ վեց ամիս նա մնաց գյուղում, աշխատեց մեն-մենակ և ամեն ինչ իր ձեռքով արեց, իր խնայած միջոցներով: Ուրախացան մարդիկ, բայց ճարվեց մեկը, որ քթի տակ փնթփնթաց. «Իր փառքի ու անունի համար արեց»:

Իսկապես, լավություն անելու համար էլ մարդ պիտի բախտ ունենա (Վ. Պ.):

Ածական

Առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր ածականի սահմանումը, բնութագրի՛ր որակական և հարաբերական ածականները:

2. Բացատրի՛ր որակական ածականի համեմատության աստիճանների (դրական, բաղդատական, գերադրական) կազմությունը:

3. «Մարիամ տատի գանձը» տեքստից բե՛ր օրինակներ, որոնցում ածականը գործածված լինի որպես գոյականական կամ բայական անդամի լրացում:

Վարժություն

Դո՛ւրս գրիր ածականները, վերլուծի՛ր ձևաբանորեն:

Բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ...Գոց են ապարանքի երկաթե դռները... Ապա բարձրանում է քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլները սրածայր նիզակներ, փետուրները՝ որպես պողպատե զրահ:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն... Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան...

Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը...

Դիլան դային առվակի կողմը նայեց, ժպտաց: Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում (Ակ.Բ.):

Թվական

Առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր թվականի սահմանումը. բնութագրի՛ր թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական:

2. Վերհիշի՛ր բաշխական և կոտորակային թվականների սահմանումն ու կազմության կանոնները:

3. Վերհիշի՛ր դասական թվականների սահմանումը և նրանց կազմության հետևյալ կանոնները:

Տասնավորներից և միավորներից կազմված բարդ թվականները (տասնմեկից մինչև իննսունինը) կցական բարդություններ են և գրվում են միասին: Հարյուրից բարձր բոլոր բարդ թվականները հարադրական բարդություններ են և գրվում են բաղադրիչների անջատ գրությամբ: Օրինակ՝ ութսունինը, հարյուր հինգ, երկու հարյուր քսանվեց, հինգ

հազար չորս հարյուր:

Դասական թվականները կազմվում են՝ **երկու, երեք, չորս** քանակականներին **-րորդ**, իսկ մյուս թվականներին **-երորդ** ածանցը ավելացնելով:

Օրինակ՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, հիսունութերորդ, հազարերորդ, երեք հարյուրերորդ, հազար ինը հարյուր քառասուներեքերորդ:

Դերանուն

Առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր դերանվան սահմանումը:

2.* Բացատրի՛ր գոյական, ածական, թվական անունների և սրանց համապատասխանող դերանունների իմաստային տարբերությունը:

3. Վերհիշի՛ր դերանվան տեսակները և նրանց սահմանումները:

Վարժություն

Արտագրի՛ր դերանունները և որոշի՛ր, թե ինչ խոսքի մասի նշանակությամբ և որպես նախադասության ինչ անդամ են գործածված:

Ամեն ինչ ստացվում էր անսպասելիորեն հաջող: Եթե այդ էր հատակը տախտակապատելու վարպետությունը, Ափրեն վարպետ էր ու կար: Ուրիշ բան է, որ կինը չէր համոզվում, պատեպատ էր ծեփվում, փշերը թափ տալիս գործով կլանված Ափրեի գլխին. ախր Ափրեն ո՞ր օրվա վարպետն է, որ թևերը քշտած մեջ է ընկել...

Ասացին, որ փողփուջ Մելոն մահացել է: Եվ ես որոշեցի գնալ կրճատ, այն ճամփով, որով երեք տարի դպրոց էի գնացել-եկել, չնայած գիտեի, որ կածանը արդեն չկա, արահետը փակվել է, ինչպես լեռներով ու դաշտերով ոլորվող առուն է լցվում հողով ու սեզով, երբ ակունքից կտրում են ջուրը: Կանգնած նայում էի այդ տարօրինակ ծերունուն և նրան շատ էի սիրում. հանդիպել էի ցեղակցիս գերեզմանի մոտ...

... Ես համոզված էի, որ նա Իսրոյին տեսել է, ճանաչում է. նրա մասին եղած բոլոր առասպելները գիտե. ինձ թվաց, որ այդ պահին խոյարածը Իսրոյի մասին է մտածում և մտաբերում է այն բոլոր պատմությունները, որ ես պետք է հիշեի: Գուցե նաև երգել է ուզում և նեղսրտել է, որ ես հայտնվեցի: Դրա համար էլ չի ուզում ինձ նկատել,- մտածեցի ես (Մ. Գ.):

Բայ

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր բայի և նրա անդեմ ու դիմավոր ձևերի սահմանումները: Բացատրի՛ր նրանց ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները:

2. Վերհիշի՛ր բայի սեռը. քանի՞ սեռ ունի բայը, բնութագրի՛ր դրանք համեմատության մեջ՝ բերելով համապատասխան օրինակներ:

3. Թվարկի՛ր բայի եղանակները, ժամանակներն ու ժամանակաձևերը՝ բերելով համապատասխան օրինակներ:

Վարժություններ

ա) Գտի՛ր բայի դիմավոր և անդեմ ձևերը: Որոշի՛ր դրանց խոնարհումը *(ե, ա),* կազմությունը (պարզ, ածանցավոր), ածանցավոր բայերի տեսակը:

Ցմեռնամուտ օրերից մեկն էր: Երկինքը պղտոր էր գարնան ջրի պես: Կատաղի քամին վժժալով ներս էր պրծնում փողոցի մի բերանից, թռցնում էր առաջին պատահած մարդու գլխարկը, լիզում էր գետնից աղբն ու փոշին, ծեծում էր դռներն ու պատուհանները, բարձրանում պատովն էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից: Լապտերավառը, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում էր լապտերները վառելու: Փողոցի անկյունում արդեն վառված հողմածեծ լապտերը ծռել էր գլուխը և նայում էր շուրջը կեղտոտ ապակիների միջից մարդու ցավագար, ճպռոտ աչքերի պես: Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ էր եկել մի փակ դռան առջև, սրթսրթում էր ամբողջ մարմնով ու կաղկանձում (Ն.-Դ.):

բ) Խոնարհի՛ր *սովորել, խաղալ, գտնել* բայերը:

գ) Խոնարհի՛ր *փախչել, մոտենալ, փոքրացնել* բայերը:

դ) Կազմի՛ր նախադասություններ՝ *հարգել, թելադրել, լցնել, մաքրել* բայերի հետ գործածելով հայցական հոլովով դրված լրացում:

ե) *«Մարիամ տատի գանձը»* պատմվածքից դո՛ւրս գրիր ներգործական և չեզոք սեռի բայերով արտահայտված հինգական նախադասություն. ներգործականները դարձրո՛ւ կրավորական:

Մակբայ

Առաջադրանքներ

1. Սահմանի՛ր մակբայ խոսքի մասը և բնութագրի՛ր նրա տեսակները:

2. Կազմի՛ր նախադասություններ՝ *ամենևին, գիտակցաբար, հավիտյան, մշտապես, փոքրիշատե* մակբայներն օգտագործելով բայերի հետ:

Վարժություններ

ա) Գտի՛ր մակբայները, որոշի՛ր դրանց տեսակը:

Թե մինչև հիմա որտեղ որ երգն էր,
Այնտեղ էլ նա էր,
Այսուհետ արդեն որտեղ որ նա էր,
Այնտեղ էր երգը...

*

Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց:

Քաջեր մի՛շտ էլ **կան,**
Չե՞նք է հարկավոր...
Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել նրանց...

*

Եվ մենք հիմա **մեզ** ինքներս
Պիտի բացենք հոժարակամ.
Բացենք շե՛ղտ-շե՛ղտ, փաթե՛թ-փաթե՛թ...

*

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր
Սիրում է կյանքում նա իր ... աթոռը:
Աթոռն է սիրում
Ու նրան տիրում.
Ցանկացած գնով ելնում է նա վեր,
Փորձում է թռչել նա առանց թևեր,
Անվերջ սողալով առաջ է գնում,
Գնում է այսպես և ... տարեցտարի
Ելնում է այսպես ... շալակն **աշխարհի** (Պ.Ս.):

բ) Վերլուծի՛ր վերևում ընդգծված բառերը ձևաբանորեն:

դ) Առանձնացրո՛ւ տրված մակբայները հոմանիշային խմբերով:

Ակամա, ակնկոր, ամենևին, ամոթահար, անդադար, անդուլ, անընդհատ, առմիշտ, արդ, այժմ, բնավ, բոլորովին, դանդաղ, դարձյալ, երբեմն, երբեք, ընդմիշտ, միալար, մերթընդմերթ, նախապես, ինքնաբերաբար, կանխավ, կամկար, կամաց, կրկին, հար, հապճեպ, հապշտապ, հավետ, հավիտյան, հավերժ, միշտ, մշտապես, ներկայումս, հիմա, շտապ, շարունակ, վաղորոք, վաղուց, վերստին, փութկոտ:

Ստեղծագործական աշխատանք

Հայ **արմատով կազմի՛ր հատուկ և հասարակ գոյականներ, նաև ածական, բայ, մակբայ և դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

Խմբային աշխատանք

Դասարանում բաժանվե՛ք խմբերի և միմյանց հետ մրցե՛ք բառերի ձևաբանական վերլուծությամբ. յուրաքանչյուր խումբ պետք է մյուս խմբերին հարցնի իր ընտրած բառերը և պատասխանի նրանց տված հարցերին:

Բառերի շտեմարան

Անուն խոսքի մասեր

Գոյական բառը առաջացել է ***գոլ*** *«լինել, գոյություն ունենալ»* բայի ***գոյ*** արմատից *«ինչ որ կա, գոյություն ունի»* արմատից **-ական** ածանցով:

Ածական բառը առաջացել է ***ածել*** բայի ***ած*** արմատից՝ *«ավելացվող, վրան դրվող»* նշանակությամբ և **-ական** ածանցով:

Թվական բառը կազվել է ***թիվ*** *«համար, համրանք»* արմատով և **- ական** ածանցով:

Դերանուն բառը կազմվել է **դեր** և **անուն** արմատներով և նշանակում է *«անվան դեր կատարող»:*

Բայ բառը առաջացել է ***բալ*** «ասել, խոսել» բայի ***բայ*** խոնարհված ձևից, որ նշանակում է «ասում է»:

Մակբայ բառը կազմված է ***բայ*** արմատից ***մակ*** *«վրա»* նախածանցով և նշանակում է «բայի վրա դրվող»:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր

Խոսքի մասերի մյուս խումբը արտահայտում է **վերաբերմունքային իմաստ,** այսինքն՝ այս բառերը սոսկ եղանակավորում են խոսքը, **դատողական** կամ **զգացական վերաբերմունք** են արտահայտում: Դրանք են վերաբերականներն ու ձայնարկությունները:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

Վերաբերականը որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ ***վերաբերմունքային իմաստ***
2. Չնաբանական առանձնահատկությունը՝ ***չթեքվող***
3. Տեսակները՝ ***հաստատական, երկբայական, ժխտական, սաստկական, սահմանափակման, գնահատողական***
4. Շարահյուսական դերը՝ ***նախադասության անդամ չի դառնում***

Ախր *ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,*
Ախր *ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:*
Ախր *ուրիշ տեղ հայրեններ չկան.*
Ախր *ուրիշ տեղ հորովել չկա.*
Ախր *ուրիշ տեղ սեփական մոխրում*
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր *ուրիշ տեղ*
Սեփական բախտից խռովել չկա...
Հ.Սահյան

Վերաբերական կոչվում են այն բառերը, որոնք արտահայտում են խոսողի իմացական կամ գնահատողական վերաբերմունքը և եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը կամ նրա որևէ անդամ:

Երբ ասում ենք՝ ***Երևի*** *նամակներ էր գրում արտասահման՝ իր ընկերներին,* կամ էլ՝ *Նա կգա,* ***անպատճառ*** *կգա,* մենք **երևի** բառով արտահայտում ենք եղելության վերաբերյալ մեր անհավաստի, ենթադրական, իսկ **անպատճառ** բառով՝ հավաստի, հաստատական վերաբերմունքը:

Երբ ասում ենք՝ *Պայթյունի ժամանակ հանքախորշում* ***բարեբախտաբար*** *մարդ չի եղել,* **բարեբախտաբար** բառով այդ եղելությունը, այսինքն՝ հանքախորշում պայթյունի ժամանակ մարդ չլինելը մենք գնահատում ենք որպես հաջողություն, բարեբախտություն:

Երևի, անպատճառ, բարեբախտաբար, ինչպես նաև վերևում տրված բանաստեղծական հատվածում **ախր** բառերը վերաբերականներ են:

Իմացի՛ր

1. Վերաբերականները սովորաբար եղանակավորում են ամբողջ նախադասությունը և կապվում են եղելություն արտահայտող հիմնական անդամի՝ ստորոգյալի հետ, ինչպես՝ **իհարկե գիտի, մի՞թե մոռացել է, երևի նա է, դժբախտաբար չի եկել, գոնե տեսած լինի, իսկապե՞ս քոնն է, իրոք մաշված է** և այլն:

2. Վերաբերականները կարող են դրվել նաև նախադասության այլ անդամների վրա:

Օրինակ՝

Նույնիսկ Վահեն այսօր լուծեց խնդիրը:

Վահեն **նույնիսկ այսօր** լուծեց խնդիրը:

Վահեն այսօր **նույնիսկ խնդիրը** լուծեց:

Տրված նախադասություններում խոսողը **նույնիսկ** բառով ընդգծում, սաստկացնում է նախադասության այս կամ այն անդամի իմաստը: Հետևաբար վերաբերականներ են նաև նախադասության տարբեր անդամների վրա դրվող այս կարգի՝ **անգամ, հենց, մանավանդ, գեթ, գոնե, թեկուզ** և այլ երանգական բառերը:

Առաջադրանքներ

ա) Տրված տեքստից առանձին սյունակներով դո՛ւրս գրիր մակբայներն ու վերաբերականները. փորձի՛ր բացատրել դրանց տարբերությունը:

բ) Տրված նախադասություններում առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք նախադասության մեջ կատարում են ընդամենը գնահատողական դեր:

Ամբողջ ձմեռը գրեթե **միշտ** մենակ նստում էր իր «օթախում», ծխում էր ու մեկիկ-մեկիկ մտաբերում էր կյանքի **անցած** օրերն ու հարազատներին:

Մահն էլ մոտ չէր գալիս, **հեռու** էր փախչում նրանից...

Թող Մանուշակը, տղաներն ու աղջիկները իր հետ **լինեին**, թող այդ չոր հացն էլ չունենար, գարի ու կորեկ **ուտելով** էլ բախտավոր կլիներ, գոհությու՜ն աստծու:

Նա գոհ էր միայն, որ Մովսեսն ու իր **ընտանիքն** այդ վեճ ու կռվին չէին խառնվում:

-Երնե՜կ ամեն մարդ **էդպես** ապրեր ու էդպես մեռներ,- ասաց հարյուրամյա քավոր Մովսեսը դողդոջուն, **ծերունական** ձայնով:

-Երնե՜կ քրզի, **երանելի** Նահապետ,- ավելացրեց խնուսցի Ավոն (Հ.Ք.):

գ) Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց խոսքիմասային պատկանելությունը և ձևաբանական հատկանիշները:

1. Վերաբերականների տեսակները

Ըստ իրենց արտահայտած վերաբերմունքային կամ երանգային իմաստի՝ վերաբերականները բաժանվում են հետևյալ տեսակների՝

հաստատական, **գնահատողական,**
ժխտական, **սաստկական,**
երկբայական, **սահմանափակման:**

Ա. Հաստատական վերաբերականներ: Արտահայտում են խոսողի հաստատական վերաբերմունքը գործողության կամ եղելության վերաբերմամբ:

Օրինակ՝

Ի՞նչ եք ասում, պարո՞ն, **իհարկե,** իմ թոռն է:

Եղբայրս, **արդարև,** դուրս է եկել Թբիլիսիից ճիշտ ժամը 2-ին:

Այս նախադասություններում **իհարկե, արդարև** վերաբերականները առավել հավաստի ու հաստատական են դարձնում արտահայտված եղելությունը:

Հաստատական վերաբերականներ են՝ **այո՛, արդարև, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, անպայման, իրավ, իրավ որ, իրավամբ, իրոք, իրոք որ, իսկապես, իսկապես որ, իհարկե, ինչպես չէ, ինչ խոսք, հավաստյավ, հարկավ, հիրավի, իսկ և իսկ//իսկևիսկ:**

Հաստատական երանգ են արտահայտում նաև որոշ կապակցություններ, ինչպես՝ **առանց այլևայլության, ինչ էլ լինի, ինչ գնով էլ լինի և այլն:**

Բ. Ժխտական վերաբերականներ:

Ոչ պատասխանական բառը և ***չէ*** ժխտական բայը, գործածվելով ժխտական նախադասության հետ, շեշտում են նրա ժխտումը և դառնում են ժխտական վերաբերականներ:

Օրինակ՝

Ո՞չ, ճակատագրից չպետք է դժգոհել:

Չէ՞, հարգելի՛ս, ես պարտք չունեմ. պարտք որ ունենում եմ, գիշերը քունս չի տանում:

Իմացի՛ր

Այո, ոչ պատասխանական բառերը որպես հարցական նախադասության պատասխան առանձին գործածվելիս փոխարինում են ամբողջ նախադասությանը և, դառնալով պատասխանական բառ-նախադասություն, որևէ խոսքի մասի հետ չեն նույնացվում:

Իմացի՛ր

Բնավ, ամենևին բառերը, մակբայական կիրառությունից բացի, ուղղակի խոսքում որպես պատասխան բառ գործածվելիս առավել հարում են ժխտական վերաբերականներին, ինչպես՝

- Դու իմ խոսքերը երևի չես մոռանա:
- **Բնավ**:
- Համաձա՞յն ես ինձ հետ:
- **Ամենևին**:

Առաջադրանք

Կազմի՛ր կապակցված խոսք՝ գործածելով հաստատական և ժխտական վերաբերականները:

Գ. Երկբայական վերաբերականներ: Արտահայտում են խոսողի երկբայական, այսինքն՝ հավանական կամ թվացող, անհավանական, հարցական վերաբերմունքը գործողության կամ եղելության վերաբերմամբ:

Օրինակ՝

Այդ կողմերում Արաքսի խաղաղ և լուռ ընթացքը այնպիսի տպավորություն էր թողնում, որ **կարծես թե** ջուրը կանգնած լիներ:

Ես երեսս շրջեցի, **իբրև թե** սարերին եմ նայում:

Մի՞թե չես տեսնում, որ ես հոգնել եմ, որ աչքերս փակվում են, սիրելի՜ս:

Երկբայական վերաբերականներ են՝ **արդյոք, ասես, ասես թե, գուցե, միգուցե, դիցուք, դիցուք թե, երևի, թերևս, կարծեմ, կարծես, կարծես թե, իբր, իբր թե, իբրև թե, մի՞թե, չլինի՞ թե, չլինի՞, հո, խոմ, խո**[1]:

Դ. Գնահատողական վերաբերականներ: Արտահայտում են խոսողի խրախուսական, հավանության, զղջման կամ կարեկցական վերաբերմունքը գործողության կամ եղելության վերաբերմամբ:

Օրինակ՝

Բարեբախտաբար, տանը ոչ ոք չկար:

- Դժբախտաբար այդպես է, սիրելի՜ ընկերուհի, - ասաց դայակը խոր հառաչանքով:

Գնահատողական վերաբերականներն են՝ **բարեբախտաբար, դժբախտաբար, ցավոք, տարաբախտաբար, ախր/ախար, չէ՞ որ**:

Առաջադրանք

Կազմի՛ր կապակցված խոսք՝ գործածելով վերը թվարկած վերաբերականները:

---

[1] Այս վերջին երկու՝ *խոմ, խո* վերաբերականները առավել բնորոշ են առօրյա-խոսակցական ոճին:

Ե. Սաստկական վերաբերականներ: Դրվելով նախադասության այս կամ այն անդամի վրա՝ սաստկական վերաբերականները շեշտում, սաստկական երանգ են հաղորդում նրան:

Օրինակ՝

Ես **հենց** նրա մասին եմ խոսում, հայրի՞կ:

Օ՛, նա այժմ ավելի անզոր է, քան հովտի եղեգը, որին տատանում է **նույնիսկ** հովի շունչը:

Սաստկական վերաբերականներ են՝ **անգամ, էլ, ևեթ, հենց, իսկ, մանավանդ, նամանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նույնիսկ:**

Սաստկական վերաբերական կարելի է համարել **ահա, ահավասիկ, այ** ցուցական բառերը, որոնք, վերաբերելով նախադասության որևէ անդամի, մատնացույց են անում և շեշտում նրա առկա լինելը:

Օրինակ՝

Ահա ձեր առջև կանգնած է մի ոչնչություն, որ առաջ մարդ էր, ապրում էր...

Դու, **ահավասիկ,** պետք է իմ կողքին լինես և օգնության ձեռք մեկնես:

Առաջադրանք

Ընտրի՛ր հինգ սաստկական վերաբերական և դրանցով կազմի՛ր նախադասություններ:

Զ. Սահմանափակման վերաբերականներ: Դրվելով նախադասության այս կամ այն անդամի վրա՝ սահմանափակման վերաբերականները իմաստային սահմանափակման երանգ են հաղորդում դրանց:

Օրինակ՝

Ցնծում է անտառն, ու **միայն** վայրի
Կաղնին է կանգնել խոհուն ու տխուր (Վ. Դ.):

Գեթ հայրը մնար...
Բայց հայրն էլ գնաց,
Երբ որդին չկար տասը տարեկան (Պ. Ս.):

Սահմանափակման վերաբերականներն են՝ **գեթ, գոնե, թեկուզ, լոկ, միայն, միայն թե, միմիայն, սոսկ:**

Առաջադրանք

Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր նախադասություններ տարբեր վերաբերականներով և որոշի՛ր դրանց տեսակը:

Իմացի՛ր

1. Սահմանափակման, ընդգծման, առանձնացման վերաբերական նշանակությամբ գործածվում են **առանձնապես, առավելապես, գերազանցապես, գլխավորապես, հատկապես, մասնավորապես, պարզապես** և այլ մակբայներ, երբ դրվում են ոչ թե բայով, այլ ուրիշ խոսքի մասով արտահայտված անդամի վրա:

Օրինակ՝

Նա գնահատում էր **առավելապես Վահեին:**

Ինչո՞ւ ես ուզում **հատկապես ութ** ստանալ:

2. Գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ խոսողի ցանկության, կամային, վերաբերմունքային նշանակությամբ գործածվում են **թող, մի, երանի, երանի թե, երնեկ, երնեկ թե, ապա, հապա, դե** բառերը:

Օրինակ.

Ապա ասա՛, թե ով քեզ դրդեց կռվի մեջ մտնելու:

Դե պատմի՛ր, **դե** մի՛ դանդաղիր. ի՞նչ եղավ վերջում:

Նկատի ունեցի՛ր, որ **դե**-ն կարող է նախադասության մեջ նաև իբրև ձայնարկություն հանդես գալ: Սակայն այդ դեպքում այն պարտադիր պետք է նախադասությունից տրոհվի և իր վրա կրի շեշտ, ինչպես՝

-Դե՛, սիրո՛ւն բալիկներ, փորձե՛ք պատասխանել իմ հարցերին:

3. Չիջական, անջատական, մեկնական վերաբերմունքային նշանակությամբ գործածվում են **ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս//համենայնդեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, ի դեպ, ի միջի այլոց//իմիջիայլոց, ընդհակառակն//ընդհակառակը, արդ, այսպիսով, մի խոսքով** և այլ շաղկապական ու կապակցական բառերը:

Օրինակ՝

Դու, **ինչևէ,** նրան ներեցիր:

Արմենը, **այնուամենայնիվ,** երկար մտածեց իր հետագա անելիքների շուրջ:

4. Վերաբերականների նշանակությամբ գործածվում են նաև **ինչ էլ լինի, ինչպես չէ, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, կարող է պատահել որ, ինչպես երևում է, ճիշտ է, ուր է թե** և այլ բայական կապակցություններ:

Օրինակ՝

Մենք, **ինչ էլ լինի**, նրան մենակ չենք թողնի:

Ինչպես երևում է, դու ինձ ճիշտ չհասկացար:

Բառերի շտեմարան

Վերաբերականի նշանակությամբ գործածվում են՝

✓ **կեցցե՛ս -** խրախուսական կանչ՝ *ապրես*-ի նշանակությամբ.

Դու **կեցցես** այդ գործը գլուխ բերելու համար:

✓ **երանի, երնեկ, ուր է թե, -** մեկին բարեբախտ ու երջանիկ համարելու, նաև ցանկության, երազանքի արտահայտություններ,

✓ **ափսոս-** արտահայտում է վիշտ, խղճահարություն՝ *ավա՜ղ, ցավալի է* նշանակությամբ:

Օրինակ՝

Ափսո՜ւ, Անո՜ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ւ իգիթ քու յարին,
Ափսո՜ւ բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ւ էդ ծով աչքերին...

Իբրև գոյական նշանակում է *ափսոսանք.*

Օրինակ՝

Համոզված եմ, որ **ափսոսդ** գալու է, և դու քեզ չես ներելու:

Իբրև ածական նշանակում է *խնայելու, ափսոսանքի արժանի.*

Օրինակ՝

Հայրս տեսավ, մտերմորեն նախատեց.
«Հացն **ափսոս** է, չեն տրորի ու անցնի»:

Վարժություններ և առաջադրանքներ

ա) Գտի՛ր վերաբերականները, որոշի՛ր դրանց տեսակը:

Մարդկային հնարագիտությունը, ինչպես երևում է, սահման չունի: Գոնե այն, ինչ պատահեց վաճառական **Վանոյին**, բոլորովին նոր էր և անսպասելի: Իսկ այդ վաճառական Վանոն, անշուշտ, հասարակ մեկը չէր **քաղաքում**. մոտավորապես **հիսունի** մոտ մարդ էր՝ տակավին բաեկազմ, տեսքով անկասկած առողջ, խոսքով ազդեցիկ, այսինքն՝ հեղինակություն էր իր ասպարեզում: Սակայն քաղաքում նա սոսկ այդ **բարեմասնություններով** ու իր խանութով հայտնի չէր, այլ հայտնի էր նաև որպես լավ քեֆ անող... Ու, պետք է արդար լինել, կերուխումի այդ հանդեսներին նա ցուցաբերում էր իր բազմակողմանի **շնորհները**. դե ասում էր սրամիտ կենացներ, երգում էր, պարում...

Այո՛, նա ուրախ քեֆերի սիրահար էր, և ինքն էլ, իհարկե, լավ քեֆ անող. այդ էր պատճառը, որ հաճախ էին նրան հրավիրում ընկերական **խնջույքների**, և նա, անտարակույս, միշտ շուք էր տալիս **սեղաններին** իր ուրախությամբ:

Նա գնում էր գրեթե **ամենքի** տունը, բայց ինքը, ինչ էլ լիներ, երբեք հրավերք կամ կերուխում չէր կազմակերպում իր հարկի տակ, և այդ հայտնի էր **բոլորին**:

«Եկե՛ք բոլորս գոնե մի օր հավաքվենք, գնանք, դրա տոնը **շնորհավորենք**,- կատակում էին երբեմն երիտասարդ **վաճառականները**,- տեսնենք՝ ինչ կանի»:

Ասում-ծրագրում էին, բայց ոչինչ չէին ձեռնարկում՝ չգիտես անհարմար զգալով, թե...

Բայց ահա մի անգամ էլ, այսուհանդերձ, որոշեցին (Ստ. Զորյան):

բ) Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հիմքն ու վերջավորությունը:

գ) Կազմի՛ր նախադասություններ *կեցցե՛ս, ողջո՛ւյն, ափսո՛ս, երանի՜* վերաբերականներով կամ դո՛ւրս գրիր դրանց գործածությունները գեղարվեստական գրականությունից:

դ)* Վարժություն Ստորև տրված նախադասություններից դո՛ւրս գրիր ընդգծված բառերը, որոշի՛ր դրանց ինչ խոսքի մաս լինելը, բացատրի՛ր դրանց ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:

Թե որ պատասխանը ճիշտ **ասես**, խնդրանքդ կկատարեմ:

Աստղերն էլ հո ցոլցլում էին երկնքում, **ասես** լցվում էին ներքև թափվելու սաստիկ տենչով (Հ. Թ.):

Եթե ամեն սև բան արջ **կարծես**, էլ սի՞րտ կդիմանա:

Գնում էր և օրորվում ու **կարծես** հիմա պիտի ընկներ (Ա. Բ.):

Տվե՛ք ինձ երեխաներին, կտամ ձեզ **անպայման** ազատություն (Շիրվ.):

Դու **անպայման** բարի ես. այդ երևում է քո ազնիվ դեմքից (Ս. Զ.):

Ոչինչ թե **միայն** է նրա փարախը:

Սաքոյի համար ի՞նչ բան է վախը (Հ. Թ.):

Վանդունց Բաղին **միայն** որդու մասին էր մտածում (Ա. Բ.):

Մայրերը որդիներ են ծնել **ցավոք** ու հեծությամբ (Մուր.):

Մեր մի մասը, **ցավոք**, պիտի ոչնչանա այնտեղ, որ մեր աշխարհը փրկի (Դ. Դ.):

Ես նրան տեսնում էի վերջին **անգամ**:

Դահճին **անգամ** դուք կդյութեք (Վ. Տ.):

Ամպերն են թռչում կապույտ երկնքով, **իսկ** շուրջը դաշտերն անծիր ու անծիր (Ավ. Իս.):

Ապստամբության առաջին **իսկ** նշանին կոչնչացնես պարսից զորագունդը (Դ. Դ.):

Իբր մուրացկան նա նույն բարի և առաքինի մարդը երևաց (Ռաֆ.):

Իբր Նռան ձորում կայծակ է խփել ծառերին (Ա. Բ.):

Տեսե՞լ ես արդյոք այն այգիները, ուր **իբրև** գոհար խաղողն է հասնում (Հ. Թ.):

Պառկած է **իբրև** Թաթուլ իշխանը

Նազելի կնոջ գլուխն իր կրծքին (Հ. Թ.):

ե) Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով ***անպատճառ, իրոք, գուցե, համարյա, մի՞թե, դժբախտաբար, բարեբախտաբար*** վերաբերականները:

զ) Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով ***անգամ, հենց, մանավանդ, գոնե, միայն, թեկուզ, սոսկ*** վերաբերականները:

Իմացի՛ր

Իրենց հիմքում ունենալով խոսքի հանդեպ դատողական վերաբերմունք, վերաբերականները բնորոշ են առօրյա-խոսակցական, հրապարակախոսական, գիտական, գեղարվեստական ոճերին: Թերևս միակ բացառությունը

պաշտոնական ոճն է. այստեղ վերաբերականների գործածությունը խիստ սահմանափակ է:

Տեքստային աշխատանք

Գտի՛ր վերաբերականները և ցո՛ւյց տուր, թե յուրաքանչյուրը ո՛ր ոճում է գործածված:

*Հնդկաստանում և Նեպալում կատարված անտառահատումներն էին հավանաբար վերջերս Հնդկաստանում և Բանգլադեշում տեղի ունեցած աղետալի ջրհեղեղների պատճառը: Միայն Հնդկաստանում ջրհեղեղի պատճառած վնասները հսկայական չափերի էին հասնում...

Դժբախտաբար, արևադարձային խոնավ անտառների բնահողերը, որպես կանոն, շատ աղքատ են...Այսուհանդերձ անտառը բուռն կերպով աճում է նույնիսկ այդքան անբարենպաստ պայմաններում:

*Ցավոք, թանգարանի համար մեր արքայատոհմերին առնչվող իրեղեն ապացույցներից մասունքներ չեն պահպանվել, իսկ արհեստականորեն չենք ստեղծելու: Բայց գոնե պետք է ունենանք այն, ինչ որ ունենք, այսինքն՝ պետք է կարողանանք լավ մատուցել եղածը...

Բնականաբար, այս տարիների ընթացքում շատ արժեքներ վերահիմաստավորվել են, ավելի հստակեցվել... Իհարկե, կյանքը շատ ավելի բարդացավ, որոշումներ կայացնելն ավելի դժվարացավ...Ճիշտ է, այստեղ հիմնականում կոլեգիալ որոշումներ են ընդունվում՝ ի դեմս Հանրապետության նախագահի, ինչու չէ, նաև կուսակցության...

*Իմ հետաքրքրությունը բոլորովին գրգռվեց: Ո՞վ էր, վերջապես, այդ մանուկը, որ այդքան գրավել էր հարևաններիս համակրանքը:

-Եթե կամենում եք, իսկույն կծանոթանանք,- ասաց Լուիզան...Վատ չի լինի, եթե խմբովին գնանք մեր արտիստի հիվանդ մորը տեսնելու: Այո՛, վատ չի լինի...Ես գնում եմ. ով ուզում է, թող հետևի ինձ:

...Բոլորս հետևեցինք նրան, նույնիսկ հաստամարմին Լուկրեցիա Կաֆարելլին (Շ.):

*Երանի՜ այն օրը, որ տեսա ես քեզ,
Երանի՜ այն օրը, որ տեսար դու ինձ.
Հանդիպեց հայացքս աչքերիդ լույսին,
Ու փարվեց իմ սիրտը քո սրտին:
Երանի՜ աշունը ուշանար մի քիչ,
Երանի՜ գարունը չլքեր ինձ...

Ստեղծագործական աշխատանք

Կազմի՛ր տեքստ քո ցանկացած ոճում՝ գործածելով վերաբերականներ:

2. Վերաբերականների կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը

Վերաբերականները ըստ կազմության լինում են **պարզ, բարդ** և **ածանցավոր**:

Պարզ վերաբերականներ են՝ **ահա, անգամ, գեթ, գոնե, իբր, իսկ, թող, լոկ, խո, խոմ, հենց, հո, մանավանդ, ոչ** և այլն:

Բարդ վերաբերականներ են՝ **իբր թե, իբրև, իրավ որ, իրոք որ, թերևս, թեկուզ, կարծես թե, միգուցե, մի՞թե, մինչև անգամ, մինչև իսկ, նույնիսկ** և այլն:

Ածանցավոր և բարդածանցավոր վերաբերականներ են՝ **անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, բարեբախտաբար, դխբախտաբար, տարաբախտաբար, իսկապես, միայն** և այլն

Բարդ վերաբերականները գրվում են կա՛մ միացած, կա՛մ անջատ բաղադրիչներով:

1. Միացած բաղադրիչներով գրվում են՝ **ահավասիկ, թեկուզ, թերևս, իբրև, իհարկե, միգուցե, միթե, նամանավանդ, նույնիսկ** և այլն:

2. Անջատ կամ հարադրությամբ գրվում են ***թե*** և ***որ*** շաղկապներով, ինչպես նաև մի քանի այլ բաղադրիչներով հարադրված հետևյալ վերաբերականները՝ **ասես թե, դժվար թե, իբր թե, իբրև թե, կարծես թե, հազիվ թե, չլինի թե, իսկապես որ, իրավ որ, իրոք որ, իսկ և իսկ, ըստ երևույթին, մինչև անգամ, մինչև իսկ** և այլն:

Իմացի՛ր

Վերաբերականների մի զգալի մասը ծագումով բայի դիմավոր և գոյականի հոլովված ձևեր են: Դառնալով վերաբերական՝ դրանք կորցրել են իրեն նախկին բառային ու քերականական իմաստները, հետևաբար այլևս բառակազմական կամ ձևաբանական վերլուծության չեն ենթարկվում: Այդ վերաբերականները ճանաչվում են որպես պարզ բառեր: Դրանք են՝ **գուցե, երևի, իհարկե, համարյա, ասես, կարծես, կարծեմ, արդարև, իրավ, իրավամբ, հավաստյավ, հարկավ, հիրավի, իրոք, ցավոք, արդյոք** և այլն:

Հիշի՛ր

Վերաբերականների գործածության հետ կապված հետևյալ կետադրական կանոնները:

1. Ամբողջ նախադասությունը կամ եղելությունը եղանակավորող վերաբերականներն առանձին հնչերանգով անջատվում են նախադասության անդամներից: Գրավոր խոսքում այդ անջատումը կատարվում է ստորակետերով:

Օրինակ՝

Իրոք, նրան չէր հաջողվել որևէ աշխատանք գտնել:

Բժիշկ Հովակիմյանը, **անշուշտ,** ոսկի ձեռքեր ունի:

2. Խոսողի հարցական վերաբերմունքն արտահայտող երկբայական վերաբերականների վրա դրվում է հարցական նշան:

Օրինակ՝

Եվ, **արդարև, մի՞թե** ծայրեծայր անամոթ ծաղր չէ ամբողջ կտակը (Շ.):

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ (Ե.Չ.):

Երբ հարցումը կոնկրետանում է նախադասության որևէ անդամի վերաբերյալ, վերաբերականները հարցական նշան չեն ստանում:

Օրինակ՝

Միգում շողաց մի ցուրտ լույս.

-Օ, **արդյոք** կա՞ վերադարձ (Վ. Տ.):

3. **Այո, ոչ** պատասխանական բառերն ու **չէ** բայաձևը, որպես վերաբերական գործածվելիս շեշտվում են:

Օրինակ՝

Այո՜, Լուսինե Զաքարյանը իշխում էր բեմում:

Ո՜չ, ես չէի կարող ծիծաղել:

Չէ՜, դա նրա գործը չէ:

Վարժություններ

ա) Գտի՛ր վերաբերականները, բացատրի՛ր դրանց կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը:

Հրավիրեցի նրան ինձ մոտ, խոսեցրի, քննեցի և տեսա, որ իսկ և իսկ մեզ համար **չափած** ու **ձևած** է:

- Եվ իրավ, ի՞նչ եք **կանգնել**, - գոչեց Մարզպետունին և սուրը քաշելով դիմեց **առաջացող** պահակին:

Այդ դեպքում, հարկավ, կդժբախտանար իմ դուստրը, եթե նա սիրելիս լիներ արքայորդուն:

Շատ **մտածելուց** ու **մտատանջվելուց** հետո վերջապես որոշեցի, ինչ կերպ ուզում է լինի, իմանալ իշխանից այդ գաղտնիքը:

Ծերունին նայեց ինձ վրա քննական հայացքով՝ կարծես **ստուգելու**, թե արդյոք յուր սիրտը **ցավեցնելու** համա՞ր ասացի այս խոսքերը:

- Արքայորդին չի կարող **ամուսնանալ**..., - ասաց իշխանը՝ գրեթե շշնջալով:

Բացի այդ, նա որոշեց մինչև անգամ **խորհուրդ տալ** Մարզպետունուն **օգուտ քաղել** ժողովրդի այդ օգնությունից:

- Այդ գաղտնիքը ես չեմ հայտնել նույնիսկ իմ ամուսնուն՝ Գոհար իշխանուհուն, - ասաց Մարզպետունին:

Կանայք պինդ պահում են միմիայն իրենց սիրային գաղտնիքները, իսկ մնացյալի համար նրանց բերանը դուռ չունի:

- Հապա, ուրիշ ի՞նչ ես արել:

- Դժբախտաբար ես խոստումնազանց եղա. Մարզպետունի իշխանին **տվածս** խոսքը չպահեցի (Մ):

բ) Արտագրի՛ր ընդգծված բառերը և վերլուծի՛ր ձևաբանորեն:

գ) *Հետևյալ նախադասություններում որոշի՛ր *թող, մի, ասենք, ասա, կարծես* բառերի գործածությունները իբրև վերաբերական. նույն բառերի մյուս գործածությունները վերլուծի՛ր ձևաբանորեն:

Մի գնայիր, տեսնեիր թե ինչպես **են ապրում,** ինչ են անում:
Մի հարցնող լինի՝ նա ինչու է եկել:
***
Ինձ **են նայում** մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:
***
Իմ սո՜ւր, արթուն ականջում
Մի խոր ձեն է միշտ հընչում...
***
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր...
***
«Իմ հայրենիքը **տեսե՞լ ես**, ասա՛...» (Հ. Թ.):

Թող **կիտվ**ի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա, թե կա, ավելի չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:
***
Եվ այնպես հեզ եք ու այնպես քույր,
Կարծես հեռվից եք հետրս խոսում (Վ. Տ.):

Թե **կսիրես**, թո՛ղ ինձ հիմա ու **գնա՛**
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կը բախեմ (Ավ. Իս.):

-Թո՛ղ դրան, նա քեզ ոչինչ **չի խոստովանի**, - համոզում էր հայրս:
Եկե՛ք միասին **ասենք**՝ շնորհակալություն:

Ուրեմն ասա ես իզուր նրան այդքան երկար **համոզեցի**:

Թող ոչ մի զոհ **չպահանջվի** ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան (Ե. Չ.):

դ) Արտագրի՛ր ընդգծված բայաձևերը և վերլուծի՛ր ձևաբանորեն:

Կրկնողական

Հարցեր և առաջադրանքներ

ա) Ի՞նչ են ցույց տալիս վերաբերականները:

բ) Գծապատկերում տրված յուրաքանչյուր տեսակից բե՛ր երեքական օրինակ և կազմի՛ր նախադասություններ:

գ) Բառարանի օգնությամբ սովորի՛ր *դարավանդ, երախայրիք, երան, զարմ* բառերի իմաստները և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:



Վարժություններ

ա) Գտի՛ր վերաբերականները, որոշի՛ր տեսակները:

Գուցե նրա **հերթն** է գալիս
Զգալու, որ կյանքը, ավա՛ղ,
Հաճախ նաև ...վիշտ **է տալիս**:

Դու **չես հասկանում**.
Ախր իմ ձեռքից **ոչինչ** չի գալիս.
Ես **այսքան** տարի լոկ քե՞զ եմ երգել,
Քե՞զ եմ աղոթել միայն, սիրելի՞ս (Գ. Է.)

Ամենատխուր,
Ամենամաքուր
Ու վսեմ
Երգը
Երևի երգն է **մեռնող** կարապի...
Իսկ կակաչները,
Որ **խենթանում են** երաշտից առաջ,
Երևի հողի ալ հառաչներն են (Վ. Դ.):

Ցնդում է, այո՛, **ամեն** բան հավետ,
Մեռնում են նույնիսկ աստղերն անհունի,

Բայց երգը, երգը, ո՛վ անմահ վարպետ,
Գուցե երգն է լոկ, որ վախճան չունի (Վ. Ս.):

Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերի հուրն անշեջ...
-Ո՛չ, դստրի՛կ իմ, կգան անշուշտ
Ու կբերեն էս տարի... (Հ. Թ.)

բ) Կատարի՛ր ընդգծված բառերի ձևաբանական վերլուծություն:

գ) Կետերի փոխարեն դի՛ր տրված վերաբերականներից որևէ մեկը. ***էլ, ավաղ, համարյա, անշուշտ, չլինի՞ թե, իրոք որ, ահա, ոչ, այո, միգուցե, բարեբախտաբար, անպատճառ, միայն:***

Բարդու շիվը ... բողբոջել ու թրթռում էր քամուց: Մի օր էլ տեսավ, որ ... ելք չունի բարձրանալու. կողքի մացառները խանգարում են:

Նա ... երազում էր սլացիկ ծառ դառնալ, ամուր կանգնել մայր հողին, ..., արև ու գարուն երգել: ..., մացառները պատնեշել էին իրեն: Ի՞նչ անել: ... պիտի խոնարհվի մացառներին, ..., դա ստորացուցիչ է: Մնում էր ... շեղվել ընթացքից, ծուռումուռ գնալ. այդպիսի հատկություն բարդին չունի: Հարկավոր է ... ըմբոստանալ, ճգվել դեպի վեր. սա է ... փրկության ելքը:

Բայց ... նրան մոտեցավ ծեր այգեպանը: Գորովանքով նայեց բողբոջներին ու շշնջաց.

- ... հրաշալի ծառ կդառնա այս դալար շիվը:

Եվ ... այգեպանը արմատախիլ արեց նրան խանգարող մացառները, շիվի շուրջը փխրեցրեց հողը, ջրեց (ըստ Ա. Սևոյանի):

Անակնկալ հարց.

Ինչպե՞ս կբացատրես *կարապի երգ* արտահայտությունը:

Ստեղծագործական աշխատանք

ա) Գրի՛ր շարադրություն *«Եթե ես աղավնի (սարդ, գայլ, թիթեռ) լինեի...»* վերնագրով:

բ) Թռչունների անուններով ի՞նչ դարձվածներ գիտես, թվարկի՛ր՝ օգտվելով դարձվածաբանական բառարանից և դրանցով կազմի՛ր նախադասություններ:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ձայնարկությունը որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ *վերաբերմունքային իմաստ*
2. Ձևաբանական առանձնահատկությունը՝ *չթեքվող*
3. Տեսակները՝ *զգացական, կոչական, նմանաձայնական*
4. Շարահյուսական դերը՝ *նախադասության անդամ չի դառնում*

Հե՜յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր,
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գընացին, ճամփաներ (Հ.Թ.)

Երբ երեխաները մեծերին չեն լսում և անկարգություն անելիս վայր են ընկնում, մեծերը հաճախ զայրացած ասում են՝ ***լա՛վ եղավ:*** Բայց երբեմն էլ այդ զայրույթն արտահայտում են՝ ***օխ, ուխա՛յ*** անմիջական բացականչություններով:

Հիվանդը հաճախ չի հասցնում իր ցավոտ կամ բորբոքված տեղը շոշափող բժշկին ասել՝ ***ցավում է***, և բացականչում է ***օ՞ֆ*** կամ ***վա՛յ:***

Մեկին դիմելու, կանչելու, մեկին, մի բանի մեր կամքը թելադրելու համար ***Զավե՜ն, Արշա՜կ, հեռացի՜ր, փախե՜ք*** ասելու փոխարեն հաճախ բացականչում ենք՝ ***է՛յ, հե՛յ, քշա՜, փի՜շտ*** և այլն:

Օ՞խ, ուխա՛յ, օ՞ֆ, վա՛յ, է՛յ, հե՛յ, քշա՜, փի՜շտ բառերը ձայնարկություններ են:

Ձայնարկություններ են նաև կենդանիների, բնության երևույթների ու այլ ձայների նմանությամբ ստեղծվող նմանաձայնությունները:

Օրինակ՝ **բը՛զզ, հա՜ֆ-հա՜ֆ, զրը՛նգ, ճը՛ռռ** և այլն:

Զգացմունք, հուզմունք, կոչ և նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են ձայնարկություն:

Ձայնարկությունները զգացմունք, հուզմունք, կոչ արտահայտող մյուս բառերից տարբերվում են այն բանով, որ սրանք, բացի մեր զգացական, կամային անմիջական վերաբերմունքից, որևէ այլ իմաստ չեն արտահայտում:

1. Ձայնարկությունների տեսակները

Ձայնարկությունները լինում են երեք տեսակ՝ **զգացական, կոչական** և **նմանաձայնական:**

1. Զգացական ձայնարկություններն են՝ **ախ, բա՛, ի՜ֆ, ըհը՛, պահ, ջա՛ն, վախ, վահ, վա՛, վա՛շ, վո՜ւշ, վո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւխ, ուխա՛յ, առա՛, ո՛ւֆ, փահ, օ՛, օ՛յ, օխա՛յ, օ՜հ, օհո՛, ֆո՛ւ, ֆո՛ւհ և այլն:**

Զգացական ձայնարկություններն արտահայտում են՝

ա) **ափսոսանք, վիշտ, կարեկցանք:**

Օրինակ՝

- **Վախ-վախ,** իմ անմեղ ոչխար, - մղկտաց Հասոն (Վ. Փ.):

Վա՛յ, Ծիրան ջան... - դուրս թռավ սրտիցս (Հ. Թ.):

Վո՛ւշ-վո՛ւշ, Անուշ, **վո՛ւշ-վո՛ւշ**, քույրիկ,

Վո՛ւշ քու սերին, քու յարին... (Հ. Թ.):

բ) **Ուրախություն, հիացմունք, բավականություն:**

Օրինակ՝

Է՛յ, ջա՛ն-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես... (Ավ. Իս.):

Ուխա՜յ, ուխա՜յ, սիրո՛ւն հովիվ,

Քունդ անուշ... (Ղ. Աղ.):

Հավերից մեկը շարժվեց և քնաթաթախ մի խուլ կռկռոց արձակեց:

- **Ջա՛ն,** մատաղ **ջա՛ն,** - արտասանեց պառավ Մարանը և հորանջեց (Ն.-Դ.):

գ) **Զայրույթ, դժգոհություն**:

Օրինակ՝

- Ցուրտը տարա՞վ... **վահ** տնաշեն:

Չես թող անում մի շունչ քաշեն (Հ. Թ.):

Թո՛ւհ, ձեր այգին էլ, ձեր հերն էլ, ձեր երկիրն էլ անիծած, **վահ**, մի ոռպե չեն թողնում որ մարդ հանգիստ իր գլուխը լա այս քանդվածում (Դ. Դ.):

դ) **Վախ, ցավ, զարմանք** և այլն:

Օրինակ՝

- **Վա՛յ, վա՛յ**, Մոսի՜ ջան, ինձ մի՜ սպանիր (Հ. Թ.):

Ո՛ւֆ, ջարդեցիր, ա՛րջ (Ա. Ստ.):

- **Վա՜հ**, էսքան էլ չա՞ր լինի մարդ,

Ի՞նչ է արել շահը ձեզ վատ (Հ. Թ.):

2. Կոչական ձայնարկություններն են՝ **ա՜, ա՜յ, է՛յ, էհե՛յ, ծո՜, հա՛յ, հարա՛յ, չո՜ւ, ջո՜ւ-ջո՜ւ, տո՜, քշա՛, փիշի՜-փիշի՜, փի՜շտ և այլն:**

Կոչական ձայնարկություններն արտահայտում են՝

ա) **կոչ, կանչ:**

Օրինակ՝

Վա՛յ, փախե՜ք, եկա՛վ... **հա՛յ, հարա՛յ,** եկավ... (Հ. Թ.):

Հե՛յ, ձեզ մատաղ, բանվոր տղերք,

Մեկ է՜լ, մեկ է՜լ, մի զարկ տվեք (Հ. Հ.):

Է՛յ, հսկեցե՛ք, ի՞նչ եք քնում,
Քաջ զինվորներ Թաթուլի (Հ. Թ.):

բ) **Խրախույս, հորդոր, հանդիմանություն, արգելք, վանում** և այլն:

Օրինակ՝

Մուրոն հավաքում էր ոչխարը: Լսելի էր նրա մեղմ սուլոցն ու ձայնը: - «**Հոլե՛, հոլե՛...քը՛սս, քը՛սս**...»: Քիչ հետո ոչխարը գլուխը թեքեց դեպի գյուղ (Ա. Բ.):

- **Փի՜շտ-փի՜շտ**, - վեր թռանք ամենքս. իսկ ծիծեռնակը, սուր ծղրտալով, ընկավ կատվի ետևից... (Հ. Թ.):

- **Դե՛-դե՛**, շաշ-շաշ խոսա՛լ մի (Վ. Ա.):

3. Նմանաձայնական ձայնարկություններ են՝ **ծի՛վ...ծի՛վ, հա՜ֆ-հա՜ֆ, ծուղրուղու՛, միաո՜ւ, բը՛զզ, ճը՛ռռ, չրը՛խկ, խը՜շշ, ու՛ ... և այլն:**

Օրինակ՝

Աքաղաղը կանչում է.

- **Ծուղրուղո՛ւ,**

Ղու-ղու-ղո՛ւ... (Ղ. Աղ.):

Հենց անտառ մտնում են թե չէ, կինը ծառի վրայից կանչում է.- «**Կո՜ւ-կո՜ւ, կո՜ւ-կո՜ւ**» (Հ. Թ.):

Ճը՛ռռ, ճը՛ռռ, ճը՛ռռ, ճը՛ռռ...

Լսե՞լ եք էն թախծալի ճռռոցը...(Հ. Թ.):

- Ո՛ւ - ո՛ւ - ո՛ւ ...

Քամի՜ն է, քամի՜ն,

Տե՛ս անզգամին (Հ. Թ.):

Ձայնարկությունները նախադասության անդամ չեն դառնում:

Վարժություններ

ա) Գտի՛ր ձայնարկությունները, որոշի՛ր դրանց տեսակը:

- Դե հա՛, վերեք... տղամարդն էլ **այդքան** քնի՞:

... - Հե՛-հե՛-հե՛յ, Եգոր հե՛յ, - դմբդմբալով **պատեպատ** գնում է նրա կանչի արձագանքը: **Բոլոր** կժերը գվգվում են: Եգորը նրա հարևան **բրուտն** է. ապա լսվում է **պատասխանը, կարծես** արձագանքը ետ է գալիս՝ «հո՛ւ-հո՛ւ...»:

- Հո՜-հո՛-հո՛, - **հռհռում է** Եգորը՝ **փակելով** մուտքը: Նա **հանկարծակի** է հայտնվում, և հռնդոցը **սարսուռ** է մաղում ինձ վրա:

Դասարանում... Ծիրանի ծառը ստվեր է գցել տետրակիս վրա: Արևի շողը փայլփլում է մատիտի **ծայրին** և արտացոլվում եղունգիս վրա: Մեկը բոթում է թևս.

- Մեծատառ ժ-ն ո՞նց է:

- Է՛...

- **Մի** շվի կտամ...

- Ա՛յ, տե՞ս, - և ցույց եմ տալիս:

- **Վերջի՛ն** նստարան, լռությո՞ւն, - սաստում է ամբիոնին **կոթնած** ուսուցիչը:

(Ակ. Բ.)

բ) Արտագրի՛ր ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց խոսքիմասային պատկանելությունը:

գ) Կազմի՛ր նախադասություններ *վա՜յ, ա՜խ* ձայնարկությունների տարբեր իմաստային երանգներով:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր կապակցված խոսք՝ *«Բնության ձայներ»* վերնագրով՝ հնարավորինս շատ ձայնարկություններ գործածելով:

2. Ձայնարկությունների կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը

Ձայնարկությունները կազմությամբ լինում են **պարզ** և **բարդ**:

1. Պարզ ձայնարկություններ են՝ **ախ, վա՛յ, ջա՛ն, հե՛յ, բը՛զզ, տո՛, է՛յ, քշա՛** և այլն:

2. Բարդ ձայնարկությունները կրկնավոր կամ հարադրական ձայնարկություններ են. օրինակ՝ **վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ, ջո՞ւ-ջո՞ւ, հո՛-հո՛, հայ հարա՛յ, վույ քա՞, փիշի՞-փիշի՞** և այլն:

Ձայնարկությունների ուղղագրության մասին պետք է իմանալ հետևյալը.

1. Կրկնավոր ձայնարկությունները, որոնք կազմվում են նույն կամ համահնչուն ձայնարկություններից, սովորաբար գրվում են միության գծիկով:

Օրինակ՝

Է՞- հե՛-հե՛յ, - ալիք-ալիք դիզվեց ձայնը, - ժողովո՛ւրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղա՛ա՛ք, **հե՛-հե՛յ...** Ով չտանի, թագավորի հրամանով տունը, տեղը, **է-հե՛-հե՛յ** (Ակ. Բ.):

Այդպես են գրվում **հա՞ֆ-հա՞ֆ, հա՛յ-հա՛յ, հա՛յ-հո՛ւյ, ջո՞ւ-ջո՞ւ, չը՞խկ-չը՞խկ, վա՞շ-վի՞շ, վո՛ւյ-վո՛ւյ, տա՞-տա՞-տա՞, տա՛շ-տա՛շի** և այլ ձայնարկություններ:

2. Հարադրական ձայնարկությունները գրվում են անջատ բաղադրիչներով:

Օրինակ՝

- **Հե՛յ վախ**... կոտրան իմ թևերս (Ավ. Իս.):
- Պա՛ հո՞.. միաբերան զարմացան ամենքը (Հ. Թ.):

Այսպես գրվում են՝ **հա՞յ հարա՛յ, զը՞նգ հա զը՞նգ, հա՞յ հա՞ հո՛ւյ, վույ քա՛, տո բա՛, փա՞ հա՛** և այլ ձայնարկություններ:

3. Եթե ձայնարկության միակ վանկարար հնչյունը **ը**-ն է, այն գրվում և կրում է շեշտ:

Օրինակ՝

Թը՞խկ, շը՞փ, հը՞մ, հը՞, ը՞հը՞ և այլն:

Երկվանկ ձայնարկությունների առաջին վանկի **ը**-ն չի գրվում:

Օրինակ՝

Չրը՞խկ, թրը՞խկ, շրը՞փ և այլն:

4. Առավել տևական, երկար արտասանվող ձայնարկությունների երկարացվող հնչյունը գրվում է երկու և ավելի գրով:

Օրինակ՝

Հա՛յ հեեե՛, ոչխարները խեղդվեցին, գոմը ծուխ է լցվել...

Հեեե՛յ ... Խլացուցիչ աղմուկը ճեղքեց մի առնացի և հզոր ձայն (Քր. Թ.):

Օ՛օ՛, ինչ հիմարն է Պետրոսը, ինչո՞ւ մինչև հիմա ուշ չի դարձրել այս հանգամանքի վրա (Շիրվ.):

Բազե՛, **թը՛ռռ,** բազե՛, **թը՛ռռ** ...(Ղ. Աղ.):

Այսպես գրվում են՝ **կը՛ռռ, քը՛սսս, ռ՛ռ՛ռ, հը՛ը՛մ, էհեե՛յ** և այլ ձայնարկությունները:

5. Արտասանության կամ ձայնի ելևէջման համապատասխան՝ գրավոր խոսքում ձայնարկությունների վրա դրվում է բացականչական (երկարացման) նշան (՞) կամ շեշտ (՛):

Օրինակ՝

- **Էհե՛յ**, քա՛ր բերեք,

Շաղախ ու խիպար (Ավ. Իս.):

- **Տռ՞**, տխմար Սիեր, դու չգիտե՞ս, որ

Քո հոր բռին էր Սասունը հզոր... (Ավ. Իս.):

6. Ձայնարկությունները նախադասության անդամներից անջատվում են ստորակետով. սկզբում գործածվելիս՝ վերջից, վերջում գործածվելիս՝ սկզբից, իսկ մեջտեղում գործածվելիս՝ երկու կողմից:

Օրինակ՝

Ա՞խ, իմ վերքը սիրտս է, մերի՞կ,

Դեղ ու դարմանդ ի՞նչ անեմ (Ավ. Իս.):

Քաջ Նազարն էստեղ է, **հա՛** ...(Դ. Դ.):

8. Ձայնարկությունները կոչականների հետ գործածվելիս հաճախ ստորակետով չեն անջատվում:

Օրինակ՝

Ա՞յ խոտ հարող, ասա՛ տեսնենք,

Դու ինչպե՞ս ես խոտ հարում (Ղ. Աղ.):

Է՞յ կանաչ ախպեր, դու բարով եկար (Ավ. Իս.):

Ձանցնող աշխարհում, **ռ՛վ** անցնող մարդ, անվիշտ կյա՛նք քաշիր (Գ. Ա.)

Ո՞վ քեզ ծեծեց, Մարո **ջա՛ն**... (Հ. Թ.):

Վարժություն

Գտի՛ր ձայնարկությունները, որոշի՛ր դրանց տեսակը, բացատրի՛ր ուղղագրությունը:

Ծիտը ծառին ծլվլում է.
- Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ.
Բազեն գլխին պտտվում է.
- Վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ...

Ծիտը լռեց, ծիտը վախեց.
- Վա՛յ-վա՛յ-վա՛յ...
Բազե՜, թը՛ռռ, բազե՛, թը՛ռռ.
- Հա՛յ, հա՛յ, հա՛յ (Ղ. Աղ.):

Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չտեսանք.
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք:

Կռունկները շարա՛ն-շարա՛ն
«Կը՛ռռ, կը՛ռռ» կանչին ու եկան.
. . . . . .
Ջա՜ն, ջա՜ն, մեռնիմ ձեր ձենիկին,
Ա՜յ կռունկներ, նախշուններ (Ավ. Իս.):

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հարցեր և առաջադրանքներ

ա) Որո՞նք են ձայնարկությունների արտասանական կամ հնչերանգային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված ուղղագրական և կետադրական կանոնները:
բ) Ո՞ր ոճին են բնորոշ ձայնարկությունները:
գ) Քո անցած բանաստեղծություններից ո՞րը կարող ես մտաբերել, որում ձայնարկություններ կան:
դ) Փորձի՛ր գրի առնել այն ձայնարկությունները, որոնք դու հաճախակի գործածում ես. տարբերակի՛ր դրանք ըստ տեսակի:

Ստեղծագործական աշխատանք

ա) Գրի՛ր շարադրություն *«Կենդանաբանական այգում»* վերնագրով՝ գործածելով վերաբերականներ ու ձայնարկություններ:

բ) Բառարանի օգնությամբ սովորի՛ր *ըմբոշխնել, ընդարմանալ, թաղկել, ժուժկալ* բառերի իմաստները և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:



Կ Ա Պ

Կապը որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ *քերականական իմաստ*
2. Ձևաբանական առանձնահատկությունը՝ *չթեքվող*
3. Տեսակները՝ *նախադրություն, հետադրություն*
4. Շարահյուսական դերը՝ *կապվող բառի հետ գերադաս անդամի լրացում, նախադասության անդամ չեն դառնում*

Չկա կռիվ հայրենիքի **համար**,
Կա կռիվ **հանուն** հայրենիքի:
Ռ.Դավոյան

Այս նախադասության մեջ **համար** և **հանուն** բառերը **հայրենիք** բառը կապում են **չկա** և **կա** ստորոգյալներին և այդ բառի հետ դառնում են բայական անդամի լրացում:

Համար, հանուն բառերը կապեր են:

Կապ կոչվում են այն բառերը, որոնք դրվում են գոյականի կամ գոյականի իմաստ արտահայտող բառերի վրա և այդ կապվող բառի հետ միասին դառնում են գերադաս անդամի լրացում:

Կապերն արտահայտում են հոլովական իմաստներ՝ կատարելով հոլովական վերջավորությունների դեր: Օրինակ՝ *դրված է սեղանին* ասելու փոխարեն, կարող ենք նաև ասել *դրված է սեղանի վրա*: *Պատմում էր Գեղամից* ասելու փոխարեն՝ *պատմում էր Գեղամի մասին, ներկայացել է Ձեր հրամանով, ներկայացել է Ձեր հրամանի համաձայն* և այլն:

Այդ պատճառով կապերն իրենք չեն հոլովվում ու առանձին վերցրած նախադասության անդամ չեն լինում:

Հիշի՛ր

Կապը և կապի հետ դրվող բառը միասին նախադասության մեկ անդամ են և պատասխանում են մեկ հարցի:

1. Կապերի տեսակները

Կապերը դրվում են կապվող գոյականից, դերանունից և գոյականաբար գործածված այլ բառերից առաջ կամ հետո. դրա համար կոչվում են **նախադրություններ** և **հետադրություններ**:

Նախադրությունները դրվում են կապվող բառից առաջ, օրինակ՝ **մինչև** Օշական, **առանց** նրա:

Անգիր իմացի՛ր

Նախադրություններ են՝ **առանց, դեպի, իբրև, մինչև(մինչ), հանուն, հանձին(ս), ի հաշիվ, ի փառս, նախքան, չնայած, ի, առ, ըստ**:

Վերջին երեք կապերը (**ի, առ, ըստ**) գրաբարից ժառանգված նախդիրներ են:

Հետադրությունները դրվում են կապվող բառից հետո, օրինակ՝ հայրենիքի **համար**, ծովի **վրա**:

Անգիր իմացի՛ր

Հետադրություններ են՝ **առթիվ, առընթեր, դեմ, դիմաց, զատ, ի վար, ի վեր, համար, հանդերձ, հանդիման, հանդեպ, մասին, մեջ, միջև, մոտ, ներքո, նկատմամբ, նման, շուրջ(ը), չափ, պես, վերաբերմամբ, վերաբերյալ, վրա, տակ, տեղ, փոխարեն**:

Օրինակ՝

Արևը մտավ ամպի **տակ:**

Ձիերի երամակը արածում է բլուրների **վրա:**

Այս նախադասություններում **տակ, վրա** բառերը հետադրություններ են:

Այդ նույն հետադրությունները կարող են գոյականի պես հոլովված հանդես գալ, ինչպես՝

Ամպի **տակից** ջուր է գալիս (Հ. Թ.):

Ասես սրտիս **վրայով**

Ձիդ դոփելով գնաց (Գ. Ս.)

Այս նախադասություններում **տակից, վրայով** բառերը հոլովվել են ինչպես գոյականներ:

Հիշի՛ր

Թե՛ իբրև կապ, թե՛ իբրև գոյական կամ այլ խոսքի մաս գործածվող հետադրություն կապերն են՝ **դեմ, դիմաց, հետ, մոտ, մեջ, նման, վրա, վեր, շուրջը, չափ, տակ, տեղ** և այլն:

Կան մի քանի կապեր, որոնք դրվում են կապվող բառից և՛ առաջ, և՛ հետո, օրինակ՝ **բացի** Արամից, Արամից **բացի:** Այսպիսի կապերը կոչվում են **երկդրություններ:**

Երկդրություններ են՝ **անկախ, բացի, համաձայն, հակառակ, շնորհիվ, ընդդեմ, չնայած:**

Իմացի՛ր

Կան գոյականներ, ածականներ, մակբայներ ու այլ բառեր, որոնց այս կամ այն ձևը հաճախ գործածվում է որպես կապ: Այդպիսի բառերը կոչվում են **կապական բառեր**:

Օրինակ՝

Այդ հարցերը պարզելու **նպատակով** նա շտապ մեկնեց Գյումրի:

Միջադեպը հարթվելուց **հետո** նախագահը խնդրեց, որ Ղազարյանը շարունակի իր ճառը (Ն. Զ.):

Առաջին նախադասության մեջ **նպատակ** գոյականի գործիականի հոլովաձևը, առանձին վերցված, նախադասության անդամ չէ. նա **պարզելու** բառը կապում է ստորոգյալին և, իբրև կապ, նրա հետ դառնում է ստորոգյալի լրացում:

Երկրորդ նախադասության մեջ նույն դերն է կատարում **հետո** մակբայը, որը, որպես կապ, **հարթվելուց** բառը կապում է ստորոգյալին՝ նրա հետ դառնալով ստորոգյալի լրացում:

Կապական բառեր են՝ **առաջ, առջև, չանցած, անունով, անունից, առիթով, դուրս, երեսից, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, կից, կողմից, հակառակ, համաձայն, համեմատ, հետևանքով, հավասար, համապատասխան, հեռու, ձեռքից, ձեռքով, մեկ, միջոցով, միջոցին, ներս, ներքև, նպատակով, որպես, պատճառով, վերև, տարբեր** և այլն:

Կապական բառերը հիմնականում հետադրություններ են. նրանցից մի քանիսն են միայն նախադրություններ. դրանք են՝ **չնայած, բացառությամբ, սկսած** և այլն:

Մի քանի կապական բառեր՝ **անցած, չանցած, հակառակ, համաձայն,** երկդրություններ են:

Իմացի՛ր

Կան մի շարք բառեր, որոնք կարող են լինել թե՛ կապ, թե՛ մակբայ կամ ածական այսպես՝

կապ	**մակբայ**
տան **առաջ**	**առաջ** անցնել
օրեր **առաջ**	**առաջ** այդպիսին չլինել
մեզնից **հետո**	**հետո** եկավ
քո **դեմ**	**դեմ** դուրս գալ
ինձ **մոտ**	**մոտ** գալ
տնից **վերև**	**վերև** ելնել

կապ	**ածական**
արևի **նման**	**նման** վերաբերմունք

Մի շարք բառեր էլ հանդես են գալիս թե՛ իբրև կապ, թե՛ իբրև շաղկապ. դրանք են՝ **մինչև, նախքան, չնայած, փոխանակ** և այլն:

Օրինակ՝

Մինչև (կապ) հանդիպման ավարտը նա ոչ մի լուրջ քայլ չկատարեց:
Մինչև (շաղկապ) նա չեկավ, վեճը չդադարեց:

Չնայած (կապ) տրամադրություն չունենալուն՝ գնաց այդ միջոցառմանը:
Չնայած (շաղկապ) տրամադրություն չուներ, բայց գնաց այդ միջոցառմանը:

Նախքան (կապ) նրան տեսնելը մի լավ ծանրութեթև արեց իրադրությունը:
Նախքան (շաղկապ) նրան կտեսներ, մի լավ ծանրութեթև արեց իրադրությունը:

Փոխանակ (կապ) մի բան ասելու՝ լուռ նստել էր:
Փոխանակ (շաղկապ) մի բան ասեր, լուռ նստել էր:

Վարժություններ

ա) Գտի՛ր կապերն ու կապական բառերը, որոշի՛ր դրանց տեսակը (նախադրություն, հետադրություն):

Բաթումից երկաթուղու մարդատար գնացքը սլանում էր դեպի Թիֆլիս:

Օդի մեջ արդեն զգալի էր աշնան ցուրտ շունչը:

Շոգեմեքենայի և վագոնների հանած միակերպ աղմուկն ուղևորների համար անլսելի էր դարձնում փոթորիկի ձայնը, որ կատաղորեն սուլում ու մռնչում էր դուրսը՝ Իմերեթի լեռնուտների վրա:

Երրորդ կարգի վագոններից մեկում՝ երկայն նստարաններից մեկի վրա, երեսն ի վեր, առանց հանվելու պառկած էր մի երիտասարդ՝ ձմեռվա տաք վերարկուի մեջ կոլոլված. ըստ երևույթին մրսում էր: Ամառվա սպիտակ գլխարկը ցած էր քաշել մինչև ականջները, գլուխը հենել էր վագոնի պատն ի վեր դրած ճանապարհորդական բարձին, ձեռները ներս էր կոխել վերարկուի թևերի մեջ և նիրհում էր՝ վագոնի հետ օրորվելով:

Վագոնում բացի նրանից կային դեպի Թիֆլիս գնացող էլի մի քանի ուղևորներ (Ն.-Դ.):

բ) Որոշի՛ր, թե ընդգծված բառերը ի՛նչ խոսքի մաս են:

Փայլակն ահա փայլեց կրկին,
Նրա կարմիր լույսի **տակ,**
Բինից[2] **հեռու** երևացին
Երկու մարդու կերպարանք...

---

[2] բինա- վրան

Էս աշխարհում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կլինի քեզ **հավասար**,
Ո՛վ քաջ Նազար..
Հեռվից լսվում էր գելերի ոռնոցը:
Հա՜յ-հա՛յ, **մոտիկ** տեղից եկա (Հ. Թ.) :

Ժողովուրդը լցված էր **դուրսը** և զբոսնում էր սալած մայթերի **վրա** (Մուր.):

Ծառերի **տակով,** վճիտ առվակների եզերքով քայլելով... հասավ Խաչ փողոցի հրապարակը: Կապարի **նման** ծանրությունը միայն փարատվեց բարձրում (Վ. Փ.):

- Է՛, խելքից **դուրս** բան ես ասում:

Այս հավասարման **մեջ** x-ն ու y-ը **հավասար** մեծություններ են:

Մոտ ժամանակներս կայցելեմ ձեզ:

գ)Արտագրի՛ր կապերը կապվող բառերի հետ, որոշի՛ր կապի տեսակը և կապվող բառի հոլովը:

Մշուշն իջել էր հովիտների խորքը և այժմ դանդաղ, արևը ծագելու հետ իր ընդարձակ ծավալով ոլորտվում էր ծայրերից, բրդի խոշոր քուլաների նման օրորվում էր ծառերի ծայրերին և վարանելով կարծես մաքրում էր բռնած տարածությունը՝ սահելով լեռներն ի վեր (Վ. Փ.):

Բացի կոնկրետ նպատակի դիտարկումից, հանուն որի տվյալ ճառն ասվում է, բացի անկեղծ զգացմունքներից և համոզմունքից՝ պահանջվում է նաև ասելու շնորհք, առանց որի խոսքը համոզիչ չի լինի (մամ.):

Ծերունին չէր բացվում տղաների մոտ, մանավանդ մի երկու տարի առաջ եղած վեճից հետո: Երկու տարի առաջ, արևի դեմ, կոճղի վրա նստած, նայում էր դեպի լեռները: Ու խորին հառաչանքով ինքն իր համար մտածում էր իր երկրի մասին (Հ. Ք.):

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով *բացի, դեպի, մինչև, համար, շնորհիվ, փոխարեն, փոխանակ, նման* կապերը:

բ) *Առաջ, մեջ, մոտ, նման, վրա, հետո, տակ* բառերը նախադասության մեջ օգտագործի՛ր և՛ իբրև կապ, և՛ իբրև այլ խոսքի մաս:

Կապերի հոլովառությունը

Յուրաքանչյուր կապ պահանջում է որոշակի հոլովով կապվող բառ:

Օրինակ՝ Բոլորը ներկա էին, **բացի Գրիգորից:** Նա պատմում էր **Գրիգորի մասին:**

Առաջին նախադասության մեջ **բացի** կապի հետ **Գրիգոր** գոյականը գործածված է և կարող է գործածվել միայն բացառական հոլովով՝ **բացի**

Գրիգորից: Երկրորդ նախադասության մեջ **մասին** կապի հետ նույն գոյականը գործածված է և կարող է գործածվել միայն սեռական հոլովով՝ **Գրիգորի մասին**: Հետևաբար, **բացի** կապը պահանջում է բացառական հոլովով, իսկ **մասին** կապը՝ սեռական հոլովով կապվող բառ:

Կապերի՝ որոշակի հոլովների հետ գործածվելու հատկությունը կոչվում է կապի հոլովառություն:

Իմացի՛ր

Կապի հոլովառության կամ տարբեր հոլովների հետ գործածվելու կանոնները.

1. Հետադրություններից շատերը գործածվում են **սեռական հոլովի** հետ և կապվող բառերի հետ դառնում են ստորոգյալի լրացում: Դրանք են՝

առթիվ, առջև, դիմաց, ժամանակ, մասին, համար, ներքո, նման, նկատմամբ, շնորհիվ, շուրջ(ը), պատճառով, վերաբերմամբ, վերաբերյալ, տեղ, փոխարեն, մոտ, վրա, պես, չափ, հետ, նման և այլն:

Օրինակ՝ Միհրներսեհն ու մյուս մեծամեծները ճնշվել մնացել էին այդ **տեսարանի առջև** (Դ. Դ.): Կանանց առաջին շարքերը **մեղուների նման** թափվեցին (Դ. Դ.): Բոլորն էլ գիտեին, որ նրա խոսքն առաջին հերթին **Լևոնի մասին** էր (Ն. Զ.):

Առաջադրանք

Կազմի՛ր կամ գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ սեռական հոլով պահանջող կապերով:

Մեջ կապը և **սեռական հոլովով** կապվող բառը դառնում են ստորոգյալի լրացում՝ արտահայտելով **ներգոյական հոլովի իմաստ**:

Օրինակ՝ **Դաշտի մեջ** (դաշտում) աշխատում են բազմաթիվ կանայք:

Մոտ, հետ, վրա, պես, համար, նման, չափ հետադրությունների հետ գործածվելիս առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները դրվում են **տրական հոլովով**:

սեռական հոլով	տրական հոլով
մեքենայի մոտ	մեզ մոտ
նստարանի վրա	քեզ վրա
Գառնիկի հետ	ձեզ հետ
սարի պես	ինձ պես
փղի չափ	մեզ չափ
իր համար	մեզ համար
նրա նման	քեզ նման

2. Տրական հոլովի հետ գործածվում են մի քանի նախադրություններ. դրանք են՝ **առանց, ըստ, ընդդեմ, հանուն, նայած, չնայած, հակառակ, համաձայն, հօգուտ,** և որոշ հետադրություններ՝ **կից, մերձ, նման, առընթեր:**

Օրինակ՝

Թողնեի գնայի **առանց բացատրության, առանց մնաս բարով ասելու** (Հր. Ք.):

Հանուն գործի **հաջողության** մենք միավորվեցինք:

Ընկերության նախագահը, **հակառակ** իր **սովորության**, այսօր նույնպես մռայլ էր:

Գործին **կից** ուղարկե՛ք բոլոր թղթերը:

Ես ուզում եմ, որ նա հենց քեզ **նման** ապրի:

Առաջադրանք

Կազմի՛ր կամ գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ տրական հոլով պահանջող կապերով:

3. Հայցական հոլովի հետ գործածվում են՝ **առ, դեպի, զերդ/թ, ի, ի վար, ի վեր, մինչ, մինչև, իբրև, քան** կապերն ու **անց, նախքան, որպես, չհաշված** և այլ կապական բառերը:

Օրինակ՝

Հավաքված ամբոխը իր ձայնն ուղղեց **առ Աստված**: **Ի բարօրություն** մեր երկրի՝ կնքվեց այդ դաշինքը: **Մինչև կայարան** նրանք այլևս ոչ մի բառ չփոխանակեցին: Նա կվերադառնա մարտի դաշտից միայն **իբրև հերոս**:

Առաջադրանք

Կազմի՛ր կամ գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ հայցական հոլով պահանջող կապերով:

4. Բացառական հոլովի հետ գործածվում են՝ **առաջ, բացի, դուրս, զատ, ի վեր, վար, վեր, վերև, հետո, հեռու, ներքև, ներս, անկախ, շուտ, սկսած** և այլ կապերն ու կապական բառերը:

Օրինակ՝

Ես **քեզանից առաջ** այնտեղ կլինեմ: **Բացի ուսանողներից**, բոլորս հետևեցինք նրան: **Գյուղից վեր**՝ ոչ մեծ բլուրի վրա, կիսաքանդ մի մատուռ կար: Պետք չէ ինձ արև օտար երկրում, ոչ էլ հողն օտար, **քեզնից զատ**:

Առաջադրանք

Կազմի՛ր կամ գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ բացառական հոլով պահանջող կապերով:

5. **Գործիական հոլովի հետ** գործածվում են՝ **հանդերձ, մեկտեղ, մեկ** հետադրությունները:

Օրինակ՝

Անհանգիստ շարժում **անելով հանդերձ**՝ նա մի կողմ դրեց ծխախոտը:

Քամին թղթերս փռել էր **սենյակով մեկ:**

Առաջադրանք

Կազմի՛ր կամ գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ գործիական հոլով պահանջող կապերով:

6. Մի քանի կապեր ու կապական բառեր հավասարապես գործածվում են տարբեր հոլովների հետ: Դրանք են՝ **առաջ, ի վեր, իբրև, որպես, հետո, ինչպես**:

Օրինակ՝

Արամից հետո մենք ներս մտանք:

Բայց նաև՝

Մի քանի ժամ հետո հիվանդի վիճակը կայունացավ:

Առաջին օրինակում **հետո** կապի հետ կապվող բառը դրված է բացառական, իսկ երկրորդում՝ հայցական հոլովով:

Նույն ձևով՝

Դռան (սեռական) **առաջ** կուչ էր եկել կատուն:

Երկու ամիս (հայցական) **առաջ** մենք բաժանվեցինք:

Գնալուց (բացառական) **առաջ** հրաժեշտ տվեց բոլորին

*Ներգոյական հոլովի հետ կապ չի գործածվում:

Վարժություններ

ա) Գտի՛ր տրված տեքստում կապերն ու կապվող բառերը և որոշի՛ր, թե կապերը ո՛ր հոլովի հետ են գործածված:

Քո դեմքի վրա, աչքերիդ մեջ, ամեն մի խոսքիդ տակ ես զգում եմ նախատինք: Քո տխրությունն ինձ կատաղեցնում է: Ես շատ լավ գիտեմ, որ դու ստվերի պես հետևում ես ինձ:

... Գնա՜, ճա՛շ պատրաստիր: Մի աման էլ Արտաշեսի համար դի՛ր: Ես նրան ճաշի եմ պահելու: Լա՜վ վարվիր նրա հետ, այդ ինձ հարկավոր է (Շիրվ.):

Հենց նոր դուրս եկավ ժողովից՝ ձեր դատավճռով հանդերձ:

Քանի՛ - քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ (Հ. Թ.):

Դու անսահման բարի ես դեպի քո դուստրը:

բ) Գտի՛ր կապերը, որոշի՛ր դրանց տեսակն ու հոլովառությունը (կապվող բառի հոլովը):

Հին Արաքսը զարմանալի որոգայթներ ուներ: Նա և զարմանալի քմահաճույքներ ուներ: Անհիշելի ժամանակներից համառությամբ կռվում էր **յուր**

անհավասար եզերքի հետ և կարծես դժգոհ էր այն նեղ շավղից, որ գծել էր նրա ընթացքի համար նույնքան քմահաճ բնությունը: Նա սիրում էր ընդարձակություն, սիրում էր ազատություն: Նեղ շավիղը վրդովեցնում էր նրան:

Երբեմն լեռնային երկու զուգահեռական գոտիներ միաբանվում էին և սեղմում էին նրան **իրանց** անձուկ և խորին ձորակի մեջ: Այդ միջոցին նրա կատաղությունը չափ չուներ: Ահռելի հորձանքներով զարկվում էր **յուր** ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ կարծես լսում էր նրա սոսկալի որոտմունքի մեջ այս ճակատագրական խոսքերը. «Նե՛ղ է... նե՛ղ է... խեղդվո՛ւմ եմ»...

Երբեմն լեռնային գոտիների միաբանությունը խախտվում էր, բաժանվում էին միմյանցից, հեռանում էին միմյանցից և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածություն: Այդ միջոցին նրա կամայականությունը չափ չուներ: Ազատվելով յուր նեղ կիրճից՝ մի չար վիշապի նման անխնա ողողում էր, հեղեղում էր յուր հարթ, կանաչազարդ ափերը, և կամ մի արբեցած հսկայի նման երբեմն դեպի աջ էր թեքվում, երբեմն դեպի **ահյակ** էր խոտորվում և երբեք ուղիղ ճանապարհով չէր գնում:

Նա **յուր** ազատությունը խելացի կերպով վայելել չգիտեր...(Ռաֆ.)

գ) Բացատրի՛ր՝ տեքստում ինչո՞ւ են ընդգծված ***յուր, իրանց, ահյակ*** բառերը:

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր նախադասություններ՝ *անկախ, հակառակ, նման, համաձայն մոտ, մերձ, կից* բառերը գործածելով իբրև ածական և իբրև կապ:

Օրինակ՝

Նրանք երազեցին ազատ, **անկախ հայրենիք**:

Այդ խոսք ու զրույցը ստացվեց **մեզնից անկախ**:

բ) Կազմի՛ր նախադասություններ՝ *նպատակ, ժամանակ, պատճառ, ուղղություն, ձեռք, երես, միջոց* բառերն օգտագործելով որպես գոյական և կապական բառ:

Օրինակ՝

Աննան այս ամառ տատիկին հյուր գնալու **նպատակ** ունի:

Անհրաժեշտ գնումներ կատարելու **նպատակով** Եսային մտավ խանութ:

գ) Նշի՛ր, թե իբրև կապ գործածվելիս ինչ հոլով են դրանք պահանջում:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր կապակցված խոսք՝ *«Ինձ ինչո՞ւ չեն հասկանում»* վերնագրով՝ օգտագործելով *առաջ, մոտ, վրա, մասին, հետ, դեպի, մինչև, համար, պես, նման, մեջ* կապերը:

2.Կապերի կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը

Կապերն ըստ կազմության լինում են **պարզ** և **բարդ:**

Պարզ կապերն են՝ **առ, դեմ, զատ, ըստ, ի, համար, հետ, մեջ, մոտ, չափ, պես, վեր, վրա, տակ** և այլն:

Բարդ կապերն են՝ **դեպի, իբրև, միջև, ի հաշիվ, ի փառս, նախքան, ընդդեմ, ի վար** և այլն:

Պարզ կապերի մեջ են մտնում գոյականների հոլովական ձևերից և բայաձևերից առաջացած կապերը: Այդպիսիք են՝ **մասին, շնորհիվ, վերաբերմամբ, նկատմամբ, վերաբերյալ** և այլն:

Բարդ կապերը հիմնականում նախդրավոր կազմություն ունեն: Նրանք կազմված են որևէ նախդիրից[3] և մի այլ բառից: Բարդության այդ բաղադրիչները գրվում են կ՛ամ միացած, կա՛մ անջատ:

1. Միացած բաղադրիչներով գրվում են բարդ կապերի մեծ մասը:

Այդպիսիք են՝ **առանց, առընթեր, բացի, դեպի, ընդդեմ, իբրև, մինչև, նախքան**և այլն:

2. Անջատ կամ հարադրությամբ գրվում են **ի** նախդիրով բաղադրված մի քանի կապեր: Այդպիսիք են՝ **ի վար, ի վեր, ի հաշիվ, ի պատիվ, ի փառս** և այլն:

Իմացի՛ր և հիշի՛ր

1. Բացի, առանց, զատ կապերով կազմված կապական բառակապակցությունները նախադասության մեջ ունենում են ազատ շարադասություն: Դրվելով նախադասության տարբեր անդամների վրա՝ դրանք ստորակետով կամ բութով բաժանվում են նախադասության այլ անդամներից:

Օրինակ՝ Վագոնում, **բացի նրանցից,** կային դեպի Թիֆլիս գնացող էլի մի քանի ուղևորներ (Ն.- Դ.):

2. Ըստ, ի, ի հեճուկս, համաձայն, հակառակ, հանդերձ, նայած, չնայած, չհաշված, փոխանակ և նման մի շարք այլ կապերով կապակցությունները կետադրվում են **առաջադաս** և **վերջադաս** դիրքում՝ բութով, իսկ **միջադաս դիրքում՝** երկու կողմից ստորակետով:

3. Որպես, իբրև կապերով ձևավորված կապակցությունները կետադրվում են **առաջադաս** և **վերջադաս** դիրքերում բութով, իսկ միջադաս դիրքում՝ բութ-ստորակետով, ինչպես՝

Արմինեն՝ **որպես ձեռագործի հմուտ գիտակ,** մասնակցեց այդ ցուցահանդեսին:

Իբրև ճանաչված վիրաբույժ՝ Սուրենի քեռին մրցակից չունի:

---

[3] Նախդիրները (**ի, առ, ընդ, ըստ, ց, զ**) գրաբարում բառերից առաջ դրվող մասնիկներ են:

Հերթով ներս էին մտնում և պատվո պահակ կանգնում նրա բոլոր զինակիցները՝ **որպես անդավաճան եղբայրներ:**

Առաջադրանքներ

ա) Կետադրի՛ր ընդգծված կապակցությունները՝ վերը նշված կանոնների համաձայն:

Ըստ վանքի կարգուկանոնի արդեն շատ ուշ էր, երբ Վարդանը հասավ մենաստան:

Ի վերջո տեղավորվեցին **ըստ ուժի և անզորության, ըստ համարձակության և խոնարհության, ըստ լկտիության և խեղճության:**

Հակառակ ընդունված սովորության այրի Ոսկեհատը պահանջել էր, որ հանգուցյալի հիշատակին մի այնպիսի հոգեճաշ տրվի, որի նմանը չէր եղել:

Սմբատը համաձայնություն էր տվել **հակառակ իր հայացքներին** չկամենալով վշտացնել իր մորը:

Վաղուց մեռել է Օհան ամին և թաղված է այս ծառերի տակ **իր սրտի ուզածի համաձայն:**

Բոլոր այս մարդիկ շուտով պիտի այցելեին մեզ **ըստ հայկական սովորության՝ առանց զգուշացնելու:**

Հայրս **իր սովորության համաձայն** այդ երեկո նույնպես խնայեց մեզ:

բ) Կազմի՛ր նախադասություններ *փոխանակ, հանդերձ, չնայած, հակառակ* կապական բառերով:

Կրկնողական



Հարցեր և առաջադրանքներ

ա) Ի՞նչ են ցույց տալիս կապերը և քանի՞ տեսակ են լինում:

բ) Թվարկի՛ր սեռական հոլով պահանջող կապերը և դրանցով ինքդ կազմի՛ր նախադասություններ:

գ)Թվարկի՛ր բացառական և գործիական հոլով պահանջող կապերը:

դ) Տրված տեքստից դո՛ւրս գրիր կապերը, որոշի՛ր դրանց տեսակը, հոլովառությունը:

Հանկարծ նկատեցի, որ մեր փռած ցանցի վրա զոլավոր գնդակի նման ինչ-որ բան է գլորվում: Հետո հասկացա, որ երբ նրանք փափկամազ պոչիկները մարմնի վրայով տանելով կախում են ճակատի վրա, ծածկում դնչիկը, մեծ գնդիկի տեսք են ստանում: Սկյուռիկները վազում էին շատ արագ, հետո շուտ-շուտ նստում հետևի ոտքերի վրա և հոտոտում օդը: Մինչ այդ ծառերին նստած սկյուռները նայում էին դեպի մեզ և իրենցից ներքև գտնվող մնացած սկյուռներին զգուշացնելու նպատակով տագնապահարույց ազդանշաններ էին տալիս: Մինչ սկյուռիկներն աշխատում էին ազատվել ցանցից, մենք չորս կողմից այն բարձրացրինք: Իսկ երբ հանում էինք ցանցերից, նրանք անդադար ճչում էին և մեր ձեռքերի մեջ կատաղորեն խրում իրենց կտրիչները: Վերադառնալով հյուրանոց՝ սկյուռներին տեղավորեցի ամուր վանդակներում: Նրանք խժռեցին իրենց համար դրված հյութալի մրգերը և խոր քուն մտան: Չգիտեին, որ մի քանի օր անց ինքնաթիռն իրեն պիտի հասցնի մի նոր երկիր, և իրենք պիտի դառնան կենդանաբանական այգու մշտական բնակիչներ (թարգմ.):

ե) Կազմի՛ր նախադասություններ հետևյալ հոմանիշ կապերով՝ *հանուն-համար, բացի-զատ, հանդերձ-հետ, անց-հետո, ըստ-համաձայն:*

Վարժություններ

ա) Արտագրի՛ր կապերը կապվող բառերի հետ, որոշի՛ր կապի տեսակը և կապվող բառի հոլովը:

բ) Լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Դպրոցը գյուղի ծայրին էր՝ բլրակի վրա: Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր: Մի ընդար-ակ սենյակ էր, փայտե հասարակ նստարանների երկու շարք, դիմացի պատից՝ գրատախտակը: Պատուհանի ապակու տեղ խմորով փա-ցրել էին յուղած թու-թ:

Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր՝ դեպի բլրակը բար-բանալիս, ոտքս սայթա-եց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցս փշրվեց, և մինչև տարվա վեր-ը մնացի առանց ժամացույցի: Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թ-պած ժամանակ՝ երբ հո-նեինք:

Երկու շա-աթ հետո քա-ասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում, շատերի տունը գիտեի, ոմանց ծնողներին ճանաչում էի:

Օրապահի զանգին ես ի-նում էի տան սանդու-քով, բլրակի գլխին չհասած՝ տեսնում էի դպրոցի առաջ խմբված երեխաներին: Խմբով էլ ներս էինք մտնում (Ակ. Բ.):

Ստեղծագործական աշխատանք

ա) Գրի՛ր *«Իմ երազած տունը»* վերնագրով շարադրություն՝ օգտագործելով նախադրություններ և հետադրություններ:

բ) Բառարանի օգնությամբ սովորի՛ր *մանանա, մայրի, մալուխ, մույթ* բառերի իմաստները և դրանք կապերի հետ գործածի՛ր նախադասությունների մեջ:

Բառերի շտեմարան

Կապերն առաջացել են տարբեր խոսքի մասերից՝ գոյականներից, ածականներից, մակբայներից:

Որոշ կապերի մեջ նրանց նյութական իմաստն արդեն չի զգացվում, նրանք հանդես են գալիս միայն որպես կապ, ինչպես՝ ***առանց, առթիվ, բացի, հանդեպ, հանուն, օրոք, շնորհիվ, նախքան, ներքո, պես, որպես*** և այլն:

Որոշ բառերում նրանց խոսքիմասային արժեքը երկկերպ է, երկարժեք, ինչպես՝ ***առաջ, առջև, դեմ, դիմաց, դուրս, զատ, համաձայն, հետո, հակառակ, հեռու, մեջ, նայած, ներս, չնայած*** և այլն:

Որոշ բառեր էլ իրենց հիմնական դերով արտահայտում են նյութական իմաստ, բայց կարող են հանդես գալ նաև որպես կապ՝ համապատասխան հոլովական ձևով, ինչպես՝ ***անունով*** *կամ* ***անունից, ժամանակ, կողմից, հետևանքով, միջոցով, նպատակով, պատճառով, ուղղությամբ, զուգընթաց, ընթացքում*** և այլն:

ՇԱՂԿԱՊ

Շաղկապը որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ ***քերականական իմաստ***
2. Ձևաբանական առանձնահատկությունը՝ ***չթեքվող***
3. Տեսակները՝ ***համադասական, ստորադասական***
4. Շարահյուսական դերը՝ ***բառերի և նախադասությունների կապակցում***
   նախադասության անդամ չի դառնում

...**Եվ** հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռերն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան **ու** չգնան...
Հովհ.Շիրազ

Տրված բանաստեղծական հատվածում **և, որ, ու** բառերը իրար են կապել նախադասություններ՝ դառնալով կապակցման միջոց:

Նախադասություններ կամ նախադասության անդամներ իրար շաղկապող բառերը կոչվում են շաղկապներ:

Իմացի՛ր

Շաղկապները բառային նյութական իմաստ չունեն. նրանք արտահայտում են միայն քերականական իմաստ:

Շաղկապները կատարում են սոսկ կապակցական դեր՝ ցույց տալով նախադասությունների ու նախադասության անդամների հարաբերություն ու կապ:

1. Շաղկապների տեսակները

Շաղկապները լինում են երկու տեսակ՝ **համադասական** և **ստորադասական:**

1. **Համադասական են այն շաղկապները, որոնք շաղկապում են նախադասության համազոր անդամներ կամ համազոր, համադաս նախադասություններ:**

Օրինակ՝

Ահել **ու** ջահել իրարով անցան...(Հ. Թ.):

Այս նախադասության մեջ **ու**-ն շաղկապում է նախադասության **ահել, ջահել** համազոր ենթակաները:

Կա Սեծարենց, կա Տերյան, **և** բազում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

(Ե. Չ.)

Այս բարդ նախադասության մեջ **և** շաղկապով իրար հետ կապակցված են երկրորդ և երրորդ համադաս նախադասությունները, իսկ **բայց** շաղկապով վերջին համադաս նախադասությունը կապակցված է նախորդ նախադասությունների հետ:

Ու, և, բայց բառերը համադասական շաղկապներ են:

Անգի՛ր իմացիր

Համադասական շաղկապներ են՝ **և, ու, բայց, իսկ, սակայն, այլ, կամ, էլ, նաև, այլև, ապա, այսինքն, ուրեմն,** ինչպես նաև՝ **բայց և, բայց և այնպես, այն էլ, ինչպես և, ուստի և, մինչև իսկ, կամ թե, և կամ, ապա թե ոչ, և՛...և՛, թե՛...թե՛, կա՛մ...կա՛մ, ո՛չ...ո՛չ:**

2. **Ստորադասական են այն շաղկապները, որոնք բարդ նախադասության մեջ ստորադաս (երկրորդական) նախադասությունը շաղկապում են գերադաս (գլխավոր) նախադասությանը:**

Օրինակ՝ Գարեգինի առաջարկը նա ընդունեց, **որովհետև** հավատաց քաջությանը (Դ. Դ.):

Այստեղ **որովհետև** շաղկապը **հավատաց քաջությանը** ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապում է **Գարեգինի առաջարկը նա ընդունեց** գերադաս (գլխավոր) նախադասությանը:

Եկա, **որ** այստեղ ձեզ համար այսօր

Հրեղեն խոսքեր կռեմ ու խնդում (Վ. Տ.):

Այս նախադասության մեջ **որ** շաղկապը խոսքի վերջում ընկած ստորադաս (երկրորդական) նախադասությունը շաղկապում է **եկա** գերադաս (գլխավոր) նախադասությանը:

Որովհետև, որ բառերը ստորադասական շաղկապներ են:

Անգի՛ր իմացիր

Ստորադասական շաղկապներ են՝ **որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեև, թեկուզ, թեպետ, թեպետև, մինչ, մինչև, մինչդեռ, քան,** ինչպես նաև՝**թե որ, թեկուզ և, քան թե, մինչև որ, հենց որ, եթե ոչ, քանի որ, քանի դեռ, չնայած որ**:

Իմացի՛ր

Կան շաղկապներ, որոնք կարող են գործածվել թե՛ իբրև համադասական, թե՛ իբրև ստորադասական շաղկապ: Դրանք են՝ **թե, թե չէ, եթե...ապա** և այլն:

Օրինակ՝

1. Հայրս հարցրեց, **թե** ուր եմ գնալու:
2. Դեռ չեմ որոշել՝ գալու եմ ձեր տո՞ւն, **թե՞** գնալու եմ դպրոց:
3. Դասագի՞րք, **թե՞** համակարգիչ ես նախընտրում:
4. Կին **թե** տղամարդ, ծեր **թե** երիտասարդ հավաքվել էին գյուղամիջում:

Բերված օրինակներից միայն առաջինում **թե**-ն ստորադասական շաղկապ է, երկրորդ օրինակում ունենք երկու **թե.** առաջինը՝ զեղչված ստորադասական, որի փոխարեն էլ դնում ենք բուրդ՝ **դեռ չեմ որոշել՝ թե**, իսկ երկրորդը՝ համադասական: Մյուս երկու օրինակներում **թե**-ն համադասական շաղկապ է:

Կամ՝

Ներս մտավ **թե չէ(**ստորադաս.**)**, սկսեց հարցուփորձ անել:

Հանգիստ պետք է պահեր իրեն, **թե չէ**(համադաս.) կասկածների տեղիք կտար:

Հիշի՛ր

Շաղկապները նախադասության անդամ չեն լինում:

Ստորադասական շաղկապների հետ չպիտի շփոթել հարաբերական դերանունները, որոնք առանձին կամ **որ** շաղկապի հարադրմամբ շաղկապների պես գերադաս (գլխավոր) և ստորադաս (երկրորդական) նախադասությունները կապում են իրար, բայց, ի տարբերություն շաղկապների, դառնում են նախադասության անդամ: Դրանք են՝ **ով, որ, ինչ, երբ, ուր, որտեղ, ով որ, ինչ որ, երբ որ, որտեղ որ** և այլն:

Օրինակ՝ **Ինչ որ** չի մնա, կտանի քամին.
Հարդը գնում է, ցորենն է մնում (Խ. Դ.):
Ո՛ր ջուրն ինձ խեղդեց, ես նրան ծով կասեմ (ժող.)
Ո՛ւր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր...(Ե.Չ)

Վարժություն

Գտի՛ր շաղկապները, որոշի՛ր դրանց տեսակը:

Էշին ավետիս տվին, թե ցնծա՛ և ուրա՛խ եղիր, և մեզ ընծա՛ պարգևիր, որովհետև քեզ թոռ ծնվեց: Եվ էշն ասաց. «Վա՛յ ինձ, բարեկամնե՛ր, եթե հարյուր թոռ էլ ծնվի, չեն թեթևացնի ծանրությունն իմ մեջքի բեռան» (Վ. Այգ.):

Դա միակ աղբյուրն էր, որի կառուցման համար հետագայում այնքան զոջացել էր ուստան: Աշխատելիս նա չէր ըմբռնել, թե ինչ է կառուցում, որովհետև տան և աղբյուրի ձևը հնարել էր ոչ թե ինքը, այլ տան տերը: Իսկ երբ ըմբռնել էր, այլևս ուշ էր եղել: Եվ ուստային մնացել է միայն անիծել, որ աղբյուրի ջրի նման երկար լիներ տանտիրոջ ոչ թե կյանքը, այլ կյանքի դառնությունը... (Մ. Արմ.):

Ես հնազանդվեցի, քանի որ նրա խոսքը օրենք էր մեր տանը, բայց սրտիցս արյուն էր գնում. ո՛չ քուն ունեի, ո՛չ հանգիստ: Այսպես շարունակվեց, մինչև մի օր մեր տուն եկավ ուսուցիչը (Աղ.):

Առաջադրանք

Կազմի՛ր նախադասություններ՝ **գործածելով *եթե, և, ու, իսկ, կամ, որովհետև, որ*** շաղկապները:

2. Շաղկապների կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը

Շաղկապներն ըստ կազմության լինում են **պարզ, բարդ** և **ածանցավոր**:

Պարզ շաղկապներ են՝ **և, ու, թե, որ, եթե, այլ, էլ, բայց, իսկ, թեկուզ, մինչ, սակայն, թեպետ, քան, կամ, ապա** և այլն:

Բարդ շաղկապներ են՝ **որովհետև, որպեսզի, մինչև, ուստի և, բայց և այնպես, հենց որ, քան թե, մինչև որ** և այլն:

Ածանցավոր կամ բարդածանցավոր շաղկապներ են՝ **այլապես, հետևապես, հետևաբար, այսուամենայնիվ, այնուամենայնիվ:**

Բարդ շաղկապները գրվում են կամ միացած, կամ անջատ բաղադրիչներով:

1. Միացած բաղադրիչներով գրվում են՝ **այլև, նաև, այսինքն, որպեսզի, թեև, որովհետև, մինչդեռ, թեպետև, այնինչ, այնուամենայնիվ** և այլն:

2. Անջատ կամ հարադրությամբ գրվում են՝ **բայց և, բայց և այնպես, այն էլ, ինչպես էլ, ինչպես նաև, մինչև իսկ, և կամ, ապա թե ոչ, քանի դեռ, այլ ոչ թե, եթե ոչ, եթե միայն, ոչ միայն, ըստ որում, թեկուզ և,** և այլն:

Անջատ են գրվում նաև **որ, թե** շաղկապներով հարադրված հետևյալ շաղկապները՝ **այնպես որ, քանի որ, թե որ, հենց որ, կամ թե, ոչ թե, միայն թե, որպես թե** և այլն:

Հիշի՛ր

Շաղկապների գործածության հետ կապված կետադրական կանոններ:

1. Բարդ նախադասության մեջ մտնող բաղադրիչ նախադասություններն իրար կապող շաղկապներից առաջ դրվում է ստորակետ:

Օրինակ՝

Ինձ թվում է, թե սիրտս հիմա կանգ կառնի, բայց դեռ սողում եմ:

Ծղոտներն արև են բուրում, և այդ բույրը ես այլևս չեմ զգում (Բ. Հ.):

Առաջինը ես էի, որ գտա նրան (Ջ. Լ.):

Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն (Ն. Ջ.):

Հարձակման նշան պիտի տար Մարզպետունին, իսկ առաջին կրակը պիտի վառեր Սեպուհը (Մուր.):

Նրան թվում էր, որ ոչ թե պատմել են, այլ այդ ամենը տեսել է ինքը (Ռ. Ա.):

(Բ. Հ.):

Կշշնջան շուրթերդ մի պայծառ անուն,

Ու մեղմ մի երգ կհնչի մի նոր քնարից (Գ. Ս.):

2. Եթե **և, և կամ, և սակայն, և ոչ թե, ու, կամ** շաղկապներով կապված պարզ նախադասություններից երկրորդը ուրիշ ենթակա չունի, ապա այդ շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում:

Օրինակ՝

Աղվեսը եկավ և հանդեսի ժամանակ բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն և անարգեց...(Վ. Այգ.):

Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից

Ու վրանիս մոտ հանգստանայիր (Վ. Տ.):

3. Համազոր նախադասություններ և նախադասության համազոր բազմակի անդամներ կապող **և՛... և՛..., կա՛մ...կա՛մ..., թե՛...թե՛..., ո՛չ...ո՛չ..., է՛լ...է՛լ...** և այլ կրկնվող շաղկապները թվարկություն կամ հակադրություն արտահայտելիս շեշտվում են, իսկ կրկնվող շաղկապից առաջ միշտ դրվում է ստորակետ:

Օրինակ՝

Թողել եմ ներքև՝ մեծ լեռան տակին,

Եվ փառքը, **և՛** գանձ,

Եվ քեն, **և՛** նախանձ -

Ամենը, ինչ որ ճնշում է հոգին (Հ. Թ.):

- **Կա՛մ** ես, **կա՛մ** նա, - կտրուկ պատասխանեց ուղեկիցս: - Մենք աստիճանաբար կհասնենք այն բանին, որ քաղաքը լրիվ ապահովված կլինի **թե՛** խմելու, **թե՛** ոռոգման և **թե՛** տեխնիկական ջրով (մամ.):

Ձվարթ ու թեթև թափառել ազատ,

Եվ **ո՛չ** հայրենիք, **ո՛չ** տուն ունենալ,

Ո՛չ անուն, **ո՛չ** զենք, **ո՛չ** փառք, **ո՛չ** արծաթ...(Վ. Տ.):

Ձեզանից լավ երգ չի տեսել
Գարնան օրը ոսկեփայլ,
Դուք եք երգն **է՛լ**, խաղն **է՛լ**, լույսն **է՛լ**,
Ու առանց ձեզ՝ ողջ մռայլ (Հ. Թ.):

Վարժություններ

ա) Գտի՛ր շաղկապները, բացատրի՛ր դրանց կազմությունը, ուղղագրությունը և կետադրությունը:

1. Մի քանի տարվա կուրությունը սրել էր նրա լսողությունը, ուստի և նա պարզ լսում էր մեղուների երգը օդի մեջ, բարդիների տերևների ուրախ ճքճքոցը և երեխաների զվարթ աղմուկը մի հեռավոր տան բակից: Նրա ականջին հասնում էր եկեղեցու տոնական զանգահարությունը, որը կարծես թրթռում էր օդի մեջ և շունչը կտրած ընկնում գետնին:

Ծերունին, ձեռը տված թոռանը, քայլում էր նրա հետևից և հարցնում, թե ինչպե՛ս են ծառերը. բոլորն էլ ծաղկե՞լ են արդյոք, ծաղիկները թափվե՞լ են, թե ոչ:

Պապը քայլում էր կռացած և հևում ամեն քայլ անելիս, բայց կարծես չէր հոգնում, իսկ Աստղիկը առաջնորդում էր նրան: Եվ ահա նրա ականջին էր հասնում հինավուրց անտառի խշշոցը: Անտառը խշշում էր այնպես, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում: Այդ խշշոցը նույնն էր, ինչ որ շատ-շատ տարիներ առաջ (Ս. Ջ.):

2. Մրոցը, իհարկե, գյուղխորհուրդ ունի, խորհուրդն էլ՝ նախագահ: Բայց և ոչ մի զեկուցում չի ասի այն, ինչ կտեսնեք, եթե ապրեք Մրոցում, թերթեք նրա հնադարյան գիրքը:

... Մարդու աչքին մի պահ տարօրինակ է թվում, որ «Կռապաշտանոցի» տները կանգուն են մնացել մինչև խրճիթ-ընթերցարանի գալը, թեկուզ խրճիթում լրագրեր քիչ են լինում, որովհետև գյուղում գրաճանաչ քիչ կա (Ակ. Բ.):

3.Ես քաշվում էի որևէ կարծիք հայտնել, որովհետև ո՛չ Եղիա մարգարեի կառքն էի տեսել, ո՛չ էլ մանավանդ երես ունեի հորեղբորս հետ զրուցելու, քանի որ նրա կամքին հակառակ էի մասնակցում այդ ճանապարհորդությանը: Բայց շատ չանցած՝ ինքն սկսեց ինձ հետ զրուցել (Աղ.)

բ) Որոշի՛ր շաղկապների տեսակը և ցո՛ւյց տուր, թե դրանք ի՛նչ բառեր, բառակապակցություններ կամ նախադասություններ են շաղկապում իրար: Բացատրի՛ր շաղկապների հետ կապված կետադրությունը:

Մի անգամ մայրիկս մեզ իրավունք տվեց, որ ձի նստենք, ու ամենքս միասին ծառայի հետ գոմը վազեցինք:

... Առաջինը նստեց մեծ եղբայրս:

... Մեծից հետո մյուս եղբայրս նստեց:

Նա էլ երկար ման եկավ, նույնպես մտրակով քշեց Սևուկին ու չափ գցեց սարի տակից: Դեռ էլի էր ուզում ման գալ, բայց երրորդ եղբայրս խնդրեց, որ

շուտով թողնի իրեն: Երրորդ եղբայրս քշեց և՛ դեպի կալը, և՛ պարտեզի չորս կողմով, և՛ գյուղի միջով ու արագությամբ բաց թողեց սարի տակից դեպի գոմը: Երբ մեզ հասավ, Սևուկը հևում էր, իսկ վիզն ու ազդրերը քրտնքից սևացել էին:

Հերթը ինձ հասավ: Ես ուզում էի եղբայրներիս զարմացնել, ցույց տալ, թե ոնց եմ քշում: Բայց Սևուկը չէր ուզում գոմից հեռանալ... վախում էր ու ետ-ետ գնում (Լ. Տ.):

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք (Հ. Շ.):

գ) *Նախորդ վարժությունից դո՛ւրս գրիր հոդ ունեցող գոյականները, որոշի՛ր հոդի տեսակն ու նշանակությունը:

դ) Գտի՛ր շաղկապները և կապերը, որոշի՛ր դրանց տեսակը: Ցերեկվա պայծառ անդորրը տարածվել էր բոստանների վրա: Ամեն ինչ անշարժ քարացել էր այնտեղ, բայց դա շոգի թմրություն չէր, այլ միջօրեի խաղաղություն: Արևը լճացել էր բոստանների վրա, դաշտերի վրա, հորիզոնից հորիզոն: Խոշոր, մուգ բծերով երևում էին ծառերի շարքերը մարգերի և հոլիկների շուրջը: Շոգն ու հովն ապրում էին կողք կողքի: Զովացնող քամին, անցնելով երբեմնակի, հանդիսավոր ու ծանր խշխշացնում էր սաղարթները, որոնք հովհարում էին իրենց ստվերում հանգստացող մարդուն կամ կենդանուն:

Հոլիկի մոտ՝ ծառերի տակով, սահում էր վճիտ ջուրն իր հունով, սահում էր արագ, բայց բոլորովին լուռ: Երբեմն միայն ջրի մի կոհակ, բարձրանալով մի փոքրիկ քարի վրա և իջնելով, ծկլթում էր կամացուկ. կարծես աղջիկ մտավ ջուրը լողանալու և դրա սառնությունից վախեցած՝ սրսփաց (Մ. Ա.):

ե) Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով *բայց, որպեսզի, թեև, քանի որ, հենց որ, այն էլ* շաղկապները:

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հարցեր և առաջադրանքներ

ա) Ի՞նչ իմաստ են արտահայտում շաղկապները:

բ) Շաղկապների ի՞նչ տեսակներ սովորեցիր. թվարկի՛ր:

գ) Ո՞րն է համադասական և ստորադասական շաղկապների տարբերակման էական հատկանիշը:

դ) Հե՞շտ ես տարբերում կապն ու շաղկապը. հիմնավորի՛ր:

Տեքստային աշխատանք

Բարեկիրթ մարդը, անշուշտ, ճշտապահ է ու քաղաքավարի: Հետևապես նա թանկ է գնահատում թե՛ իր, թե՛ ուրիշի ժամանակը: Նա բնավ չի ուշանում հավաքույթներից, ինչպես նաև հյուրասիրությունից, անգամ ժամադրությունից: Նա նաև կարգապահ է, քանի որ պահում է տված խոստումը: Իսկ եթե մարդը

կասկածում է, թե կկարողանա իր խոստումը պահել, ուրեմն պետք է ոչինչ չխոստանա, այլապես իր վարկը կընկնի շրջապատողների աչքում:

Եթե մարդը խոստանում է որևէ բան, ապա անպայման, թեկուզև գերագույն ջանքերի գնով, պետք է կատարի:

ա) Տրված տեքստից դո՛ւրս գրիր կապերը, շաղկապներն ու վերաբերականները:

բ) Բառարանի օգնությամբ սովորի՛ր *վայելուչ, խաթարել, ներհուն* բառերի իմաստները և գրի՛ր դրանց համապատասխան հոմանիշներն ու հականիշները:

Վարժություն

Կետերի փոխարեն դի՛ր բազմակի անդամներ, կապի՛ր կրկնադիր շաղկապներով և կետադրի՛ր:

Երաժշտությունը հնչում էր մերթ ...
Թանձր մառախուղի մեջ չէին երևում ոչ ...
Ու միանգամից լռեցին թե ...
Նրան մերժում էին ամենքը և ...

Խմբային աշխատանք

Բաժանվե՛ք երեք խմբի և միմյանց հետ մրցե՛ք.

ա. Մի խումբը մյուսին հարցնում է շաղկապը, մյուսը որոշում նրա տեսակն ու կազմությունը:

բ. Ո՞ր խումբը ավելի շատ շաղկապների կիրառության օրինակներ կարող է թվարկել առավելապես գեղարվեստական գրականությունից. յուրաքանչյուր խումբ տվյալ շաղկապը չպետք է կրկնի:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր շարադրություն *«Եթե ես ամենազոր լինեի...»* վերնագրով՝ օգտագործելով տրված սկիզբը և գործածելով շաղկապների բոլոր տեսակներից:

Եթե ես ամենազոր լինեի, այնպես կանեի, որ աշխարհից վերանային թշնամանքն ու ատելությունը, ամենուրեք թագավորեր միայն արդարությունը...



ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Շարահյուսությունը որպես առարկա

Խոսքը մարդկանց հաղորդակցման կարևորագույն միջոցն է, որը լինում է **բանավոր** կամ **գրավոր,** լինում է **ծավալուն** կամ **հակիրճ:**

Խոսքը լեզվի դրսևորումն է, նրա գործնական կիրառությունը:

Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար նախադասությունը խոսք է, ինչպես շատ ավելի ծավալուն ամբողջական բանաստեղծությունը, պոեմը, պատմվածքը, վեպը և այլն:

Խոսքը կարող է արտահայտել և՛ մեկ, և՛ մեկից ավելի մտքեր, ինչպես՝

Ճտերն աշնանն են հաշվում արտահայտում է մեկ, մինչդեռ **Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա**՝ երկու միտք:

Խոսքի մեջ ամենակարևորը նրա ամբողջականությունն ու ավարտուն լինելն է:

Խոսքը դրսևորվում է նախադասությունների միջոցով:

Նախադասությունը շարահյուսության ուսումնասիրման հիմնական միավորն է:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասություն

Բացվում է առավոտը:

Ձորերի մթնում հազիվ նշմարվում է Շենը: Բարակ ծուխը խառնվել է գիշերվա մշուշին, և չեն երևում ո՛չ քարափավոր տները, ո՛չ Կյորեսի հին եկեղեցին... Իսկ քաղաքում արև է: Տների թիթեղյա կտուրները ցոլցլում են՝ գոյացնելով կաթնագույն լույսի ծով, որի մեջ, ինչպես դեղին յուղագունդ, լողում է ռուսաց եկեղեցու ոսկե գմբեթը:

Հետզհետե զարթնում է Գորիսը (Ակ. Բ.)

Տրված տեքստը կազմված է վեց նախադասություններից, որոնք տարբերվում են մեկը մյուսից բառերի քանակով, նախադասությունների տեսակներով:

Ծավալուն խոսքը մասնատելի է, և խոսքի ամբողջական բովանդակությունն արտահայտող նվազագույն միավորը նախադասությունն է:

Այն ստորոգական կապակցությունը, որն ունի հաղորդակցական արժեք, կոչվում է նախադասություն:

Նախադասության կարևոր բնութագրիչներն են՝

ստորոգյալը,

միտքը կամ բովանդակությունը,

հնչերանգը:

Ստորոգյալն արտահայտվում է բայի եղանակաժամանակային ձևերով:

Օրինակ՝

*Առաջին աքլորականչի հետ **արթնանում էր** պապս:*

Տրված նախադասությունը ունի **մեկ ստորոգյալ**, որն արտահայտված է դիմավոր բայով՝ ***արթնանում էր***, պատմողական **ավարտուն հնչերանգ** և միասին, մեկ ամբողջության մեջ արտահայտում է **ամփոփ միտք**:

Նախադասության մեջ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ **գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը** և **մակբայը,** հանդես են գալիս որպես նախադասության տարբեր անդամներ՝ կատարելով շարահյուսական տարբեր պաշտոններ:

Նախադասության անդամները ոչ թե պատահական ու անկանոն են դասավորվում մի նախադասության մեջ, այլ որոշակի դասավորությամբ, բառերի հոլովմամբ ու խոնարհմամբ, ինչպես նաև քերականական ու վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերի օգնությամբ:

Նախադասության մեջ առկա բառերը իրար հետ կապակցվում են երկու ձևով՝ **համադասությամբ** և **ստորադասությամբ**:

Օրինակ՝

Ցավալլուկ և պաղատագին կոչեց Լիլիթի քաղցր անունը (Ավ. Իս.):

Այս նախադասության մեջ ***ցավալլուկ*** և ***պաղատագին*** բառերը իրար համադաս են, համազոր, այսինքն՝ **համադասական կապակցություն** են, մինչդեռ ***Լիլիթի քաղցր անունը*** կապակցության մեջ առկա է երկու **ստորադասական կապակցություն՝** ***Լիլիթի անունը*** և ***քաղցր անունը:***

2. Բառակապակցություն

Երկու և ավելի բառերի այն կապակցությունը, որն ունի անվանողական արժեք, կոչվում է բառակապակցություն:

Աշնան անձրև ***Աշնանն անձրևում է:***

Ինչպես տեսնում ենք, առաջին կապակցությունը անվանում է հասկացություն, մինչդեռ երկրորդը, արտահայտելով ամփոփ միտք, իրականացնում է հաղորդակցում:

Բառակապակցությունը բնութագրվում է՝

1. ըստ բաղադրիչների կապակցման սերտության՝

ազատ և **կայուն,** ինչպես՝ *տխուր երգ, աշնան քամի, արագ հասնել* (ազատ) և *շտապ օգնություն, գարնան ավետաբեր, Հայաստանի Հանրապետություն, ռուբիկոնն անցնել* (կայուն):

Հիշի՛ր

Կայուն բառակապակցություններ են դարձվածքներն ու շրջասույթները՝ *թռչունների արքա, առաջին ջութակ, Հայաստանի վերքի երգիչ, Սկյուտարի սոխակ, ականջ կախել, ուղտի ականջում քնել, սիզիֆյան աշխատանք:*

2. Ըստ բաղադրիչ բառերի քանակի՝

երկբաղադրիչ և **բազմաբաղադրիչ**, ինչպես՝ **սրտի խոսք** և **սրտից բխած խոսք, ջանադիր աշխատանք** և **երկարաձիգ գիշերների տքնաջան աշխատանք:**

3. Ըստ բառակապակցության գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության՝

գոյականական – աղի արցունք, վարպետ Օհան, ցորեն հաց, փայտից գդալ, համով կերակուր,

ածականական – գործից անկախ, դասին պատրաստ, մաթեմատիկայից ուժեղ, հերոսի պես հաղթական,

թվականական – մարտի ութ, ընդամենը երեք, առնվազն տասը, ճիշտ հինգ, համարյա ինը, մոտավորապես չորս

դերանվանական – մեզնից ո՞վ, այն ամենը, նրանցից յուրաքանչյուրը, ձեզնից ոմանք,

բայական – հասնել բարձունքների, խղճին ծանրացած, օրնիբուն աշխատելիս, սնդուկում պահվող,

մակբայական– այնքան շտապ, սպասվածից շուտ, ժամեր շարունակ:

Առաջադրանքներ

ա) Տրված հատվածներից դո՛ւրս գրիր բառակապակցությունները և բնութագրի՛ր ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության:

Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը: Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որ աչք էին շլացնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում էր յուր դեմքը անթափանցիկ շղարշով: Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ (Ռաֆ.):

Ճանապարհի ափերին հազարաբույր ու հազարաթույր ծաղիկները բյուր-բյուր ձևերով պճնազարդել էին բուրաստանները: Երազանման թիթեռների բույլերը ճախր էին առնում կանաչի ու կակաչի մեջ՝ Լիլիթի շուրջը:

Պուրակներում բանաններն ու անանասները բոլորել էին լճակները, ուր ցոլացայտ ձկներն էին խայտում նունուֆարների և լոտոսների հույլերի մեջ:

Սաղարթախիտ ստվերների տակ արծաթյա և ծիածանավառ սիրամարգերն էին ճեմում զմրուխտահավերի ու ծիրանահավերի հետ (Ավ. Իս.):

բ) Կազմի՛ր բառակապակցություններ՝ տրված բառերին կցելով քո ընտրած հնարավոր տարբերակները:

Մոռանալ, գրավիչ, պարտեզ, դժգոհություն, նվիրված, արագ, սիրելի:

Օրինակ՝ **մոռանալ – դասը, ընկերներին, շուտ**

գ) Փորձի՛ր տրված երկբաղադրիչ բառակապակցությունները դարձնել բազմաբաղադրիչ:

Գնացքով մեկնել, վախենալ արջից, ներկել պատերը, դանդաղ թիավարել, այգու ծառերը, տան կտուրը:

Օրինակ՝ *արագընթաց գնացքով մեկնել քաղաքից*

դ) Դարձվածաբանական բառարանից դո՛ւրս գրիր հինգական բայական և գոյականական կայուն բառակապակցություն:

ե) Տրված բառակապակցությունները գործածի՛ր նախադասությունների մեջ:

Ջերմ հանդիպում, տխուր հիշողություններ, կոշտացած ձեռքեր, ներքև սլանալ, սարսափից քարանալ, գլուխ խոնարհել, արձանի պես անշարժ մնալ, գործելու մեջ անվստահ:

զ)* Տարբերակի՛ր տրված բառակապակցությունները՝ ըստ գերադաս անդամի:

Անակնկալներով լեցուն, աշխատելու մեջ թերացող, Արարատ սար, չամիչով կարկանդակ, անակնկալ մեկնել, գրեթե տասը տարի, վարդի պես շուրթեր, տասներկուամյա ուսուցում, փորձությունների միջով անցնել, քեզ նման մարդ, հպարտանալ ծնողներով, վաղուց սպասված, գործին անտեղյակ, առնվազն բոլորը, հիմնականում ամբողջը, հունիսի հինգ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ[4]

«Ավա՜ղ այս զրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմությանը: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին, ինչպե՞ս ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս հատուցեմ խոսքով ծնունդի և սնունդի փոխարեն...Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: ... Ո՞վ այսուհետև պետք է հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իմ՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր որդուց հաղթվելով... Զարթի՛ր,

[4] Հաճախ լեզվաբանական գրականության մեջ ***ըստ հաղորդակցման նպատակի*** անվանման փոխարեն գործածվում է ***ըստ երանգի*** կապային կապակցությունը:

Երե՛միա, զարթի՛ր և մարգարեանալով հանդերձ ողբա՛ այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ դեռ պիտի կրենք. գուշակի՛ր, որ տգետ հովիվներ պետք է երևան գան, ինչպես գուշակեց Զաքարիան իսրայելացիների համար» (Մովսես Խորենացի):

Ինչպես տեսնում ենք, բերված հատվածը խիստ հուզական խոսք է, որն արտահայտվել է տարբեր երանգի նախադասություններով՝ **հարցական, հրամայական, բացականչական, պատմողական**: Մի փոքր հատվածում այս տարբեր երանգի նախադասությունները այնպես են միահյուսվել, որ ստեղծել են յուրահատուկ մի եղանակավորում:

Անհնար է մարդկային հաղորդակցումը՝ բանավոր թե գրավոր՝ առանց այս կարգի նախադասությունների:

Նախադասություններն, ըստ հաղորդակցման նպատակի կամ ըստ երանգի, լինում են **պատմողական, հարցական, հրամայական և բացականչական**:

Իմացի՛ր

- Պատմողական նախադասության հաղորդակցական նպատակը տեղեկատվություն հաղորդելն է:
- Հարցական նախադասության հաղորդակցական նպատակը տեղեկատվություն ստանալն է:
- Հրամայական նախադասության հաղորդակցական նպատակը խոսակցին գործողություն կատարելուն դրդելն է:
- Բացականչական նախադասության հաղորդակցական նպատակը հույզերի, զգացմունքների արտահայտումն է:

1.Պատմողական նախադասություն

Ուք նշանավոր բանաստեղծներ էին ապրում արքունիքում:

Պատմողական նախադասությունն արտահայտում է դատողություն, որը կամ հաստատվում է, կամ ժխտվում: Ըստ այդմ էլ պատմողական նախադասությունները լինում են՝

Հաստատական.

Օրինակ՝

Սարի հետևում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ (Վ. Տ.):

Ժխտական.

Օրինակ՝

Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան (Վ. Տ.):

Պատմողական նախադասության նյութը հաղորդվում է առանց կոնկրետ վերաբերմունքի, չեզոք առոգանությամբ, ինչպես՝

Կայսրը հրամայեց իր մեծածավալ պետության բոլոր ճարտարապետներին ու վարպետներին, որ տասը տարվա մեջ կառուցեն իր երևակայած անձայրածիր պարիսպը:

Սակայն դա չի նշանակում, թե պատմողական նախադասությունները զուրկ են հնչերանգից: Այս նախադասություններում կարևորվում է տրամաբանական շեշտադրումը:

Պատմողական նախադասություններում հնչերանգի ամենաբարձր կետը տրամաբանական շեշտն է:

Օրինակ՝ Ես քեզ **այսո՛ր** եմ սպասելու:

Ես քեզ այսօր **սպասելո՛ւ եմ:**

Ես **քե՛զ** եմ այսօր սպասելու:

Ե՛ս եմ քեզ այսօր սպասելու:

Պատմողական նախադասության ստորոգյալը լինում է թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ, արտահայտվում է սահմանական, պայմանական և հարկադրական, նաև ըղձական եղանակի բոլոր ձևերով, ինչպես՝

Լևոնի նիհար դեմքը **ստացել էր** մի տեսակ բաց մանիշակագույն երանգ (Շիրվ.):

ստացել էր - սահմանական եղանակ, պարզ ստորոգյալ

Ու եթե **պիտի** գիր ու տառ **հիշվի,**
Ապա Նա **ինքն է** այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Աճում է-հասնում խորհրդանիշի (Պ. Ս.):

պիտի հիշվի – հարկադրական եղանակ, պարզ ստորոգյալ

ինքն է – բաղադրյալ ստորոգյալ

Աճում է-հասնում – սահմանական եղանակ, պարզ ստորոգյալ

Սև գիշերն **իջավ** իր անհայտ գահից
Եվ մութով **լցրեց** երկինք ու գետին:

Տխուր **կրժպտաս** դու հոգնածորեն
Ու հոգնածորեն դուռը **կրբանաս**... (Վ. Տ.):

իջավ – սահմանական եղանակ, պարզ ստորոգյալ

լցրեց – սահմանական եղանակ, պարզ ստորոգյալ

կրժպտաս – պայմանական եղանակ, պարզ ստորոգյալ

կրբանաս – պայմանական եղանակ, պարզ ստորոգյալ

Հիշի՛ր

Ըղձական եղանակի բայաձևերով կազմված նախադասությունները կարող են լինել և՛ պատմողական, և՛ բացականչական՝ նայած այն բանին, թե զգացական երանգը ինչպիսին է:

Օրինակ՝

պատմողական՝

Երկու օրից գնամ, ընկերուհուս տեսնեմ, հետո կխոսենք:

բացականչական՝

Լինե՜ր, այնպե՜ս լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին:

Պատմողական նախադասությունները կարող են լինել միակազմ, ինչպես՝

Դրսում ցուրտ է: Մռայլ գիշեր է:

Պատմողական նախադասությունները կազմությամբ լինում են թե՛ պարզ, թե՛ բարդ:

Առաջադրանք

Ընդգծված բայաձևերը բնութագրի՛ր ձևաբանորեն:

Մայրս **ասում էր**. «Կաթիլն հավատիս
Ծովանա պիտի, պիտի քաղցրանա,
Մոտ է, կցրվի ամպն Արարատիս,
Կցրվի, թեկուզ դարեր **թանձրանա**,
Մասիսի համար ընկնողը, որդի՛ս,
Մասիսի նման **պիտի բարձրանա...»** (Հ. Շ.)

Վարժություն

Կազմի՛ր պատմողական նախադասություններ բայի հնարավոր բոլոր եղանակներով:

2. Հարցական նախադասություն

Հարցական նախադասությունը արտահայտում է հարցում, որի միջոցով խոսողը հարց է տալիս իրեն անհայտ անձի, առարկայի, երևույթի, գործողության և այլնի վերաբերյալ: Այս նախադասությունները ձևավորվում են հարցական հնչերանգի միջոցով:

- Սա հրա՞շք է. ո՞ւր անհետացավ այդ ամրոցը, ո՞ւր փախավ,- գոչում էին նրանք:

Հարցումը տարբեր իմաստային դրսևորումներ ունի.

բուն հարցում՝

Օրինակ՝ Երազումս մի մաքի
Մոտս եկավ հարցմունքի.

-Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի (Հ. Թ.):

հարցում-հաստատում

Օրինակ՝ **Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ** (Ե. Չ.):
Դու իմ ասածները կանես, չէ՞:

հարցում-ժխտում

Օրինակ՝ **Ո՞վ կթողնի նրան այդ գործը կատարել:**
Շարունակ մտածում էի, թե ինչով եմ ես մեղավոր:

ճարտասանական կամ անպատասխան հարցում

Օրինակ՝ **Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի** (Հ. Թ.):

Հարցական նախադասությունները հաճախ ձևավորվում են հարցական դերանուններով՝ **ո՞վ, ո՞ւմ, ե՞րբ, ինչո՞ւ, որքա՞ն** և այլն, վերաբերականներով՝ **մի՞թե, չէ՞ որ, արդյոք, իրո՞ք, չէ՞:**

Հիշի՛ր

Ուղղակի խոսքում հարցական դերանունների վրա դրվում է հարցական նշան, իսկ անուղղակի խոսքում՝ ոչ:

Օրինակ՝

-Դու ինձանից **ի՞նչ** ես պահանջում,- հարցնում էր Սահակը Արմենին:
Սահակը Արմենին հարցնում էր, թե նա իրենից **ինչ** է պահանջում:

Առաջադրանք

Կազմի՛ր կամ դո՛ւրս գրիր գեղարվեստական գրականությունից նախադասություններ հարցական նախադասությունների իմաստային բոլոր տեսակներով:

**** Վարժություն***

Որոշի՛ր տրված հարցական նախադասությունների իմաստային բնույթը:

1.Ո՞վ է խմում համբույրն հիմա
Ապարանջան աղբյուրիս,
Աղթամարա վանքիս վրա
Կա՞ բաց թողած աղավնիս:

Ո՞վ է նայում Վանա ծովիս,
Ափին Վանս, բույնս կա՞,
Ա՜խ, Սիփանա ծաղկահովիս
Գառներս կա՞ն, շունս կա՞:
(Հ. Շ.)

2.Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի,
Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ
Պատել, պայծա՜ռ Նաիրի:

3.Ինչպե՞ս չսիրեմ, երկիր իմ կիզված,
Պարզված վերըստին սրերի սուրսայր.
Ինչպե՞ս չըսիրեմ- հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր...
(Վ. Տ.)

4.Այսքանից հետո ի՞նչ կոչես նրան.
Մեր կեռմանաշատ երթուղու վրա

5.Տուն էր կանչում, ու տան ճամփան
դեռ մշուշ էր, միգով լի,

Մի նշանացի՞ց,
Մի սյու՞ն,
Կամ թե ձո՞ղ,
Ինչ- որ գրերի ինչ-որ ստեղծո՞ղ:
(Պ. Ս.)

Խեղճ պանդուխտ եմ, քույրի՛կ, ասա՛,
ո՞րն է ճամփան Բինգյոլի:
(Ս. Կ.)

3. Հրամայական նախադասություն

Հրամայական նախադասությունները արտահայտում են գործողության կատարման **հրաման, հորդոր, խնդրանք, հանձնարարական,** ունենում են հրամայական հնչերանգ:

Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...(Վ. Տ.):

Այս նախադասություններում ստորոգյալը արտահայտվում է հրամայական եղանակի բայաձևով, որի վրա դրվում է շեշտ:

Օրինակ՝

-Լիլի՛թ, ների՛ր ինձ: Լիլի՛թ, այդպես լուռ և տխուր մի՛ նայիր ինձ, ժպտա՛, խոսի՛ր (Ավ. Ի.)

Արգելական հրամայականի դեպքում շեշտը դրվում է ***մի*** արգելականի վրա:

«...Էլ մի՛ գա, մոռացի՛ր ինձ» (Ն.-Դ.):

Հրամայական նախադասություններում ստորոգյալը կարող է արտահայտվել նաև սահմանական, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներով: Ձևաբանական այս եղանակները շարահյուսորեն արտահայտում են հրամայական եղանակավորում:

Օրինակ՝

Հենց վաղը գնո՛ւմ ես դաշտ՝ բերքը հավաքելու:
Ուշադի՛ր կլինես, չվրիպե՛ս, մինչև օգնություն ստանանք:
Դու երբե՛ք նրան չպիտի մենակ թողնես:

Հրամայական նախադասությունները հաճախ ձևավորվում են բայական անդեմ ձևերով՝ անորոշ դերբայով:

Օրինակ՝

Լռե՛լ և սպասե՛լ նոր հրահանգների:

Երբեմն շեշտը դրվում է ոչ թե հրամայական բայաձևի, այլ այն բառի վրա, որն իր վրա է կրում տրամաբանական շեշտը:

Օրինակ՝

Խաղա՛ղ անցիր, ուրա՛խ անցիր երկու օրվա էս ճամփեդ (Հ. Թ.):

Առաջադրանք

Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր հրամայական նախադասություններ, որոշի՛ր դրանց կազմությունը:

Տեքստային աշխատանք

Ինչպես էր Նասրեդինը սովորում դպրոցում

Երբ Նասրեդինը սովորում էր դպրոցում, չարաճճիությունների համար նրան հաճախ պատժում էր ուսուցիչը: Բայց պատիժները չէին վախեցնում նրան, և նա շարունակում էր նորից շաղ տալ իր հանաքներն ու սրամտությունները:

Մի անգամ դասի ժամին ուսուցչի համար մի մեծ ման հալվա բերին: Հենց այդ պահին նրան կանչեց կինը:

-Երեխանե՛ր, ես ձեզ թողնում եմ որոշ ժամանակ,- ասաց ուսուցիչը,- ձեզ լա՛վ պահեք և, ամենագլխավորը, ձեռք չտաք հալվային. այն թունավորված է:

Հազիվ էր նա դուրս գնացել, երբ Նասրեդինը հալվան բաժանեց հավասար մասերի և տվեց աշակերտներին: Երբ երեխաները կերել էին վերջին փշրանքները, ներս մտավ ուսուցիչը և սպառնալից հարցրեց.

-Ո՞վ է կերել հալվան:

-Մեծարգո՛ ուսուցիչ,- պատասխանեց Նասրեդինը,- ես ջարդեցի ձեր գրչահատը և այնքան վշտացա, որ որոշեցի անմիջապես թունավորվել և կերա հալվան: Բայց, ավա՜ղ, թույնը թույլ դուրս եկավ:

Առաջադրանքներ

ա) Պատմի՛ր տեքստը բանավոր:

բ) Առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք տեքստին որոշակի երանգ են հաղորդել:

գ) Վերլուծի՛ր տրված տեքստի նախադասություններն ըստ կազմության և ըստ նպատակադրման:

Ստեղծագործական աշխատանք

ա) Հիշի՛ր քո դպրոցական կյանքից որևէ ծիծաղելի կամ արտասովոր դեպքև գրի՛ առ՝ ուշադրություն դարձնելով նախադասությունների երանգին:

բ) Կազմի՛ր երկխոսական տեքստ՝ հարցական, պատմողական և հրամայական նախադասություններով:

4. Բացականչական նախադասություն

Բացականչական նախադասությունները արտահայտում են զարմանք, ուրախություն, բացականչություն, հիացմունք, ափսոսանք, մի խոսքով՝ զգացական երանգ: Այս նախադասությունների բուն նպատակը լսողի մեջ հույզ, զգացմունք առաջացնելն է:

Օրինակ՝

Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան,
Երնեկ, երնեկ երազ լինիմ,
Թռնիմ մոտդ, մայրի՛կ ջան (Ավ. Իս.):

Բացականչական նախադասությունները ձևավորվում են բացականչական հնչերանգով, որը գրավոր լեզվում դրսևորվում է բացականչական նշանով, երբեմն՝ շեշտով, հաճախ էլ այս կարգի նախադասություններում գործածվում են ձայնարկություններ, հարցական դերանուններ, վերաբերականներ՝ բացականչական երանգով:

Այս նախադասությունների ստորոգյալները արտահայտվում են հիմնականում բայի ըղձական եղանակով, երբեմն նաև՝ մյուս եղանակներով:

Օրինակ՝

Բայց ո՞վ **կտա** էն վայելքը՝ ինքս ինձ էլ **չզգայի...**

Վերջացա՞վ...
Կյանքըս **մաշվեց, վերջացա՞վ..**

Ա՞նց կացան...
Օրերս **թըռան, ա՞նց կացան.**
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս **կերա՞ն, ա՞նց կացան** (Հ. Թ.)

Ոչի՞նչ, ոչի՞նչ ես **չտեսա** Ռիալտոյի կամուրջին
Ոչ մրահոն աղջիկ **տեսա,** ոչ ջրերը կապտաջինջ (Ս. Կ.):

Առաջադրանք

Կազմի՛ր երկուական նախադասություն՝ ըստ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական երանգի:

Վարժություններ

ա) Որոշի՛ր տրված նախադասությունների բնույթը՝ ըստ հաղորդակցման նպատակի:

բ) Դո՛ւրս գրիր դիմավոր բայաձևերը, որոշի՛ր դրանց եղանակը, ժամանակը, դեմքը, թիվը և սեռը:

Իմ մորմոքները առուներին տամ,
Ծովից ծով տանեն իմ մորմոքները,
Մի զով ծառի տակ նստեմ, հեկեկամ,
Ջինջ աղբյուր դառնան իմ մորմոքները.
Դալար ծառերը աղբյուրից խմեն,
Անտառներ դառնան իմ մորմոքները
Եվ շոգ պահերին խշշան, օրորվեն,
Աշխարհին զով տան իմ մորմոքները... (Գ. Ս.)

գ) Արտագրի՛ր և կետադրի՛ր տրված նախադասությունները՝ յուրաքանչյուր նախադասության վերջում նշելով նրա բնույթը:

1. «Ով Անսկիզբն Անմահ ներիր իմ կարճամտությունը խնայիր բոլորին խղճա բոլորին բոլոր մարդկանց: Մի լսիր ինձ թող ապրեն ամենքը մի կործանիր մեզ մի ավերիր մեր բույնը...»

«Ով է ճմլում մեր սիրտն ասքան անողորմ այսքան անգութ»:

Փառք քեզ աստված դու ստեղծեցիր ամենագեղեցիկը և կատարյալը արարածների մեջ:

Ուր էիր երեկ ամբողջ օրը: Այնքան որոնեցի այնքան որոնեցի մեղմ եղանակով ասաց Ադամը:

Ես սպասեցի քեզ թե այստեղ թե լճափում իսկ դու չկայիր ոչ այստեղ ոչ այնտեղ կտրուկ ձայնով պատասխանեց Լիլիթը (Ավ. Իս.):

2. Ամոթ է Լևոն: Փառք աստծո դու երեխա չես խելքի եկ... Չարժե այդպես գոռալ...

Չարժե չարժե սինյոր դուք էլ եք ասում: Բայց չգիտեք ինչ եմ կորցրել ինչ: Ձախ կոշիկս...այո....ձախը.... Գիտեք.... Իտալիա երգ երաժշտություն կորավ ամեն ինչ... Երկու հոգի էին մեկը բարձրահասակ մյուսը թիկնավետ... Պիջակս էլ հանեցին... Տերը նրանց հետ թող շապիկս էլ հանեին չէի խոսիլ... Բայց կոշիկներս ձախ կոշիկս... Հանիր ասաց ձեռներս բռնողը գոնե երկու բաժակ օղի արժեն... Սկսեցի աղաչել պաղատել... Չլսեցին անաստվածները... Տարան տարան...

Ուրեմն կոշիկներիդ համար ես լալիս ասացի ես մոտավորապես հասկանալով բանի էությունը...

Հարյուր հիսուն ռուբլի սինյոր հարյուր հիսուն ռուբլի կար կոշիկիս մեջ... Այնտեղ էի պահում հավաքած փողերս... (Շ.)

Իմացիր

Առօրյա և գեղարվեստական խոսքում հաճախ տեքստերը մի ամբողջության մեջ ներկայացնում են ըստ հաղորդակցման նպատակի նախադասության բոլոր տեսակները: Դրանք անվանվում են **խառը** նախադասություններ:

Օրինակ՝

-Եվ որպեսզի չկրկնվի այս ողբերգությունը, ես դիմում եմ ձեզ, աշխարհի՛ մարդիկ, ոչնչացրե՛ք հրեշներին, շղթայեցե՛ք դաժան ձեռքերը պատերազմից առաջ և ոչ թե պատերազմից հետո:

-Հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլերյանը...Թալեաթ փաշային սպանած լինելու համար,- խախտեց նա դահլիճը խեղդող լռությունը ու շունչ քաշեց, իսկ դահլիճը շունչը պահեց՝ պատասխա՞նը:

- Եղբա՛յր իմ, թո՛ւյլ տուր, Փարիզից եկա, որ համբուրեմ քո ձեռքը (Բ. Վ.):

Առաջադրանք

ա) Հստակ առոգանությամբ կարդա՛ տրված նախադասությունները և առանձնացրո՛ւ դրանք ըստ երանգի:

Պատահում է, որ թշնամիներից ավելի բարեկամներն են հետապնդում քեզ:

Ե՞րբ էին ծառերը այսչափ կանաչ եղել: Ե՞րբ էր արևն այսպես ծիրանագույն թափվել արտերի վրա, կախ ընկել քարափներից...Ե՞րբ էին գույներն այսպես խելակորույս խառնվել: Ե՞րբ, ե՞րբ:

Եվ հետապնդում էին նրանք, և կանչում էին, երեխայի պես կախ ընկնում փեշից: Կուրացի՛ր, զինվո՛ր, և մի՛ տես ոչինչ: Խլացի՛ր, զինվո՛ր, և մի՛ լսիր հետ կանչող ձայները (Բ.Վ.):

Կռունկ

(հատված)

Կռո՜ւնկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ,
Կռո՜ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս,
Մի՛ վազեր, երամիդ շուտով կու հասնիս,
Կռո՜ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս:
Թողե՜ր եմ ու եկեր մլքերս ու այգիս,
Քանի որ ա՜խ կանեմ, կու քաղվի հոգիս,
Կռո՜ւնկ, պահ մի կացի՛ր, ձայնի՜կդ ի հոգիս,
Կռո՜ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս...

բ) Բառարանի օգնությամբ սովորի՛ր *խապրիկ, մլք, ուստի* բառերի իմաստները և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Պարզ և բարդ նախադասություններ

Ըստ կազմության՝ նախադասությունները լինում են **պարզ** և **բարդ:**

Մեկ ստորոգյալ ունեցող նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն:

Օրինակ՝

Լեռներում ծնված ջրերի տարիքն ու գույնը խեղդվում են ծովում (Մ. Գ.):

Մեկից ավելի պարզ նախադասություններից կազմված նախադասությունը կոչվում է բարդ նախադասություն:

Օրինակ՝

Երկնքում զզվոտվում են գորշ ամպեր, ու ձորով փախչում է փշաքաղված գետը (Մ. Գ.):

Հիշի՛ր

Որքան՝ ստորոգյալ, այնքան՝ նախադասություն:

Բարդ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ **համադասական և ստորադասական:**

Վարժություն

Տրված հատվածներից առանձնացրու՛ պարզ և բարդ նախադասությունները:

Խոնարհին բակում չտեսա: Փողոցում մարդ չկար. բոլորն աշխատանքի էին. արտերում սկսվել էր քաղհանը, այս ու այն սարալանջից լսվում էր հորովելի ձայնը: Մի տեղ աշունքվա կանաչ արտեր էին, մի տեղ՝ գարնան սև ցելը: Օհան ապերը մի քանի խրատ կարդաց: Երբ նա կռացավ ու ճակատս համբուրեց, ես նրա բարի աչքերում արցունքներ տեսա...

Աղջիկներից ոմանք լաց եղան: Նրանք և՛ ժպտում էին, և՛ ժպիտի հետ սրբում էին արցունքը, որ ծորում էր աղբյուրի պես: Լաց էր լինում և Խոնարհի քույրը (Ակ. Բ.)

Նկարի կենտրոնում՝ փոթորկված ծովի մեջտեղում, նկարիչը պատկերել էր հսկայական առագաստանավի մի բեկոր, որից կառչել էին մի քանի մարդիկ: Դա այն ամենն էր, ինչ մնացել էր մեծ ու այդքան ամուր թվացող նավից: Ողջ գիշեր հավանաբար նրանք տարուբերվել էին անպարփակ ծովի մեջ: Եվ ահա վերջապես բացվում է առավոտը: Ծագում է արևը, թեև այն գրեթե չի երևում ջրային փոշու միջից: Արևի և ջերմության հետ միասին հայտնվում է նաև հույսը, որ փոթորիկը շուտով կհանդարտվի: Բայց դա միայն հույս է... Փոքրիկ մարդկանց գլխավերևում բարձրանում է նոր՝ իններորդ ալիքը, հսկայական ալիքը (թրգմ.):

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պարզ նախադասության տեսակները՝ համառոտ և ընդարձակ

Պարզ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ **համառոտ** և **ընդարձակ:**

Միայն ենթակայից և ստորոգյալից կամ միայն ստորոգյալից կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն:

Ենթական և ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներն են:

Օրինակ՝

Գլուխս ցավում է:	**Մթնեց:**
Մենք չենք լռում:	**Լուսանում է:**

Ենթակա, ստորոգյալ և լրացում ունեցող նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն:

Ենթակային և ստորոգյալին լրացնող անդամները կոչվում են երկրորդական անդամներ (լրացումներ):

Օրինակ՝

Անձավներից ծուխը **դուրս** է սողում:

Այս նախադասության մեջ **անձավներից, դուրս** բառերը լրացնում են ստորոգյալին՝ **սողում է-*որտեղի՞ց* (անձավներից)** և **սողում է-*ո՞ւր* (դուրս):**

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները կարող են լինել թե՛ համառոտ, թե՛ ընդարձակ:

Օրինակ՝

Մթնում էր, և մութը կամաց-կամաց լցվում էր գոմը:

Իսկ այժմ, երբ Ծովանը գտնվեց, փոքրը գանգատվեց, որ իր կովը, երկու տարի առաջ կորած կովը գտնվել է:

Համառոտ և ընդարձակ կարող են լինել նաև միակազմ նախադասությունները:

Օրինակ՝

Ցրտում է:

Իմ խաղաղ երեկոն է հիմա

Մեղմալույս և տխուր, և անուշ (Վ. Տ.):

Նախադասության ծավալումը և համառոտումը

Պարզ համառոտ նախադասությունը կարելի է ընդարձակել և դարձնել մի քանի լրացումներով ընդարձակ նախադասություն:

Օրինակ՝

Գարունը եկավ նախադասությունը կարելի է ընդարձակել՝

Վաղուց սպասված գարունը այս տարի մեր աշխարհում շատ ուշ եկավ:

Կա նաև պարզ համառոտ նախադասության ծավալմանը հակառակ երևույթը՝ ընդարձակ նախադասության համառոտումը, որը ևս կարևոր է խոսքը ճիշտ կառուցելու առումով:

Հիշի՛ր

Բանավոր խոսքում պետք է խուսափել անհարկի, ավելորդ բառերից և նախադասությունը հնարավորինս պարզ կառուցել:

Խոսքի համառոտումը և ընդարձակումը միևնույն նպատակն են հետապնդում. ասելիքը պետք է լինի կոնկրետ, բայց միևնույն ժամանակ ընդհանրացնող:

Բայց այդպես չէ գեղարվեստական գրականության մեջ:

Օրինակ՝

Հարսը փափուկ քայլերով, ինչպես այծյամը ձյունի վրա, մոտեցավ հնձանին նախադասությունը կարելի է համառոտել՝ ***Հարսը մոտեցավ հնձանին:*** Բայց այդ դեպքում, ինչպես պարզ նկատելի է, մենք կորցնում ենք այս խոսքի գեղարվեստականությունը:

Կամ՝

Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի, կեսը թղթած, փտած դռներ, հողածածկ կտուրներ, որոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը՝ ծածկվում փարթամ կանաչով:

Փորձենք համառոտել այդ նախադասությունը՝

Պատուհաններ, դռներ, կտուրներ, որոնք ձմեռը տնքում են ձյունի տակ, գարնանը՝ ծածկվում կանաչով:

Մենք կրճատեցինք ինը բառ՝ ***փոքրիկ, կեսը ապակի, կեսը թղթած, փտած, հողածածկ, ծանրության, փարթամ,*** և ի՞նչ շահեցինք... Ուղիղ հակառակը, կորցրինք և կորցրինք ամենակարևորը՝ նկարագրության ամենատիպական հատկանիշները:

Ասել է թե՝ նախադասության ընդարձակումն ու համառոտումը պետք է կատարվեն գրագետ և ճիշտ:

Վարժություններ

ա)Նշի՛ր, թե քանի պարզ նախադասություն կա տրված բարդ նախադասություններից յուրաքանչյուրի կազմում:

բ) Համառոտի՛ր 3-րդ նախադասությունը:

1. Ադամը բորբոքվեց ու բարկացավ և բոլոր ուժերը հավաքած՝ վազեց Լիլիթի վրա, ուզեց բռնել նրան, սակայն մատները միայն դիպան մազերին:

2. Դա նվագ չէր, այլ Ադամի սիրավառ սերն էր, որ շիթ-շիթ ծորում էր եղեգնափողի միջից՝ դարձած արցունք ու տենչանք:

3. Ջրաղացը, անուշ-անուշ մտմտալով, մանուկ օրերից մի հեքիաթ է պատմում՝ մանկության պես սիրուն, մանկության պես ոսկի, և մենք էլ, այդ հեքիաթին ականջալուր, ընկնում ենք մեր մանկության երանավետ հուշերի գիրկը:

4. Հայրիկս նայեց ինձ, ես՝ նրան, ու նա ձեռքս բռնեց:

գ) Տարբերակի՛ր և ստորև տրված տեքստերից արտագրի՛ր պարզ համառոտ և ընդարձակ նախադասությունները:

դ) Դո՛ւրս գրիր հինգ բայական և հինգ գոյականական բառակապակցություն:

1. Տարիներ անցան: Մի տեղ չգտավ Մարգարը, որ շունչ առներ: Հեղեղի բերանն ընկած մրջյունի պես վեր ու վար էր անում, մագլցում մի ծղոտի վրա, բայց հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ:

Մարգարն աշխատում էր, զրկում իրեն և բերանի պատառը պահում Թորոսիկի համար, որ պապի թևի տակ մեծանում էր: Մարգարն ուրախ էր, երիտասարդացել էր: Եվ երբ Թորոսիկը հարցրեց, թե՝

-Պապե՛, նավը մեզ ո՞ւր պիտի տանի:

Մարգարը նայեց թոռան կայտառ աչքերին, աչքերի մեջ տեսավ անհետ կորած որդու պատկերը և զսպելով իրեն՝ ասաց՝

-Մեր երկիր, յավրի՛ս...

Այդ երկրի համար Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չուներ ընծա տանելու:

2. Արահետը վերջացավ: Ձիերը կանգ առան, խոր շնչեցին և ապա շարունակեցին քայլել:

Ձմռան սկիզբն էր: Ձյունը նոր էր եկել: Ձյունի սպիտակության վրա վերևից ես նշմարեցի փոքրիկ սև կետեր: Գյուղի տներն էին... Ամաչեցի, երբ աչքերս բաց արի: Վաղուց զարթնել էին մյուսները: Սպասում էին ինձ, որպեսզի թոնիրը վառեն: Դուրս եկա. բակից տեսա գյուղը, գիշերվա մեր ճանապարհը: Տանը չորս հոգի էինք... Դպրոցը գյուղի ծայրին էր... Միակ ժամացույցն ինձ մոտ էր...Գլուխը խոնարհեց ու փշրեց ձեռքի բարակ ճյուղը...Խոնարհ, Խոնարհ...Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ...(Ակ. Բ.)

3. Բայց գարունը եկավ: Ես զարմացել էի: Էլի սպիտակել էին բալենիները, ծիրանենիները: Էլի նուրբ թափանցիկ ծաղիկներով էին ներկվել դեղձենիները: Սակայն խեժն այլևս այն համը չուներ: Գարնան մեջ ինչ-որ բան պակաս էր (Ռ. Հ.):

Ստեղծագործական աշխատանք

Փորձի՛ր կազմել փոքրիկ տեքստ միայն պարզ համառոտ նախադասություններով:

ՄԻԱԿԱԶՄ ԵՎ ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզ նախադասությունները լինում են **երկկազմ** և **միակազմ:**

Երկկազմ կոչվում է այն նախադասությունը, որն ունի երկու գլխավոր անդամ՝ ենթակա և ստորոգյալ:

Օրինակ՝

Մութը ծածկեց ամեն ինչ:

Միակազմ կոչվում է այն նախադասությունը, որում առկա է մեկ գլխավոր կամ գերադաս անդամ:

Օրինակ՝

Իրիկնանում է: Շարունակ **համբերել:** Գարնան պայծառ **արև...**

Միակազմ նախադասությունները լինում են **դիմավոր (բայական)** և **անդեմ (անվանական և բայական):**

Վարժություն

Առանձին-առանձին դո՛ւրս գրիր միակազմ և երկկազմ նախադասությունները:

Նկարի միջից նայում էր մի եվրոպացի՝ աջ ձեռքով բռնած հաստ գավազանը: Լայնեզր գլխարկ, ձյունափայլ օձիք՝ սև փողկապով: Լայն կզակ, և դեմքի վրա գծագրվող ուժեղ այտոսկրեր:

Աչքերում հազիվ տապ արած դաժան սառնություն կար...

...Բարձունքի վրա բոցկլտաց եկեղեցու գմբեթը...Վաղորդյան լույսի մեջ հալվեց մշուշը, և ասես երկնի կապույտից իջավ այդ թաղամասը: Հայոց թաղամասը: Շքեղ էր, կանաչների մեջ: Լայն փողոցների վրա երկհարկանի տներ և եռահարկ տներ և բաղանիք: Հրապարակի վրա շատրվանն արծաթ փրփուր էր նետում: Ահա թատրոնը, և օրիորդաց դպրոցն ահա, և խանութները՝ ոսկեղենով, կերպասով ու մրգերով լի: Լի՛, լի՛, լի՛: Արևը խենթացնում էր...

Եվ հանկարծ թարմ հացի բուրմունք, թոնրի վրա կռացած ճապուկ մի մարմին, և անգամ կոտրված մի ծիծաղ, այնուամենայնիվ, ծիծաղ: Այսպես է. թաղման ժամանակ անգամ ժպիտներ են լինում (Բ. Վ.):

Դիմավոր (բայական) միակազմ նախադասություն

Դիմավոր միակազմ նախադասությունը չունի ենթակա, բայց ունի դիմավոր բայ, որը տարբերվում է երկկազմ նախադասության մեջ առկա ստորոգյալից:

Օրինակ՝

Անձրև **է թափվում**:

Անձրևում է:

Առաջին երկկազմ նախադասության մեջ առկա է այն առարկան՝ **անձրևը**, որին ***է*** օժանդակ բայով ***թափվելու*** հատկանիշ է վերագրվում: Մինչդեռ երկրորդ նախադասության մեջ դիմավոր բայը՝ ***անձրևում է***, չունի այդ նույն դերը:

Միակազմ դիմավոր նախադասությունը չունի ենթակա, և այդ ենթական ոչ մի դեպքում վերականգնելի չէ: Այդ պատճառով էլ այն անվանում են նաև **անենթակա նախադասություն:**

Հիշի՛ր

Չպետք է շփոթել զեղչված ենթակայով նախադասությունը միակազմ անենթակա նախադասության հետ:

Զեղչված ենթակայով նախադասության մեջ ենթական մտքով վերականգնելի է:

Օրինակ՝ **Տխրում եմ, Գիշերեց մեր տանը** նախադասություններում ենթակաները մտքով վերականգնելի են՝ ***Ես տխրում եմ, Նա գիշերեց մեր տանը:*** Մինչդեռ միակազմ անենթակա նախադասության մեջ չկա և չի կարող լինել ենթակա, ինչպես՝ ***Լուսանում է, Ճտերն աշնանն են հաշվում:***

Միակազմ դիմավոր նախադասությունները արտահայտում են՝

1. Բնության երևույթներ՝

Օրինակ՝

Այսօր շուտ մթնեց: Արդեն մութ է: Ուժգին կարկուտ է: Շուտով կլուսանա:

Իմացի՛ր

Բնության երևույթներ արտահայտող գոյականները բայական հանգույցի հետ կազմում են անդեմ նախադասություն: Սկզբնապես գոյականը ենթակա է եղել, իսկ բայը՝ էական նշանակությամբ ստորոգյալ: Հետագայում էական նշանակությունը մթագնել է ու վերածվել հանգույցի, ուստի երկկազմ նախադասությունը դարձել է միակազմ, ինչպես՝

Մշուշ է: Քամի է: Սաստիկ շոգ է:

2. Դրություն, իրավիճակ՝

Օրինակ՝

Խառը ժամանակներ են: Պատերազմ է: Անհավասար մարտ էր: Սպասված խաղաղություն է:

3. Դիմային անորոշություն՝

Օրինակ՝

Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես: Հեռագրով հայտնեցին հոր մահը:

4.**Ընդհանրական իմաստ,** երբ նախադասությունը ոչ թե ուղղված է որևէ դեմքի, այլ ընդհանրապես բոլորին:

Օրինակ՝

Մարդ չի հասկանում նրա ասածը: Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում, մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի:

Իմաստային այս տեսակը շատ հաճախ գործածված ենք տեսնում առածներում, որոնցում երբեմն գերադաս անդամն արտահայտվում է նաև երկրորդ դեմքով, ինչպես՝

Ճտերն աշնանն են հաշվում: Խմածդ ջրին քար մի՛ գցիր: Մի՛ եղիր ուրագի պես..., այլ եղի՛ր սղոցի պես...

Վարժություն

Տրված առածներում որոշի՛ր նախադասության տեսակը ըստ կազմության՝ միակա՞զմ, թե՞ երկկազմ, պա՞րզ, թե՞ բարդ:

Ածան հավը կչկչան կլինի: Ծանր տեղդ մի՛ թեթևացրու: Խելոքի հետ քա՛ր կրիր, խենթի հետ փող մի՛ կիսիր: Քաղցր լեզուն օձը բնից կհանի: Ինքը՝ գող, սիրտը՝ դող: Թիզ ու կես, գետնի բզեզ: Անունը տո՛ւր, սուփրեն գցի՛ր: Ցանածդ կքաղես: Ամեն ժամանակ տատը գաթա չի ուտի: Համբերությունը կյանք է: Մինչև չգա հետինը, չի հիշվի առաջինը: Թափած յուղը չի հավաքվի: Աղվեսին վկա ուզեցին, պոչը ցույց տվեց: Աչքը տեսածից է վախենում: Նեղն ընկած կատուն առյուծ է դառնում (Ա.Ղ.):

Առաջադրանք

Կազմի՛ր կամ դո՛ւրս գրիր գեղարվեստական ստեղծագործություններից հինգ դիմավոր միակազմ նախադասություններ:

Անդեմ նախադասություն

Բարձրանա՞լ, *միշտ* ***բարձրանալ,*** *անդադար* ***բարձրանալ…Օ՜, ի՜նչ հրաշալի վրիժառություն,*** *որի համար, սակայն, ես անընդունակ եղա* (Ն-Դ):

Բերված օրինակում՝***Բարձրանա՞լ,*** *միշտ* ***բարձրանալ,*** *անդադար* ***բարձրանալ… Օ՜, ի՜նչ հրաշալի վրիժառություն,*** չկան ենթակա և ստորոգյալ՝ որպես այդպիսիք, չկա դիմային հողում, և ընդգծված բառերը հանդես են գալիս որպես նախադասություն՝ առաջին դեպքում արտահայտված անդեմ բայով՝ ***բարձրանալ***, երկրորդ դեպքում՝ գոյականով՝ ***վրիժառություն:***

Այն միակազմ նախադասությունները, որոնք արտահայտված են անդեմ բայով կամ անվանական որևէ գերադաս անդամով, հատկապես գոյականով, կոչվում են անդեմ նախադասություններ:

Հիշի՛ր

Անդեմ նախադասություններում հնչերանգի դերը խիստ կարևոր է:

Անդեմ բայական և անվանական նախադասությունները ընկալելի են համատեքստում կամ պարբերույթի մեջ:

Օրինակ՝

Անցնելով մի թաղից մյուսը՝ կարծում ես մի երկրից մյուսն անցար: **Նոր հարևանություն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով** (Շ.):

Անդեմ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝

բայական,

անվանական:

Եթե անդեմ նախադասության գերադաս անդամը արտահայտված է **անդեմ բայով՝ անորոշ դերբայով,** ապա նախադասությունը կլինի **բայական**, իսկ եթե գերադաս անդամը արտահայտված է **որևէ գոյականով**, ապա անդեմ նախադասությունը կկոչվի **անվանական**:

Բայական անդեմ նախադասությունները արտահայտում են **հրաման, թելադրանք, հորդոր, հարցում:**

Օրինակ՝

Շարժվե՛լ առաջ: Ապրե՛լ հանուն վեհ գաղափարի: Բարձրանա՞լ, մի՞շտ բարձրանալ, անվե՞րջ բարձրանալ: Ինչո՞ւ չարդարանալ:

Անվանական անդեմ նախադասությունները բնորոշ են գեղարվեստական խոսքին, հատկապես չափածոյին:

Դիմավոր և անդեմ միակազմ նախադասությունները լինում են **պարզ համառոտ և ընդարձակ:**

Միայն գերադաս անդամ ունեցող միակազմ նախադասությունը կոչվում է **համառոտ նախադասություն:**

Օրինակ՝

Ցուրտ է:

Հաշտվե՞լ:

Եթե գերադաս անդամը ունի լրացում կամ լրացումներ, ապա միակազմ այդ նախադասությունը կոչվում է **ընդարձակ:**

Օրինակ՝

Երեկ մեր տանը ցուրտ էր:

Դարձյալ ներե՞լ նրան:

Դիմավոր և անդեմ միակազմ նախադասությունները լինում են **բարդ,** բայց դրանք ավելի հազվադեպ են հանդիպում:

Օրինակ՝

Դրսում սաստիկ շոգ է, իսկ ներսում՝ զով:

Ավելորդ և անիմաստ խոսքե՜ր, հիասթափության ինչպիսի՜ ալիք:

Միակազմ նախադասությունը հաճախ դառնում է բարդ ստորադասական նախադասության գերադաս նախադասություն, բարդ համադասական նախադասության՝ համադաս բաղադրիչ նախադասություն,

ինչպես՝

1.Ապրե՜լ, ապրե՜լ, այնպե՜ս ապրել,

Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:

2.Փոխադարձ մեղադրանքներ, և ընկերները դարձյալ չհաշտվեցին:

3.Երեկո էր, երբ ընկերները բաժանվեցին:

Վարժություն

Դո՛ւրս գրիր անդեմ միակազմ նախադասությունները՝ բնորոշելով տեսակը (բայական կամ անվանական), կազմությունը (պարզ, բարդ):

1.Երևանի զբոսայգիներից մեկը: Ամառային կեսօր: Արև, շուգ ու անդորր: Այգու մի ստվերախիտ անկյունում հանդարտ զրուցում են երկու ոչ տարեց քաղաքացի՝ երկար նստարանի թիկունքին հենված (Ս. Զ.):

Հին ջրհորների մասին եղած փաստերը նրա համար հեքիաթներ են: Վե՛րջ որոնումներին:

Աղջիկները դեռ ծիծաղում են: Բախտավոր աղջիկներ:

Չարտասանված տխուր խոսքեր,
Որ դողում եք անպատասխան...
Խենթ հուզումի անուշ խոսքեր,
Պաղ մարդոցից խորը պահված,
Անջատման պես տխուր խոսքեր,
Հոգուս լույսեր մթնշաղվա՜ծ...

Դալուկ դաշտեր, մերկ անտառ...

-Մահացողի տրխուր կյանք.
Անձրև, քամի, սև կամար...
Սրտակտուր հեկեկանք (Վ. Տ.):

Վարժություններ*

ա) Առանձնացրո՛ւ տրված նախադասություններն ըստ տեսակների՝ դիմավոր, անդեմ՝ նշելով իմաստային արտահայտությունը:

Սև աչերեն շա՞տ վախեցիր,-
Էն մութ, անծիր, գիշեր է.
Մութըն ա՜հ է, չարքեր շա՞տ կան,-
Սև աչերը մի՛ սիրե (Ավ. Իս.):

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կրակին(Հ. Թ.)

Զարթնեց օրը: Ջինջ առավոտ:
Մանուկ արևն աչքը բացեց...
Լուռ մայրամուտ: Ծեր արևը
Հոգնած, խոհուն իջնում է ցած...
.....
Ձյունից դուրս գամ՝ դեմըս ծովն է,
Քո անտա՛ռն է, քո գիշե՛րն է,
Դեպի սիրտըդ ճամփան ո՞րն է,
Մոլորվե՛լ եմ, մոլորվե՛լ եմ (Ս. Կ.):

Մրոտ, ինչպես մի հին ճրագ,
Անբիծ, ինչպես մի հեզ լուսնյակ՝
Մայրս:
Խղճուկ, ինչպես խրճիթը մար,
Հզոր, ինչպես ջրաղացքար՝
Հայրս:
Հեռու, ինչպես Մասիսը խեղճ,
Մոտիկ, ինչպես Մասիսը պերճ՝
Հույսս:
...
Ասում են՝ իբրև խարույկի վրա
Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել:
Ասում են՝ իբրև մոխիրը նրա
Խարույկից հանել ու մորն են տարել (Հ. Շ.):

բ) Նույն այդ օրինակներից դո՛ւրս գրիր ստորոգյալները և վերլուծի՛ր ձևաբանորեն:

Օրինակ՝ ***վախեցիր-*** դիմավոր բայ, պարզ ժամանակաձև, հրամայական եղանակ, ապառնի ժամանակ,եզակի թիվ, երկրորդ դեմք, չեզոք սեռ:

Առաջադրանքներ

Տրված առածները դասակարգի՛ր՝

ա. պարզ և բարդ նախադասությունների

բ. պարզ համառոտ և ընդարձակ նախադասությունների

գ. միակազմ և երկկազմ նախադասությունների[5]

Երկու աչքիցդ մեկին մի՛ հավատա: Գիժն ու հարբածը մեկ են: Դատարկ կարասը մեծ ձեն է հանում: Կատուն իր փորի համար մուկ է բռնում, տերն ասում է, թե՝ դոչաղ է: Մարդու աչքը մի բուռ հողով կկշտանա: Երեսից հայելի, տակից ածելի: Սուտ ճգնավոր է դարձել, վանքի հավերն է ուտում: Լեզուն մեղր, սիրտը լեղի: Անզգամը աստված չունի: Սուտը սատանան է: Ով հարս, դու հարսնաքուր: Ամեն կլոր խնձոր չէ: Տուն չունի, դուռ է փնտրում: Մարդը քուն, մեղքը արթուն: Հետ Զատիկին, հալվան էժանագին: Բանը անելով, էշը քշելով: Համբերությունը կյանք է: Ամռան քար, ձմռան պաշար: Անոթություն, անամոթություն: Ծուռ քանոնից ուղիղ գիծ դուրս չի գա: Կծու- կծու, փառք աստծու: Տունը սյունն է պահում(Ա. Ղ.):

Հարցեր

ա) Հասկանալի՞ է քեզ յուրաքանչյուր առածի ենթատեքստը. եթե ոչ, դիմի՛ր «Առածանի» գրքի օգնությանը[6]:

բ) Ո՞ր առածը քեզ դուր եկավ և ինչո՞ւ:

գ) Ձեր ընտանիքում ո՞վ է իր խոսքում առածների դիմում, և ո՞ր առածներն են դրանք:

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են նախադասության տեսակները՝ ըստ նպատակադրման կամ ըստ երանգի, ըստ կազմության:

2. Ո՞րն է կոչվում պարզ նախադասություն. թվարկի՛ր և բնութագրի՛ր տեսակները:

3. Ո՞րն է կոչվում միակազմ նախադասութուն. որոնք են տեսակները:

4. Որո՞նք են միակազմ անենթակա նախադասության տեսակները. բե՛ր համապատասխան օրինակներ:

---

[5] Առածների որոշ բառեր ու բառաձևեր ներկայացվում են գրական համարժեքով:

[6] Ա.Տ.Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960:

5. Որո՞նք են անդեմ նախադասության տեսակները. բնութագրի՛ր, բե՛ր համապատասխան օրինակներ:



Ստեղծագործական աշխատանք

Ընտրի՛ր տրված հատվածներից որևէ մեկը և շարունակի՛ր.

1. Մանուկ օրերից ես մի առանձին սեր ունեմ դեպի ծեր, ալևոր մարդիկ: Սիրում եմ նրանց պարզ, միամիտ խրատները, մեղմ ու հանդարտ զրույցներն անցածի մասին: Այդպիսի ծերերից էր....

2. Վաղուց նրա աչքերը չէին տեսնում, ականջները ծանր էին լսում, իսկ գլուխը շարունակ դողում էր հասած արևածաղիկի պես: Դողում էին և նրա սառը, չոր ձեռները. այնպես որ, երբ նա թանով ապուր էր ուտում, կերակուրը միշտ կաթկթում էր նրա սպիտակ մորուքին...

Բառերի շտեմարան

Հիշի՛ր

Տղա- **մանչուկ, որդի, ուստր**, բրբ.՝ **բալա, մանչ, լաճ, լամուկ** (թուրքի երեխայի մասին)

Աղջիկ- **աղջնակ, դուստր, կույս**

Տղաների և աղջիկների ընդհանուր անվանումներ՝

նորածին, մանկիկ, պստիկ, մանուկ, երեխա, զավակ

Պարմանի - **պարման, պատանի, պատանյակ, երիտասարդ, ջահել,ջահել-ջիվան, կանաչ-կտրիճ**

Պարմանուհի- **պատանուհի, օրիորդ, աղջիկ**

Պատանի տղաներին և աղջիկներին բնորոշող բառեր՝ **անչափահաս, դեռատի, դեռահաս, դեռահասակ, դեռափթիթ, ծաղկահասակ, նորափթիթ, մատղաշ, մատաղահաս, մատաղ, մանկամարդ**

Հայր- **հայրիկ**, բրբ.՝ **ապի, ափու, բաբո**

Մայր- **մայրիկ, մամա**, բրբ.՝ **նան, նանի, նանե, մարե, մերիկ, մացա, տուտու**

Պապ- **պապի, պապիկ, մեծ հայր, մորապապ, հորապապ**

Տատ- **տատի, տատիկ, մեծ մայր**, բրբ.՝ **հան, հանիկ, մամ, մամե, մեծ մամե, ջոջիկ, մորատատ, հորատատ**

Ծերունի /պառավ - ծեր, զառամյալ, ծերուկ, ալևոր

Տարեց մարդկանց բնորոշող բառեր՝ **ալեխառն, ալեզարդ, ալեվարս, ճերմակահեր, սպիտակահեր, սպիտակամազ, տարիքավոր,** բրբ.՝ **բիձա,** գռհ.՝ **քավթառ**

Համբակ - Մեր հին լեզվում՝ գրաբարում, ***համբակ*** բառը ևս նշանակել է *«երեխա, նորածին մանուկ, տղա, զավակ, որդի, նաև աշակերտ»,* մերօրյա բառարաններում այն բացատրվում է. **1. աշակերտ, 2. թերուս, տգետ, իմաստակ, 3. անփորձ:** Արդի հայերենում բառը գործածվում է թերևս միայն ***թերուս*** նշանակությամբ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասությունը ունի երկու գլխավոր անդամ՝ **ենթակա և ստորոգյալ**:

Սրանք իրար հավասարազոր անդամներ են, որոնք կապակցվում են ստորոգական կապակցությամբ:

Օրինակ՝

Մենք վերադառնում ենք:

Թթենին ծաղկեց:

Իմացիր

Նախադասության շարահյուսական հարաբերության տեսակետից ստորոգյալը և ենթական հավասարազոր գլխավոր անդամներ են, իսկ նախադասության ձևավորման և հաղորդակցման տեսակետից ստորոգյալը առաջին գլխավոր անդամն է, ենթական՝ երկրորդ:

Ինչու՞: Քանի որ առանց ստորոգյալի չի կարող լինել նախադասություն, իսկ առանց ենթակայի կարող է[7]:

Համեմատիր

Ես գնում եմ դասի:

Գնում եմ դասի:

Բերված երկու օրինակներն էլ նախադասություն են՝ մի դեպքում ենթակայով, մյուսում՝ ենթակայի զեղչմամբ: Իսկ եթե ասենք ***Ես,*** պարզ է, որ նախադասություն չենք ունենա:

Նախադասության մեջ առաջինը դրվում է ենթական, հետո՝ ստորոգյալը: Նման շարադասությունը կոչվում է **ուղիղ շարադասություն**: Իսկ եթե ստորոգյալը ընկնում է ենթակայից առաջ, ապա շարադասությունը կոչվում է **շրջուն**:

Օրինակ՝

[7] Մանուկ Աբեղյանը գրում է. «Բայը բուն խոսքն է», իսկ խոսք ասելով նա հասկանում էր նախադասություն:

ուղիղ	**շրջուն**
Տարիներ անցան:	**Անցան տարիներ:**
Դասարանն աշխուժացավ:	**Աշխուժացավ դասարանը:**

Այս երկու կարգի շարադասությունն էլ ընդունելի է և ճիշտ:

1.Ենթակա. նրա արտահայտությունը

Երկինքը արագ ծածկվեց գորշ ամպերով:

Մենք բազմաթիվ շնորհավորանքներ ստացանք:

Տրված նախադասություններում ընդգծված անդամները ենթակա են:

Նախադասության այն անդամը, որը մի բան է անում, լինում կամ դառնում, կոչվում է ենթակա:

Ենթական դրվում է ուղղական հոլովով:

***Ենթական** արտահայտվում է՝

1.**գոյականով**, որը կարող է լինել անձ, իր, երևույթ, հասկացություն և այլն.

Հնձվորը ցերեկվա մարդն էր:

Վրնջում էին **ձիերը** մետաղաձայն և երկարաձոր (Ակ. Բ.):

Նոր բողբոջած **ուռին** ջահել հասակիդ

Օրորոցիս վրա թեքված՝ ծերացավ (Ս. Կ):

Եվ անապատի անհուն **լռությունը** թանձրացավ ու ծանրացավ նորից...

Մի տարի մեծ **դժբախտություն** պատահեց (Ավ. Իս.):

2. **այն բոլոր դերանուններով, որոնք մատնացույց են անում անձ կամ առարկա.**

Այնուհետև **մենք** էլ չէինք լսում նրա ձայնը (Ավ. Իս.)

Մի՞թե **սա** այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի:

Եվ **ամեն որ** շտապում էր դեպի կուլիս՝ անձամբ սեղմելու հանճարի ձեռքը (Ն. -Դ.):

3. **փոխանուն ածականով**, այսինքն՝ ածականը պետք է պարտադիր հոդ ստանա և ունենա առում.

Բառարանները նման են ժամացույցի, **ամենալավը** չի կարող **ամենից ճիշտը** լինել, **ամենավատը** չլինելուց լավ է (անգլ. ասացվածք):

***Մեր** պատել է ողջ աշխարհը:*

***Շատը** գնացել է, **քիչն** է մնացել:*

4. **փոխանուն թվականով՝**

***Տասը** երկուսի հնգապատիկն է:*

__Երեքը__ ներս մտան անմիջապես, իսկ __երկուսը__ սպասեցին դրսում:

5. **բայի անդեմ ձևերով՝ անորոշ, ենթակայական և հարակատար դերբայներով.**
ա) **անորոշ դերբայի որոշյալ առումով՝**

Գրելը քո գործը չէ, դու միայն աշխատի՛ր:

Աղոթելը նրա միակ մխիթարությունն էր այդ ծանր պահին:

բ) **փոխանուն ենթակայական դերբայով՝**

Պտուղդ **քաղող** չկա, մասրենի՛, սարի՛ մասրենի,
Պատիվդ **պահող** չկա, մասրենի՛, բարի՛ մասրենի:

գ) **փոխանուն հարակատար դերբայով՝**

Քնածը այդպես էլ չիմացավ մեր դուրս գնալը:

Ձերբակալվածները արդեն միայն հրաշքի էին սպասում:

6.**բառակապակցությամբ՝**

Փոքրիշատե մեծ քաղաքում հաճույք էր ստեպ-ստեպ **կացարան փոխելը:**

Սերը քանդելը եկեղեցի քանդելուց վատ է (ժող.):

***Բազմակի ենթականեր**

Նրա ծանր **հառաչանքները, ողբը, հեծկլտանքը** կտրատում էին սիրտս:

Վարժություն

Տրված հատվածից դո՛ւրս գրիր ենթակաները և որոշի՛ր՝ ինչով են նրանք արտահայտվել:

Քաղաքամայր Վաղարշապատից Դվին տանող ճանապարհով, որ շինել էր Խոսրով թագավորը, և բարեկարգել Արշակ Երկրորդը, գնում էին երկու հայ գուսան...Մեկը միջահասակ էր, ալեխառն մազերով ու մորուքով, որը թզաչափից ավելի իջնում էր կրծքին, մյուսը երիտասարդ էր՝ թուխ մազերով...

Աշնան առատությունը թափվում էր ճանապարհներին, բայց այգիներում չկար այդ պահի համար սովորական աշխուժությունը. չէին երևում այգեկութ անողների աշխույժ խմբերը, չէին լսվում աղջիկների ու հարսների զրնգուն երգերը (Ստ.Զ.):

...Շատ-շատերը գիտեին, որ այդ բոլորը մտացածին է, զուրկ որևէ իրական հիմքից... Այնինչ Մարկոսը՝ այդ նախկին ջրկիրը, ոչ ոքի բարևին չէր սպասում, բացի մեկից, և այդ մեկը երկրի իշխանն էր՝ նահանգապետը...

Հիվանդը պառկած էր մի շքեղ սենյակում, որի լուսամուտները դրսի կողմից նայում էին դեպի արևմուտք...Հարևան սենյակում հավաքվածները փսփսուքով խոսում էին միմյանց հետ...(Շիրվ.)

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով որպես ենթակա.

Կարմիր, իրենք, դրանք, ոչ մեկը, թշնամանալ, համբերել, բաժանված, դաշտ ու այգի, նետ ու աղեղ, երթևեկ, բարիք:

բ)* Կազմի՛ր նախադասություններ՝ ենթական արտահայտելով գոյականական և դերանվանական բառակապակցություններով:

Վարժություններ

ա) Փակագծում եղած հարցերի օգնությամբ գործածի՛ր տրված բառերը իբրև ենթակա. *քամի, սովորություն, պապ, օր, լույս, այգի, Անա զիզի, մանուկ, ուրախություն, երինջ*:

Մի տան պատուհանից ճրագի սպիտակ (ի՞նչ) էր երևում: Գարնան արև (ինչե՞րը) ինձ հիշեցնում էին, որ մայիսն է: (Ի՞նչը) հալածում էր մառախուղի թանձր քուլաները: Այն ժամանակ (ի՞նչ) կար տարեվերջին դպրոցում հանդես կազմակերպելու: Ձորակներում հիմա էլ կան (ինչե՞ր): Դարպասից դուրս գալուց (ի՞նչը) ետ նայեց դեպի կիսաբաց դուռը: Տանուտերի ընտրությանը (ո՞վ) չգնաց: (Ի՞նչը) անչափ էր: (Ովքե՞ր) միատեսակ են հագնված: Գունավոր կտորի մեջ (ո՞վ) փաթաթել է լավաշ, խորոված սիմինդր (Ակ. Բ.):

բ) Որոշի՛ր ենթակաների շարադասությունը:

2.Ստորոգյալ. նրա արտահայտությունը

Ձորում **խաշում է** հեղեղը, և այդ խաշոցը նրան **կանչում էր:**

Տրված նախադասության մեջ ընդգծված անդամները արտահայտում են հատկանիշ՝ **խաշում** և **կանչում,** և այդ հատկանիշները **է** և **էր** բայերի միջոցով վերագրվում են **հեղեղը** և **խաշոցը** ենթականերին:

Նախադասության այն անդամը, որն արտահայտում է հատկանիշ և այն վերագրում ենթակային ժամանակի մեջ, կոչվում է ստորոգյալ:

Համեմատի՛ր

դարբին Մարգարը ***Մարգարը դարբին է***

Առաջին օրինակում ***դարբին***-ը արտահայտում է հատկանիշ, բայց անկախ ժամանակից, ուստի այն որոշիչ է: Մինչդեռ երկրորդ օրինակում ***դարբին*** հատկանիշը վերագրվում է ***Մարգար*** ենթակային ***է*** հանգույցով, այսինքն՝ ժամանակի մեջ:

Ստորոգյալը պատասխանում է դիմավոր հարցերի՝ ***ի՞նչ է անում, ի՞նչ եղավ, ի՞նչ կլինի, ի՞նչ արեցինք, ի՞նչ պիտի անենք*** և այլն:

Հիշի՛ր

Ստորոգյալը արտահայտվում է դիմավոր բայաձևով, և առանց դիմավոր բայի չի կարող լինել դիմավոր նախադասություն:

Ստորոգյալը լինում է երկու տեսակ՝ **պարզ և բաղադրյալ:**

Երազ

Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մոր մոտ էր.
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ափսո՜ս, որ երազ էր:

Կարկաչահոս աղբյուրն այնտեղ
Թավալում էր մարգարիտ.
Նա հստակ էր, որպես բյուրեղ,
Այն երա՜զ էր ցնորամիտ:

Եվ մեղեդին՝ տխուր, մայրենի,
Հիշեց մանկության օրեր.
Մորըս համբույրն ես զգացի,
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր:

Կրծքին սեղմեց կարոտագին,
Աչքերս սրբեց-շատ թաց էր,
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր (Ս. Շ.):

Հարց և առաջադրանքներ

Ա

ա) Հնարավո՞ր է այլ վերնագիր դնել այս բանաստեղծությանը:

բ) Դո՛ւրս գրիր այն բառակապակցությունները, որոնք բնութագրում են մորը:

Բ

ա) Գտի՛ր բանաստեղծության ստորոգյալներն ու ենթակաները: Ստորոգյալները ընդգծի՛ր երկու, ենթակաները՝ մեկ գծով:

բ) Ստորոգյալների կողքին փակագծում ձևակերպի՛ր հարցը, իսկ ենթակայի դիմաց նշի՛ր՝ ինչով է արտահայտված:

Օրինակ՝ **լսեցի** (ի՞նչ արեցի), **ես**- ենթակա- անձնական դերանուն

Պարզ ստորոգյալ

Հին Արաքսը զարմանալի որոգայթներ **ուներ:**

Ջրածտերը **թռչում են** քարից քար:

Բերված նախադասություններում ընդգծված բայաձևերը պարզ ստորոգյալ են, քանի որ արտահայտված են բայի եղանակաժամանակային ձևերով, այն է՝ ***ուներ***- սահմանական եղանակ, անցյալ ժամանակ, ***թռչում են***- սահմանական եղանակ, ներկա ժամանակ:

Միայն խոնարհված բայով կազմված ստորոգյալը կոչվում է պարզ ստորոգյալ:

Եթե ստորոգյալը արտահայտված է **բաղադրյալ ժամանակաձևով (թռչում են)**, ապա հատկանիշը արտահայտում է ձևաբայը (կախյալ դերբայը), իսկ վերագրումը կատարում է օժանդակ բայը, ինչպես՝ ***Երեխաները նկարում են: Նկարելու*** հատկանիշը արտահայտում է ձևակազմիչ դերբայը՝ **նկարում**, իսկ վերագրումը ***երեխաներին*** կատարվում է ***են*** օժանդակ բայով:

Եթե ստորոգյալը **պարզ ժամանակաձև** է, ինչպես՝ ***Երեխաները նկարեցին,*** ապա հատկանիշը արտահայտվում է բայահիմքով՝ ***նկարեց***, իսկ վերագրումը՝ ***-ին*** բայական վերջավորությամբ:

Պարզ ստորոգյալը արտահայտվում է՝

ա) բայի բոլոր եղանակների հիմնական ժամանակներով՝

օրինակ՝

Այդ հոյակապ տունը այժմ **ներկայացնում էր** մի տխուր տեսարան:

Դու **պիտի հնչես, հնչես** հաղթական,

Իմ հին հա՛յ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբուխ:

ներկայացնում էր **-** սահմանական եղանակ, անկատար անցյալ

պիտի հնչես **-** հարկադրական եղանակ, ապառնի ժամանակ՝

բ) բայի կրկնությամբ՝

օրինակ՝

Գնում է, գնում, տեսնում է, ահա,

Կովի ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր (Հ. Թ.):

Երբեմն այդ կրկնվող բայերից երկրորդը ժխտական բայաձև է.

օրինակ՝

Լինում է, չի լինում, մի հրաշք երկիր է լինում:

Կրկնվող բայերը խոսակցական լեզվում կամ գեղարվեստական խոսքում երբեմն կապվում են շաղկապով, ինչպես՝

Տուր թե կտաս շան ճակատին,

Շուռ է տալիս կատվի կողքին(Հ. Թ.):

Փնտրեց շատ երկար, բայց **չգտավ ու չգտավ:**

գ) հարադրավոր բայերով, ինչպես՝

Էն սև ծովում տառապելով

Լող է տալիս իմ հոգին:

Մի հավք զարկի ես մի օր,

Թռռա՜վ, գընաց վիրավոր (Հ. Թ.)

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր նախադասություններ պարզ ստորոգյալներով, որոնք արտահայտված են բայի պարզ ժամանակաձևերով:

բ) Գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր նախադասություններ պարզ ստորոգյալներով, որոնք արտահայտված են բայի բաղադրյալ ժամանակաձևերով:

գ) Տրված տեքստից դո՛ւրս գրիր պարզ ստորոգյալները և վերլուծի՛ր ձևաբանորեն:

Մի բարի արև գաթայի նման ծեփվել էր Արջասարի շրթին և տերևների միջից շեկ փնջեր էր թափում թթենու տակ՝ խտուտ տալով Նազարի աչքերը: Ուր որ է կիջներ մթնշաղը:

Նազարն անհանգստացավ:

- Ո՞ւր կորավ էս մեր սրտամեռը, Նազա՜ն...

Պատասխան չկա: Բզզացող լռության տիրակալները՝ ճանճերն ու մոծակները, ժրել և հալածում էին Նազարին:

-Տո բա սա կնի՞կ է, բա սա սիրտ-հոգի ունի՞: Չի էլ ասում, թե ճանճերը մարդուս կերան, գնամ քշեմ, Նազարս հանգստանա: Մութն էլ ուր որ է կիջնի: Գել ու գազան, գող ու ավազակ կարթնանան, կբռնեն էս խեղճ աշխարքի բողազը: Նազարին որ մի բան պատահի, Նազանը ո՞նց է ապրելու, Նազարաշենը ո՞նց է ապրելու, աշխարքը ի՞նչ է անելու, իսկի էդ սրտամեռի հոգը չէ...Նազա՜ն (Մ. Ս.)

Հարցեր և առաջադրանքներ

ա) Արդյոք քեզ ծանո՞թ է այս թեման: Քաջ Նազարի մասին ուրիշ ի՞նչ ես կարդացել:

բ) Ո՞ւմ է քո շրջապատում բնութագրում քաջնազարականությունը:

գ) Տեքստից դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք գրական չեն, և նշի՛ր դրանց գրական համարժեքները:

Բաղադրյալ ստորոգյալ

Եփրեմ պապը շա՜տ **ծեր էր** (Մ. Գ.)

Այս նախադասության մեջ ստորոգյալը կազմված է ***ծեր*** ածականով, որը նախադասության ***ստորոգելին*** (վերադիր) է, և ***է*** դիմավոր բայով, որը ***հանգույցն*** է:

Ստորոգելին (վերադիրը) արտահայտում է հատկանիշը, իսկ **հանգույցը** կատարում է վերագրումը:

Որևէ խոսքի մասով և հանգույցով կազմված ստորոգյալը կոչվում է բաղադրյալ ստորոգյալ:

Ստորոգելին արտահայտվում է **գոյականով, ածականով, դերանունով, թվականով, դերբայով** և դիմավոր բայի՝ հանգույցի հետ կազմում է բաղադրյալ ստորոգյալ:

Որպես հանգույց հանդես է գալիս ***եմ*** օժանդակ բայը:

Օրինակ՝

Կարենը քայլող **հանրագիտարան է:**

Նրա պատասխանը միանգամայն **ճիշտ էր**:

Արդեն ժամը **հինգն է:**

Դա **կարդալ չէ**, որ դու ես կարդում:

Հիշի՛ր

Դիմավոր բաղադրյալ ժամանակաձևերում ***է***-ն կոչվում է **օժանդակ բայ,** իսկ բաղադրյալ ստորոգյալներում՝ **հանգույց:**

Իմացի՛ր

Որպես հանգույց կարող են հանդես գալ նաև ***լինել, դառնալ, թվալ, համարել-համարվել*** վերադրառու բայերը:

Եթե նա **հիվանդ լինի**, ոչ մեկին իր մոտ չի թողնի:

Եթե նա **հիվանդ է լինում**, ոչ մեկին իր մոտ չի թողնում:

Մի տարում նա **դարձավ հանրաճանաչ:**

Լուսնի շողերի տակ ձյան ծածկոցը ինձ **գորգ թվաց:**

Իմ շրջապատում նա **համարվում է** հմուտ **որսորդ:**

Իմ շրջապատում նրան **համարում են** հմուտ **որսորդ:**

Վարժություններ և առաջադրանքներ

ա) **Դո՛ւրս գրիր պարզ և բաղադրյալ ստորոգյալները առանձին շարքերով, բաղադրյալ ստորոգյալներում որոշի՛ր ստորոգելիների խոսքիմասային պատկանելությունը:**

Մութի **մեջ** իմ հոգու լույսերը **միշտ** վառ են,
Մութի մեջ իմ խորքի հևքերը կայտառ են:

Պայծառ են կարոտի կանչերը **ու** վառ են,
Մտքերս ոսկեդյութ ձկների վտառ են...

Հուշերիս **խաղաղված** ծովակը ծփում է,
Քունքերս առույգ են- զվարթուն խփում են:

Մութի մեջ ճախրում եմ,- աշխարհը իմ տունն է,-
Մութի մեջ իմ մտքի թևերը **պարում են**,

Պարում են- վերթևում, թևերս թռչուն են,
Աստղի **պես**,- լուսաստղի,- իմ միտքը արթուն է:

Մութի մեջ ծաղկի պես, վարդի պես,- գալիս է,
Սրսփում- լցվում եմ,- **Ոսկեծամ** Մայրիկս է:

Իմ հուշի- անուրջի հետքերը կանաչ են,
Երգերս գարունքվող կանաչ են ու կանչ են:
(Վ. Մուղնեցյան)

բ) Ձևաբանորեն վերլուծի՛ր բանաստեղծության մեջ ընդգծված բառերը:

գ) Կազմի՛ր երկուական նախադասություն բաղադրյալ ստորոգյալներով, որոնց ստորոգելին որոշյալ դերանուն է, անորոշ և ենթակայական դերբայ:

դ)Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր կամ ինքդ կազմի՛ր՝

1. պարզ ստորոգյալներ բայի բոլոր եղանակների ժամանակաձևերով:

2. բաղադրյալ ստորոգյալների օրինակներ, որոնց ստորոգելին գոյականի տարբեր հոլովներով է արտահայտված:

Ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը

Ենթական ու ստորոգյալը նախադասության մեջ համաձայնում են միմյանց դեմքով և թվով:

Դռների մեջ **նա** շատ անակնկալ **հայտնվեց:**

Այս նախադասության ենթական՝ **նա,** դեմքով և թվով համաձայնել է **հայտնվեց** դիմավոր բային՝ ստորոգյալին:

*Առաջին դեմքի եզակի ենթական համաձայնում է առաջին դեմքի եզակի ստորոգյալին, առաջին դեմքի հոգնակի ենթական՝ առաջին դեմքի հոգնակի ստորոգյալին, ինչպես՝

Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր...

Մենք մնաս բարով **չասինք** իրարու (Վ. Տերյան)

Իմացի՛ր

Որոշ կառույցներում չպետք է շփոթել ենթական ստորոգելիի հետ. այդ դեպքում պետք է նկատի առնել ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը, ինչպես՝

Պատասխանատու մենք ենք:

Բժշկուհին ես եմ:

Այս նախադասություններում ենթականերն են ***մենք-ը և ես-ը,*** ուղղակի նրանք դրվել են ստորոգելիից հետո:

*Երկրորդ դեմքի եզակի ենթական համաձայնում է երկրորդ դեմքի եզակի ստորոգյալին, հոգնակին՝ հոգնակիին, ինչպես՝

Դու անհոգ **նայեցիր** իմ վրա...

Դուք մեզ այն հեռու ափերն **եք տանում...**

*Երրորդ դեմքի եզակի ենթական համաձայնում է երրորդ դեմքի եզակի ստորոգյալին, հոգնակին՝ հոգնակիին, ինչպես՝

Ճանապարհին **նա** միայն գլխի շարժումով **էր պատասխանում** Անթառամին:

Բայց **նրանք** կյանքում միշտ էլ **ծնվում են** լոկ այն պատճառով

Որ անչափ շատ են սպասել նրանց:

*Բազմակի ենթակաների հետ դրվում է հոգնակի ստորոգյալ, ինչպես՝

Ժիրայրն ու Շուշիկը, Ծովինարն ու Անդրանիկը կանգնել էին քեռի Նահապետի գլխի աջ ու ձախ կողմերում:

*Իսկ եթե բազմակի ենթակաները տարբեր դեմքերով են, ապա ստորոգյալը համաձայնում է դիմային գերադասություն ունեցող անդամին, ինչպես՝

Ես, դու և Արամը պիտի հարթենք այդ վեճը:

Դու և Արամը պիտի հարթեք այդ վեճը:

*Եթե ենթական ունենում է երկու և երկուսից բարձր թվական որոշիչ, և՛ ենթական, և՛ ստորոգյալը դրվում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի, ինչպես՝

Երկու տղան(երը) աշխատում են դաշտում/միայն հոգնակի/:

Երկու մարդ աշխատում է(են) դաշտում/և եզակի, և՛ հոգնակի/:

Քանի՞սը գնաց/ին/ հարսանիք:

*Եթե բազմակի ենթակաները հոմանիշ բառեր են և գիտակցվում են որպես մեկ միավոր, ապա ստորոգյալը դրվում է եզակի, ինչպես՝

Աղմուկն ու աղաղակը գնալով **շատացավ:**

Խոսք ու զրույցը անցավ տնից տուն:

Հանկարծ լաց ու կոծ լսվեց:

Սպասվում է կարկուտ ու անձրև:

Բայց՝

Անձրևն ու կարկուտը հաջորդում էին իրար:

Ուրախությունն ու տխրությունը քայլում են կողք կողքի:

Գործածի՛ր	Մի՛ գործածիր
Մի մասը լռում է:	Մի մասը լռում են:
Երեմը ընկերոջ հետ գնաց:	Երեմը ընկերոջ հետ գնացին:
Ընդունվում են պատվերներ:	Ընդունվում է պատվերներ:
Վաճառվում են տոմսեր:	Վաճառվում է տոմսեր:
Ամեն մի զինվոր ու բամանատար իր պարտքը պիտի կատարի:	Ամեն մի զինվոր ու հրամանատար իրենց պարտքը պիտի կատարեն:

Վարժություններ

ա) Արտագրի՛ր հետևյալ հատվածը՝ ընդգծելով ենթականերն ու ստորոգյալները:

բ) Որոշի՛ր նախադասության տեսակները՝ համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ:

1. Անձրև էր գալիս: Կարա-բալան քայլում էր դանդաղ: Կոշիկները նեղում էին: Կոմայգու հինավուրց կաղնիներից անձրևի կաթիլներն ընկնում էին նրա լայնեզր գլխարկին: Գինովությունն անցնում էր: Գլուխը պտտվում էր: Ահա թատրոնի շքամուտքը: Դռները լայն բաց են, չորս կողմը լույս է, ու մարդիկ են դուրս գալիս: Առջևից մոտենում է մի կին, կողքին էլ բանաստեղծն է: Տեսնելով նրանց՝ Կարա-բալան ընդարմացած կանգ առավ: Նրան թվաց, թե բանաստեղծը դժգոհ է: Նրա հայացքը ասես հրամայում էր: Կարա-բալան գլխից վեր բարձրացրեց մեխակներով լի զամբյուղը... Ոտքը սայթաքեց: Զամբյուղը ցած սահեց ու ընկավ գետնին: Ճերմակ մեխակները փռվեցին դերասանուհու ոտքերի տակ: Մարդիկ կանգ առան, ոմանք ծափ տվեցին: Ճերմակ ծաղիկները անձրևից փայլող սալարկին իսկապես գեղեցիկ էին (Էդ. Ավ.):

2. Նավը օրորվելով ալիքներն էր ճեղքում իր սուր քթով, ալիքները հեռանում էին մի պահ, հետո մոտենում, զարկում նավին, փշրվում կոհակների:

Մարգարը տախտակամածից նայեց ծովեզրի լեռնաշղթային, որի սրածայր գագաթներին ամպը նազով էր նստել, նայեց և իր հին տան բանալիները կամացուկ հանեց գրպանից, տրորեց բռի մեջ, նետեց ծովը: Փոքրիկ օղակներ ելան նետած տեղից, օղակները լայնացան, հալվեցին, մի մեծ ալիք եկավ, ծածկեց բանալու ընկած տեղը:

Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ գագաթը տեսավ: Այդ երկրում պիտի ծլեին ծիրանի կորիզները (Ակ. Բ.):

Վարժություններ

ա) Գտի՛ր ենթակա - ստորոգյալ կապակցությունները և նշի՛ր դիմային ու թվային համաձայնությունը:

բ) Ըստ նպատակադրման՝ նախադասության ի՞նչ տեսակներ կան այս բանաստեղծության մեջ:

Ա՜խ, ինչ լավ են սարի վրրա
Անցնում օրերն, անո՜ւշ, անո՜ւշ,
Անրրջայի՜ն, թեթևասա՜հ
Ամպ ու հովերն անո՜ւշ, անո՜ւշ:

Ահա բացվեց թարմ առավոտ,
Վարդ է թափվում սարին-քարին,
Շաղ են ցողում ծաղիկ ու խոտ,

Շընչում բուրմունք եղեմային:

Ա՜խ, ի՜նչ հեշտ են սարի վրրա
Սահում ժամերն անո՜ւշ, անո՜ւշ,
Շրվին փըչեց հովիվն ահա-
Աղջիկն ու սերն անո՜ւշ, անո՜ւշ (Հ. Թ.):

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Տեքստային աշխատանք

ԿՈՐԱԾ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

(զրույց՝ ըստ Վրթ. Փափազյանի)

Մի անգամ Արդարությունն անհետացավ հանկարծ: Ասենք նա հաճախ էր կորչում:

Խուսափելով իրեն ծյուրող, լլկող անձերից՝ նա փախչում էր լեռները, պահվում **աշխարհիս հեռավոր անկյուններում**: Բայց ամեն անգամ հաջողվում էր նրան գտնել, **վանդակի կամ սնդուկի մեջ դնել**, ուզածի պես գործածել ... չարչարել:

Այս անգամ, սակայն, չգիտես ինչ հնարքով, Արդարությանը հաջողվեց այնպես լավ թաքնվել, որ մարդիկ աղոթքով, ուժով կամ ոսկով իսկ անկարող եղան նրան գտնելու:

Սկսվեց մեծ իրարանցում: Առանց Արդարության դժվար էր ապրել, մանավանդ որ նրա անհետանալով բազմանում էին մարդկության շատ աղտոտություններ, որպիսիք են՝ կեղծավորություն, անիրավություն, խաբեություն, արյունահեղություն և այդպիսի շատ թույներ, որոնց այնքա՜ն լավ դիմակայում էր Արդարությունը:

Եվ ահա Արդարությանը փնտրելու ելավ նախ Պատերազմիկ-ազնվականը: Ոտնակոխ տալով գյուղ ու քաղաք, արյուն սփռելով ամենուր՝ ջարդեց, սրածեց ամեն ինչ՝ հուսալով բռնել Արդարությանը, բայց, ավա՜ղ...:

Նրանից հետո Արդարությանը որոնելու համար ճանապարհ ընկավ մի շատ հարուստ մեծատուն: Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարանք բարձելով ուղտերին և վստահ լինելով իր ոսկու վրա՝ ճանապարհ ընկավ: Ասում են, որ մի քանի սիրուն կանանց էլ վերցրեց, որ ոսկու փայլի հետ **գեղեցկության հրապույրն** էլ ավելացներ:

- Կտեսնեք,- պնդում էր նա,- Արդարությանը ոսկովս պիտի գնեմ, կանանցով պիտի գրավեմ և, սնդուկիս մեջ դրած, պիտի մեջտեղ բերեմ:

Այդպես ահա Բռունցքն ու Ոսկին գնացին Արդարությանը որոնելու...Եվ դեռ գնում են...

Երրորդը ճամփա ընկավ Թշվառը՝ խեղճուկրակ, **ցնցոտիները հագին**, **ճակատը վշտերով խոր-խոր ակոսած**: Բոլոր ընծաների փոխարեն վերցրեց մի

չնչին սրվակ, այն լցրեց չլսված հեղուկով. որբից՝ մի արցունք, ընկածից՝ մի հառաչ, աշխատավորից՝ մի դառը կաթիլ քրտինք... Մի խոսքով, **վշտերի արցունքներով լցված սրվակը** ամուր փակեց, սեղմեց կրծքին ու կարծում էր, թե տարածն անշուշտ պիտի գրավեր Արդարությանը:

Անոթի, ծարավ, հոգնած ու վշտալից երկար թափառեց Թշվառն ամեն ուղղությամբ՝ կրծքին սեղմած սրվակը, որի հեղուկը սկսել էր եռալ ու տաքանալ: Արդարությունը, սակայն, չխղճաց նրան էլ. ո՛չ երևաց, ո՛չ էլ գոյությունը հայտնեց: Արդարությունը խուսափում էր թշվառից անգամ: Եվ երբ այդպես մտածեց, բարկացած հանեց ծոցից սրվակն ու խփեց ժայռին:

- Գնա՛, ոչնչացի՛ր,- գոչեց նա,- իզուր են **բոլորի վշտերն** ու արցունքները. Արդարությունը Թշվառին չի՛ սիրում:

Բայց հազիվ էր սրվակը փշրվել, երբ լսվեց ուժեղ որոտմունք, **հոսած արցունքներից** թանձր ծուխ բարձրացավ, և նրա միջից դուրս ցցվեց մի ահեղ հսկա: Սարսափած Թշվառն ընկավ բերանքսիվայր:

- Ելի՛ր,- կանչեց հսկան որոտաձայն,- ելի՛ր ու մի՛ վախենա:

- Ո՞վ ես դու, ահե՛ղ ոգի,- հարցրեց Թշվառը:

- Ես,- գոչեց հսկան,- ես Բողոքն եմ, որ ծնվեցի այդ թափածդ արցունքներից և որ աշխարհ պիտի բերեմ անհետացած Արդարությանը... Նայի՛ր...

Եվ **հսկայի պարզած ձեռքի** ուղղությամբ՝ մի կույտ մաքուր ամպերի բացվածքից, դուրս եկավ թաքնված Արդարությունը՝ խորունկ, տխուր հայացքով, առանց կշեռքի ու սրի[8]:

- Ե՛կ, Արդարությո՛ւն,- կանչեց Բողոքը,- ես ծնվել եմ, և իմ ձայնը թող քեզ համար կշեռք ու սուր դառնա:

Բայց Արդարությունն անշարժ ու տխուր նայեց նրան, նայեց Թշվառին և ասաց.

- Դեռ ո՛չ... Դու դեռ փոքր ես, գնա՛, քայլի՛ր, կուտակի՛ր արցունք, կուտակի՛ր վշտերդ, մեծացի՛ր որպես օվկիան, կատաղի՛ր որպես հեղեղատ, և այն ժամանակ միայն ես կգամ իմ սրով և կշիռով...

Ապա ամպը սահեց, և Արդարությունը նորից անհետացավ իր անմատչելի բարձրության մեջ...

Այդ օրվանից ահա Պատերազմիկ զորեղը արյունի մեջ է որոնում Արդարությանը, հարուստը՝ ոսկու, և Թշվառը իր վշտով ու արցունքով մեծացնում է իր Բողոքին, որ նա՛ վերակոչի կորսված Արդարությանը:

---

[8] Արդարության ու անաչառության խորհրդանշանը մի դիցուհի է՝ աչքերը կապած, մի ձեռքին սուր և մյուսին՝ կշեռք:

Հարցեր և առաջադրանքներ

Ա

ա) Ի՞նչ խոհեր արթնացրեց քո մեջ այս զրույցը. արտահայտվի՛ր բանավոր:

բ) Վերնագրի՛ր այս ստեղծագործությանը հատվածաբար:

գ) Համաձա՞յն ես Արդարության դրած պայմանին և ինչպե՞ս ես այն ընկալում:

դ) Մեր օրերում ի՞նչ անարդարություններ ես դու նկատում և ինչպե՞ս կպայքարեիր դրանց դեմ: Արտահայտվի՛ր բանավոր:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր կապակցված խոսք *«Արդարության կրողն եմ նաև ես»* թեմայով:

Բ

ա) Դո՛ւրս գրիր նյութական և քերականական խոսքիմասային իմաստով տասական բառ և բնութագրի՛ր:

բ) Ուշադրությո՛ւն դարձրու հատուկ անվանումներին ու դրանց հոլովական դրսևորմանը. արդյոք դրանք տեքստում որպես հասարակ անուն գործածվելիս նո՞ւյնկերպ կհոլովվեին. հիմնավորի՛ր:

գ) Արտագրի՛ր քո տեսրում հոդ ունեցող բառերն ու բառակապակցությունները՝ որոշելով հոդի տեսակը:

դ) Դո՛ւրս գրիր տեքստից վերաբերական բառերը և բացատրի՛ր նրանց դերն ու կարևորությունը խոսքում:

Գ

ա) Դո՛ւրս գրի՛ր տեքստից ընդգծված բառակապակցությունները և բնութագրի՛ր:

բ) Բնութագրի՛ր նախադասությունների տեսակներն ըստ նպատակադրման:

գ) Գոյականական անդամի ի՞նչ լրացումներ կան տեքստում. օրինակներ դո՛ւրս գրիր քո տետրում և բացատրի՛ր:

դ) Դո՛ւրս գրիր զրույցից տասը ենթակա՝ որոշելով նրա արտահայտությունը, և տասը ստորոգյալ՝ որոշելով տեսակը:

Առաջադրանքներ

Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր օրինակներ, որտեղ՝

1. ենթական արտահայտված է որոշիչ կամ ստացական հոդերով,
2. ստորոգյալը համաձայնած լինի բազմակի ենթակաների հետ,
3. ենթական ունենա թվականով և դերանունով արտահայտված որոշիչ:

Տեքստային աշխատանք

Հնդկական առակ

Դրոնան նետաձգության մեծ վարպետ էր և շատ աշակերտների էր ուսուցանում:

Մի անգամ նա ծառից թիրախ կախեց ու աշակերտներից յուրաքանչյուրին հարցրեց, թե նա ինչ է տեսնում:

Մեկը պատասխանեց.

- Ես տեսնում եմ ծառը և նրանից կախված թիրախը:

Մեկ ուրիշն ասաց.

- Ես տեսնում եմ ծառի բունը, տերևները, արևը, երկնքում՝ թռչունները...

Մյուսները պատասխանեցին մոտավորապես նույն ձևով: Այնուհետև Դրոնան մոտեցավ իր լավագույն աշակերտ Արջունային ու հարցրեց.

- Իսկ դո՞ւ ինչ ես տեսնում:

- Ես չեմ կարողանում թիրախից բացի ուրիշ բան տեսնել,- հետևեց պատասխանը:

Դրոնան շրջվեց դեպի մնացած աշակերտներն ու ասաց

- Միայն այսպիսի մարդը կարող է իր նպատակին հասնել:

Հարցեր և առաջադրանքներ

Ա

ա) Կարդա՛ և վերնագրի՛ր այս առակը:

բ) Ի՞նչ նպատակներ ունես դու. գրավոր շարադրի՛ր քո մտքերը:

գ) Ո՞րն է ըստ քեզ նպատակին հասնելու ամենաճիշտ ուղին:

Բ

ա) *Նպատակ* բառի ուրիշ ի՞նչ հոմանիշներ գիտես. օգտագործի՛ր դրանք նախադասությունների մեջ:

բ) Ըստ նպատակադրման՝ նախադասության ի՞նչ տեսակներ կան տրված տեքստում:

գ) Դո՛ւրս գրիր պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունները:

դ) Դո՛ւրս գրիր ենթակաները և նշի՛ր՝ ինչով են արտահայտված:

ե) Դո՛ւրս գրիր ստորոգյալները, որոշի՛ր տեսակը:

Ամփոփիչ հարցեր

1. Որո՞նք են նախադասության գլխավոր անդամները:

2. Ի՞նչ է ցույց տալիս ենթական, և ինչո՞վ է այն արտահայտվում:

3. Որո՞նք են ստորոգյալի տեսակները:

4. Ո՞րն է կոչվում պարզ ստորոգյալ. թվարկի՛ր արտահայտության ձևերը:

5. Ո՞րն է կոչվում բաղադրյալ ստորոգյալ. թվարկի՛ր արտահայտության ձևերը:



ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Բացի ենթակայից և ստորոգյալից, նախադասության մյուս անդամները **լրացումներ** կամ **երկրորդական անդամներ** են:

Օրինակ՝

Մեր դասարանի Սարգիսը **լավ** է սովորում:

Երկրորդական անդամները լրացնում կամ պարզաբանում են գլխավոր անդամներին: Եթե երկրորդական անդամները իրենց հերթին ունեն լրացումներ, ապա դրանք արդեն **լրացման լրացումներ** են:

Օրինակ՝

Արմենի գիրքը կորավ:

Արմենի-լրացում

Ծույլիկ Արմենի նոր գիրքը կորավ:

Արմենի, նոր - լրացումներ

ծույլիկ - լրացման լրացում

Երկրորդական անդամների մի մասը լրացնում է ենթակային, մի մասը՝ ստորոգյալին:

Այգու ծառերը **քամուց** մրսում են:

Այգու բառը լրացնում է **ծառերը** գոյական-ենթակային, իսկ **քամուց** բառը՝ **մրսում են** բայ-ստորոգյալին, ըստ այդմ էլ նախադասության երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի՝ **գոյականական** և **բայական** անդամի լրացումներ:

Վարժություններ

ա) Տրված պարզ նախադասությունները դարձրո՛ւ ընդարձակ՝ ավելացնելով երկրորդական անդամներ:

Զգեստս պատռվեց: Երեխաները լռեցին: Անտառը երգում է: Որսորդը կրակեց: Պատմությունը հիշեցնում է:

բ) Կրճատի՛ր նախադասության բոլոր երկրորդական անդամները:

Մայր մտնող արևի պես աննկատ ծերանում է բոլորին սիրելի մայրս:

Հմուտ որսորդ Հայկի դիպուկ կրակոցը անմիջապես տապալեց հսկա արջին:

Իմ դասընկեր Արամը այսօր դարձյալ չէր եկել այդ կարևոր դասին:

Մեր փողոցի տղաները մոտակա անտառից փոքրիկ նապաստակ էին բռնել:

գ) Կազմի՛ր պարզ ընդարձակ նախադասություններ՝ օգտագործելով նաև հետևյալ բառերը՝ ***բարձունք, քամի, արտ, խշշալ, սաղարթ, օրորվել, առատ, հասկ, արփի, շողարձակել, մեղմորեն, կեսօր, երփներանգ:***

դ) Արտագրի՛ր նախադասությունները՝ ընդգծելով գլխավոր անդամները մեկ, երկրորդական անդամները՝ երկու գծով:

1. Ցնցոտիավոր մի երեխա իջնում էր փողոցով: Գինետան խոհանոցում ապստամբները կրակ էին վառել: Գավրոշը մի հայացքով գնահատեց իրավիճակը: Ամեն մեկը գրավել էր իր մարտական դիրքը: Մի բոպե անց փողոցի կենտրոնում կանգնած թնդանոթը կրակում էր: Ծուխը մշուշի պես պատել էր փողոցը: Գավրոշի համար այդ ծուխն օգտակար եղավ (թարգմ.):

2. Դռնապանները առավոտյան մաքրում էին մայթերի ձյունը, հաստ խանութպանը խնամքով սրբում էր ցուցափեղկի ապակիները, և շրջիկ կաթնավաճառը ծեծում էր հերթական դուռը: Գերմանական ճշտապահությամբ արթնացել էր քաղաքը, և գերմանական ճշտապահությամբ ամեն մեկը կպել էր իր գործին (Բ.Վ.):

Ա.Գոյականական անդամի լրացումներ

Նախադասության այն անդամը, որն արտահայտված է գոյականով կամ գոյականի դեր կատարող որևէ այլ բառով, կոչվում է **գոյականական անդամ:**

Օրինակներ՝

Այդ չարաճճի **տղայի** անլուրջ **պահվածքը** խստապահանջ **ուսուցիչներին** դուր չէր գալիս:

Վառ **կարմիրը** իմ սիրած գույնն է, մինչդեռ ընկերուհիս նախընտրում է **սևը**:

Անվերջ **շատախոսողը** միանգամից լռեց:

Տրված օրինակներում ընդգծված բառերը գոյականական անդամներ են՝ արտահայտված գոյականով և գոյականաբար գործածված ածականով ու դերբայով:

Նախադասության մեջ գոյականական անդամը ունենում է այնպիսի լրացումներ, որոնք ցույց են տալիս գոյականով արտահայտված անդամի որևէ հատկանիշը, նրա պատկանելությունը և ով, ինչ լինելը:

Այդ լրացումներն են **որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը**:

1.ՈՐՈՇԻՉ

Գոյականական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս հատկանիշ (որակ, որպիսություն, չափ, քանակ), կոչվում է **որոշիչ**:

Օրինակ՝

Վարագույրի վրա **ամբողջ** հասակով նկարված էր մի **վիթխարի** սերմնացան (Ակ. Բ.)

Երևակայական թշնամին աչքերի առաջ դառնում էր շոշափելի (Բ.Վ.):

Որոշիչ ունեցող անդամը կոչվում է **որոշյալ:** Բերված օրինակներում **ամբողջ, վիթխարի, երևակայական** բառերը որոշիչներ են և լրացնում են **հասակ, սերմնացան** և **թշնամի** որոշյալներին:

Որոշիչը դրվում է որոշյալից առաջ և պատասխանում է **ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, ի՞նչ արած, ի՞նչ եղած** և նման այլ հարցերի:

Որոշիչն արտահայտվում է՝

ա) որակական և հարաբերական բոլոր ածականներով, ինչպես՝ ***տխուր*** *եղանակ,* ***քնքուշ*** *բնավորություն,* ***վայրի*** *աղջիկ,* ***հայրական*** *պահվածք,* ***լեռնային*** *օդ,* ***քարե*** *շենք,*

բ) գոյականի ուղղական, մասամբ սեռական, բացառական, գործիական հոլովներով, ինչպես՝ ***ծով*** *աչքեր,* ***քար*** *սիրտ,* ***հրաշք*** *աղջիկ,* ***աղվես*** *մարդ,* ***սարի*** *ծամոն,* ***ուրցի*** *թեյ,* ***փայտից*** *գդալ,* ***չամիչով*** *փլավ,*

գ) առարկայի հատկանշային իմաստ ունեցող բոլոր դերանուններով, ինչպես՝ ***այն*** *տղան,* ***այնպիսի*** *մտքեր,* ***նույնպիսի*** *վերաբերմունք,* ***յուրաքանչյուր*** *մարդ,* ***ոչ մի*** *արտահայտություն,* ***ի՞նչ*** *հարց,* ***համայն*** *աշխարհում,* ***ո՞ր*** *տունը,*

դ) թվականի բոլոր տեսակներով, ինչպես՝ ***երեք*** *խնձոր,* ***հինգ*** *տարի,* ***առաջին*** *դասարան,* ***երկուական*** *գիրք,* ***յոթ-ութ*** *օր,*

ե) հարակատար, ենթակայական, անորոշ դերբայներով, ինչպես՝ ***քնած*** *դշխուհի,* ***գրելու*** *թուղթ,* ***վազող*** *տող,*

զ) ազատ և կայուն դարձվածային բառակապակցություններով, ինչպես՝ ***կարմիր ծաղիկներով*** *գլխաշոր,* ***բարձր գագաթներով*** *լեռներ,* ***մեջքը բարակ*** *աղջիկ,* ***խելքից պակաս*** *հարևան,* ***երկնքում վառվող*** *աստղեր,* ***մեկ օրում գրած*** *գիրք,* ***տարուց տարի ձգձգվող*** *աշխատանք,* ***սնդուկում պահված*** *լուսանկար...*

ե) կապային կապակցությամբ, ինչպես՝ ***վարդի նման*** *այտեր,* ***հանուն ընկերության*** *պահվածք:*

Առաջադրանքներ

ա) Վերևում տրված կապակցությունների տեսակներով ինքդ կազմի՛ր կամ դո՛ւրս գրիր օրինակներ գեղարվեստական գրականությունից:

բ) Վերհիշի՛ր մակդիրի սահմանումը և կազմի՛ր մակդիր-որոշիչներ:

Որոշչի կետադրությունը

Նախադաս դիրքում որոշիչը չի տրոհվում:

Համասեռ որոշիչները իրարից տրոհվում են ստորակետով:

Օրինակ՝ ***մեղմ, քնքուշ*** *բնավորություն,* ***տխուր, բարի*** *աչքեր,* ***վիթխարի, հաղթահասակ*** *տղամարդ,* ***կուռ, համաչափ*** *շարքեր:*

Եթե որոշիչներից մեկը հարաբերական, մյուսը որակական ածական է, իրարից չեն տրոհվում, ինչպես՝ ***մայրական ջերմ*** *սիրտ,* ***լեռնային մաքուր*** *օդ,* ***ասպնջական համեստ*** *օջախ:*

Գույն ցույց տվող ածականների հետ դրվող որոշիչները նախընտրելի է չտրոհել:

Օրինակ՝ ***կարմիր վառման*** *դրոշ,* ***սև անհնշան*** *բծեր,* ***սպիտակ ժանյակավոր*** *վերնաշապիկ,* ***մոխրագույն մահուդե*** *վերարկու:*

Որոշիչ դերբայական դարձվածի և նրան հաջորդող որոշչի միջև ստորակետ չի դրվում:

Օրինակ՝ ***բարձունքից թափվող հուժկու*** *ջրվեժ,* ***գետից բռնած խոշոր*** *ձուկ,* ***աչքերում թաքցրած արհամարհական*** *վերաբերմունք*:

Դերբայ + ածական որոշիչ կապակցությունը չի տրոհվում:

Օրինակ՝ ***չկտրված գանգուր*** *մազեր,* ***չընդհատվող միալար*** *ձայն,* ***նիրհող վայրի*** *անտառ:*

Ածական + դերբայ որոշչային կապակցությունները երբեմն տրոհվում են:

Օրինակ՝ ***միալար, չընդհատվող*** *ձայն,* ***գանգուր, չկտրված*** *մազեր:*

Եթե որոշիչը ընկնում է որոշյալից հետո, կոչվում է **հետադաս որոշիչ:**

Հետադաս որոշիչը որոշյալից բաժանվում է բութով, իսկ նախադասության մնացած մասից՝ ստորակետով:

Հետադաս որոշիչը չի տրոհվում, եթե արտահայտված է մեկ բառով:

Օրինակ՝ Մի աղջիկ **գեղեցիկ** հմայեց տղային:

Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է՝

բազմակի որոշիչներով, ինչպես՝ *Քայլում էր մի երիտասարդ տիկին՝* ***տակավին դեռատի, քնքուշ, նրբիրան:***

բառակապակցությամբ, ինչպես՝ *Ամպերի ծվենները՝* ***ճերմակ փետուրներով,*** *աստիճանաբար տարրալուծվում էին:*

դերբայական դարձվածով, ինչպես՝ *Լեռան փեշին ապարանքն էր՝* ***դարերի փոշին կամարներին դրած:***

Երբեմն հետադաս որոշիչները իրենց կազմում ունենում են և՛ բառ, և՛ բառակապակցություն, և՛ դերբայական դարձված, ինչպես՝

Դարակներում շարված էին հացեր՝ ***թարմ, տաք-տաք,*** *իսկ հացերի կողքին քնած էր հացթուխը՝* ***ալյուրոտված, ձեռքերը խմորոտ:***

Որտե՞ղ էր տեսել նման մի դեմք՝ ***բարձր, ճերմակ ճակատով, խոշոր աչքերով:***

Առաջադրանք

Կազմի՛ր երկուական նախադասություն, որոնցում որոշիչն արտահայտված լինի՝

ա) գոյականի տարբեր հոլովներով,

բ) հատկանիշ ցույց տվող որոշյալ դերանուններով,

գ) անորոշ, հարակատար և ենթակայական դերբայներով:

Վարժություն

Գտի՛ր որոշիչները և որոշի՛ր, թե ինչ խոսքի մասով են նրանք արտահայտվել:

...Եկե՛ք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած-սնած,
Մեզ աշխարհում շահած-պահած,
Մեզնից երբեք չկշտացած,
Փոշի սրբող - լվացք անող,
Անվերջ դատող - անվերջ բանող
Այս ձեռքերը,
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մետաքսի պես
Խա՜ս ձեռքերը... (Պ. Ս.)

Բայց այն ձորում ամեն տարի, ամեն գարնան բացվելուն,
Երկու ծաղիկ են հայտնվում, երկու կակաչ տխրանուն:

Ասում են, թե չկար երկրում ոչ մի ծաղիկ՝ սիրտը սև,
Այն օրվանից աշխարհ եկան կակաչները սրտասև (Հ. Ճ.):

Ցաված սիրտըս երգեր հյուսեց,
Երգեց անուշ ու տխուր,
Վիշտըս հալվեց, արցունք հոսեց,
Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր (Ավ. Իս.)

Հոգնատանջ սրտով նստեցի մենակ
Աշխարհում աղոտ,
Անհայտ կողմերի մութ ճանապարհին,
Ավեր շենքերի մոխիրների մոտ,
Աշնան օրերի գունատ, մահացող
Ծաղիկների մեջ, ցուրտ հողի վրա,
Ծանր երկնքի տաղտկորեն լացող
Անձրևների տակ... (Վ. Տ.)

Ստեղծագործական աշխատանք

ա) Գրի՛ր կապակցված խոսք՝ *«Նկարչի արվեստանոցում»* վերնագրով՝ առավելագույնս շատ որոշիչներ գործածելով:

բ) Հայ գրականության քո անցած բնագրերից դո՛ւրս գրիր որոշիչների (ոչ միայն մակդիր) օրինակներ:

Վարժություններ

ա) Գտի՛ր հետադաս որոշիչները և կետադրի՛ր:

բ) Գտի՛ր ստորոգյալները, որոշի՛ր դրանց տեսակը:

Ամառային արևոտ օր էր պայծառ ու տաք:

Ինչ էլ լինի մահը մահ է դաժան ու սահմռկեցուցիչ:

Ուսից կախված էր լեփ-լեցուն զինվորական մի պայուսակ բոլորովին նոր ու չօգտագործված:

Թանձր աղամամութ էր վեհանիստ հանդարտ:

Մի օր սուրճի արևելյան յուրօրինակ սպասք էր գնել փոքրիկ բաժակներով ոսկեզօծ սրճամանով:

Շիրվանզադեն կենսուրախ մարդ էր զվարթ ու սրամիտ:

Հանկարծ երկնքի հարավարևմտյան մասում մազանման մի գիծ երևաց նույնիսկ ակնդետ նայելիս հազիվ նշմարվող:

Շրջակա դաշտը երփներանգ ծաղիկներով զարդարված բարձունքներն ու ձորերը շնկշնկան զեփյուռով հովասուն քչքչան աղբյուրները պաղպաջուն ու զուլալ ստեղծել էին մի հովվերգական տեսարան:

2.ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Գոյականական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս պատկանելություն, սերում, ծագում, վերաբերություն, կոչվում է հատկացուցիչ:

Օրինակ՝

Մարզիկի ելույթը հիացրեց դահլիճում հավաքվածներին:

Քերովբեի սուր հայացքը շոշափում էր զորավարին:

Հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով և պատասխանում է ***ու՞մ, ինչի՞, ինչերի՞*** հարցերին:

Օրինակ՝

Արթուրի *վերաբերմունքը,* ***թռչունների*** *երամը,* ***բազեի*** *ճախրը,* ***ու՞մ*** *պայմանը,* ***լացողի*** *ձայնը,* ***ոչ ոքի*** *կարծիքը,* ***յուրաքանչյուրի*** *խոսքը:*

Ընդգծված անդամները հատկացուցիչներ են:

Հատկացուցիչ ունեցող անդամը կոչվում է **հատկացյալ**:

Ուղիղ շարադասության դեպքում հատկացուցիչը միշտ դրվում է նախադաս:

Իմացի՛ր

Գեղարվեստական խոսքում երբեմն հատկացուցիչը կիրառվում է հետադաս՝ շրջուն շարադասությամբ, ինչպես՝

Քո՛ւյր իմ, *ամոթի՛ր վշտերս թաքուն...*

*Հատկացուցիչը արտահայտվում է՝

ա) գոյականով, ինչպես՝ ***ընտանիքի հոգսը, երեխայի ձայնը, երգչուհու հուզմունքը,***

բ) դերանունով, ինչպես՝ ***իմ կարծիքը, նրանց խոսքը, ոչ մեկի հարցը,***

գ) գոյականաբար հանդես եկող ածականով, թվականով, անկախ դեր-բայներով, ինչպես՝ ***դեղինի երանգները, երեքի վերաբերմունքը, նստածի կարծիքը:***

Եթե հատկացուցիչը եզակի առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանուն է, ապա հատկացուցչին կարող են փոխարինել **ս** և **դ** ստացական հոդերը, օրինակ՝ ***իմ գրքերը - գրքերս, քո վերաբերմունքը - վերաբերմունքդ*** և այլն:

Անձնական դերանվան հոգնակի թվով արտահայտված հատկացուցչին փոխարինելիս **ս** և **դ** հոդերից առաջ միավանկ բառերը ևս ստանում են **- ներ** վերջավորություն, ինչպես՝ ***մեր խոսքերը - խոսքներս, ձեր սրտերը - սրտներդ*** և այլն:

Իմացի՛ր

Ստացական հոդի առկայության դեպքում հատկացուցչի գործածությունը սխալ է, ինչպես՝

ճիշտ	սխալ
Իմ տունը գյուղի ծայրին է	*Իմ տունս գյուղի ծայրին է:*
Տունս գյուղի ծայրին է:	

Հատկացուցչի կետադրությունը

Հատկացուցչի և հատկացյալի միջև հաճախ ընկնում է գոյական կամ դերանուն պարունակող որոշիչ բառակապակցություն կամ դերբայական դարձված: Այդ դեպքում հատկացուցչի վրա դրվում է բութ, ինչպես՝

Արթուրի՝ ***ներկաներին ուղղված*** *վերաբերմունքը, թռչունների՝* ***ամպերի մեջ սավառնող*** *երամը, բազեի՝* ***որսորդի զարկից թուլացած*** *ճախրը, ու՞մ՝* ***մեզ չբավարարող*** *պայմանը, լացողի՝* ***հուզմունքից կերկեր*** *ձայնը, յուրաքանչյուրի՝* ***ինձ ուղղված*** *խոսքը:*

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր նախադասություններ վերևում տրված կապակցություններով:

բ) Կազմի՛ր երկուական նախադասություն, որոնցում հատկացուցիչն արտահայտված լինի՝

գոյականով,

դերանունով,
փոխանուն ածականով և թվականով,
դերբայով:

Վարժություններ

ա) Դո՛ւրս գրիր հատկացուցիչները և որոշի՛ր, թե ինչով են արտահայտված:

բ) Դո՛ւրս գրիր վերաբերականները և որոշի՛ր դրանց տեսակը:

գ)* Կապային ի՞նչ կապակցություններ կան. դո՛ւրս գրիր և որոշի՛ր կապերի տեսակները:

1.Երեկոյան կողմ աղվեսը պառկեց հեռագրասյան մոտ՝ ձորակի խորքում՝ չոր ավելուկի թփերի խիտ ու բարձր կղզյակում... Այստեղ որոնում էր ուտելիքի մնացորդներ, որ վագոնների լուսամուտներից շպրտում էին գրեթե բոլոր ուղևորները...-Մեր պարտքն է հայտնել բոլորին, դրանից հետո թող նեղանան...-Գնա՛, սա քո տեղը չէ, գնա՛ քո տափաստանը... (Հ. Ա.)

Մարդկանց ամենամեծ հավաքատեղին է շուկան, և ուրեմն այստեղ միայն առուծախ չէ: Առավոտ կանուխ, երբ շուկայի դատարկ հրապարակում ցախավելների տակից ելած փոշի է լինում, երբ այստեղից դեռ վռնդված չեն լինում քաղաքի անօթևան շները, կաղ Վասոն բաց է անում խորտկարանի դուռը: Սրա մի ոտքը մյուսից կարճ է: Վասոյի հայրը իբր դաժան մարդ է եղել, և երբ իմացել է նորածին մանչի արատի մասին, վճռել է խեղդել...

Շուկայում մի թեթև, հազիվ նկատելի շարժում կա..., և դա, անշուշտ, զգում են շուկայի մարդիկ (Ռ. Հ.):

դ) Գտի՛ր հատկացուցիչները և որոշիչ հոդ ունեցող հատկացյալները. հոդը փոխարինի՛ր հատկացուցիչով:

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր,
Աչերիդ մեջ շող ցայեմ.
Լուռ գիշերվա անուշ հովեր,
Փունջ ծամերդ փայփայեմ...

*

Նա փերին է զմրուխտ գետի,
Ցնորքներիս սիրելին.
Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազելին...

*

Սիրտը երկինք է...
Ամեն արարած,
Աստղ ունի այնտեղ-
Գահ ունի այնտեղ...

*

Երբ քունըդ գա, լուռ գիշերով
Հոգիդ գըրկեմ, համբույր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով,
Լամ ու խընդամ, մայրի՛կ ջան...(Ավ. Իս.)

ե) Գտի՛ր որոշիչ և հատկացուցիչ լրացումները, կետադրի՛ր:

Նրա կոպիտ **գործվածքից** կարված շապիկը հազիվ էր ծածկում մկանուտ կրծքավանդակը:

Որմնախորշի սարդոստայնով պատված անկյուններից մեկում դրված էր մի դանակ արդեն **ժանգոտած** շեղբով:

Անտառի անձրևներից **գրեթե** չերևացող **արահետներով** նրա կողքին ձիավարում էր մի գեղեցիկ աղջիկ հազիվ քսան տարեկան արձակ մազերով:

Սպարապետի **բոցկլտացող** աչքերով ճերմակը մրրիկի **նման** սուրաց **առաջ**:

Մոնակոյի **մյուս** երկրներին հայտնի երեք տարրերն են բուսաբանական այգին իր յուրահատուկ նմուշներով թանգարանը **օվկիանոսագիտությանը** նվիրված և խաղատունը:

Վաղը թերթերը **կպատմեն** մի մարդու և մի ամբողջ ժողովրդի ահավոր ողիսականը:

Թանգարանը ինքնին մի վիթխարի ակվարիում է **որի** թեթև կոհակներով ծփացող ջրերում **վխտում են** բազմաթիվ ձկներ:

Այս բոլոր սիրելի դեմքերի մեջ մի կին էլ **կար** արագաշարժ **չափազանց** ուրախ և բարձր ձայնով խոսող:

Խորհրդավոր **այդ** մարդը խոնարհվեց Աստվածամոր վառվող մոմերի կրակից սևացած պատկերի **առջև**:

Իսկ նրա մեր տուն այդքան զգուշավոր մտնելու պատճառը այն էր որ **հորաքույրս** դերասանուհի էր:

զ) Ընդգծված անդամները վերլուծի՛ր ձևաբանորեն:

3. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Նախադասության՝ առարկա ցույց տվող անդամի ով կամ ինչ լինելը արտահայտող լրացումը կոչվում է բացահայտիչ:

Օրինակ՝

Եկեղեցու բակում հավաքվել էին երեխաները՝ **մի խումբ որբ մանուկներ:**

Առաջ եկավ նրանց գլխավորը՝ **Օտտո Ռայնիկեն**, և կանգնեց ատյանի դեմ:

Տրված նախադասություններում ընդգծված անդամները՝ **մի խումբ որբ մանուկներ** և **Օտտո Ռայնիկեն**, բացահայտիչներ են, որոնք բացահայտում են **երեխաները** և **գլխավորը** լրացյալներին:

Նախադասության այն անդամը, որն ունի բացահայտիչ, կոչվում է **բացահայտյալ:** Տրված օրինակներում **գլխավորը** և **երեխաները** բացահայտյալներ են:

Բացահայտիչն ունի կայուն շարադասություն. միշտ դրվում է բացահայտյալից հետո:

Հիշի՛ր

Եթե որոշիչն ու հատկացուցիչը դրվում են որոշյալից ու հատկացյալից առաջ, ապա բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո. այն միշտ հետադաս է:

Բացահայտիչը լինում է **բուն, մասնական և մասնավորող պարագայական**:

1. **Արմինեն՝ ընկերուհիս** (բուն), դասի չէր եկել:

2. Արմինեն՝ **որպես օրինակելի աշակերտուհի** (մասնական), ստացավ գովասանագիր:

3. Սարերում՝ **վրանների տակ** (մասնավորող պարագայական), ապրում են հովիվները:

1.Բուն բացահայտիչ

Բուն բացահայտիչը ամբողջությամբ բացահայտյալի կրկնությունն է և պահանջում է նույն հարցը:

Իմացի՛ր

Բացահայտյալը նախադասության մեջ կարող է հանդես գալ իբրև ենթակա, հատկացուցիչ, խնդիր և այլն, մինչդեռ բացահայտիչը միշտ նույն անունն ունի, այն է՝ գոյականական անդամի լրացում՝ բացահայտիչ:

Օրինակ՝

Զարմանահրաշը, սակայն, **Արարատն** է՝ լեռնակերտ փոքրիկ աշխարհի **բարձունքը**:

* Բուն բացահայտիչը հաճախ կարող է իր հերթին ունենալ բացահայտիչ, և նրա համար էլ ինքը դիտվի բացահայտյալ, ինչպես՝

Խալդ, Թեյշեբա աստվածների զորությամբ ես՝ **Տուշպա մայրաքաղաքի և համայն Բիայնայի տիրակալս՝ մեծն Մենուայի որդին,** գոչում եմ...

*Երբեմն իբրև բացահայտյալ է հանդես գալիս որևէ ընդհանրական բառ, որը բացահայտվում է մի քանի բացահայտիչներով. վերջիններս հոլովով ու թվով երբեմն չեն համաձայնում բացահայտյալին և իրար կապակցվում են թե՛ շաղկապով, թե՛ առանց շաղկապի:

Օրինակ՝

Իր ապրած կյանքի ընթացքում նա տեսել էր **ամեն ինչ՝** սեր, դավաճանություն, ատելություն, քծնանք ու խաբեություն:

Մենք՝ **մայրս, հայրս, ես և իմ երկու մորաքույրը**, բեռնանավի վրա ենք:

Եկեղեցու գավթում հավաքվել էին **ամենքը**՝ կին թե տղամարդ, ծեր թե մանուկ:

Իմացի՛ր

Բուն բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնվում են դեմքով, թվով և հոլովով:

Օրինակ՝

Ես՝ ութերորդ դասարանի աշակերտս, պատրաստել եմ մի հետաքրքիր առաջարկ:

Ինձ՝ ութերորդ դասարանի աշակերտիս, որոշեցին վստահել այդ լուրջ գործը:

Քեզանից՝ երեխաների մեջ ավագիցդ, շատ բան է կախված:

* Բուն բացահայտիչը հաճախ ընկնում է ոչ թե բացահայտյալից, այլ օժանդակ բայից հետո, ինչպես՝

Նա սև մազերով ու գունատ դեմքով տասներկուամյա մի գեղեցիկ տղա էր՝ **երկաթուղու ծառայողի ավագ որդին**:

Բացահայտչի կետադրությունը

Բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բութով, նախադասության մնացած մասից՝ ստորակետով:

Օրինակ՝

Սակայն ավազանում ջուր չկա, այլ աղբի **թափոններ**՝ ծխախոտի մնացորդներ, դատարկ շշեր:

*Բացահայտչից հետո չի դրվում ստորակետ հետևյալ դեպքերում.

ա) Եթե բացահայտիչը դրված է սեռական հոլովով:

Օրինակ՝

Հիվանդանոցի պահակի՝ **ծեր Մամիկոնի** հոգում թաքուն մի վախ կար:

բ) Եթե բացահայտչին հաջորդում է կապ՝ ***առաջ, համար, մասին, հետ, միջոցով*** և այլն:

Օրինակ՝

Վերգինեի՝ ***կրտսեր մորաքրոջս առաջ*** *ինձ մեղավոր էի զգում:*

գ) Եթե բացահայտչից հետո դրվում է ***եմ*** օժանդակ բայը կամ ***էլ*** վերաբերականը:

Օրինակ՝

Սայաթ-Նովան՝ ***մեծ գուսանն էր*** *ժողովրդի միակ ուրախությունը:*

Արմենը՝ ***ընկերս էլ*** *մասնակցեց այդ միջոցառմանը:*

Առաջադրանք

Կազմի՛ր բուն բացահայտիչով նախադասություններ՝ իբրև բացահայտյալ օգտագործելով *բոլորը, ոչ ոք, հարևանուհի, Վայոց ձորի մարզ, Հայաստանի*

Հանրապետություն, Անդրեաս, Գյումրի, Արագած, ցուցահանդես **բառերն ու բառակապակցությունները:**

2.Մասնական բացահայտիչ

Այս բացահայտիչը ձևավորվում է **որպես, իբրև** կապերով, չունի կայուն շարադասություն և կարող է գործածվել՝

առաջադաս՝

Որպես փորձառու որսորդ՝ միայն քեռի Համոն ճիշտ կողմնորոշվեց:

միջադաս՝

Միայն քեռի Համոն՝ **որպես փորձառու որսորդ,** ճիշտ կողմնորոշվեց:

վերջադաս՝

Ճիշտ կողմնորոշվեց միայն քեռի Համոն՝ **որպես փորձառու որսորդ**[9]:

Առաջադրանք

Կազմի՛ր մասնական բացահայտիչով նախադասություններ՝ իբրև բացահայտյալ օգտագործելով *զավակներ, մայր, հայրենիք, դպրոց, ընկերական շրջապատ, քննություն* բառերն ու բառակապակցությունները:

3.Մասնավորող պարագայական բացահայտիչ

Բացահայտչի այս տեսակը կոնկրետացնում է տեղ, ժամանակ, երբեմն ձև ցույց տվող բացահայտյալին: Այդ կապակցությունները իրար երբեմն համաձայնում են, երբեմն՝ ոչ, ինչպես՝

Սարերում՝ վրանների տակ, *հանգիստ քնել են մարդիկ* նախադասության մեջ **սարերում՝ վրանների տակ** կապակցության անդամների միջև կա համաձայնություն: Իսկ **Այնտեղ՝ վրանների տակ,** քնած են մարդիկ նախադասության մեջ ընդգծված անդամները իրար չեն համաձայնել: Անշուշտ սրանք նույն կարգի կապակցություններ են, բացահայտչի մի յուրահատուկ դրսևորում՝ կոնկրետացնող պարագա: Այսինքն՝ բացահայտյալը ունի մասնավորող պարագա բացահայտիչ.

1.**տեղի՝**

Ձորի երկու կողմերում՝ **թավուտ անտառների մեջ,** արջեր շատ են լինում:

2.**ժամանակի՝**

Վաղ առավոտյան՝ **ուղիղ ժամը վեցին,** արթնանում է պապս:

---

[9] Պետք է նկատի ունենալ, որ մասնական բացահայտիչները հաճախ գրեթե չեն տարբերվում նույն կապերով ձևավորված հիմունքի պարագաներից (հմմտ. *Միայն քեռի Համոն ճիշտ կողմնորոշվեց՝ իբրև փորձառու որսորդ)*, ինչպես նաև ձևի և համեմատության այն պարագաներից, որոնք, նույն կապերով ձևավորված լինելով, կարող են փոխարինվել ***պես, նման*** կապերով (հմմտ.՝ *Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև, Մի ստվեր անցավ...)*: Բայց ընդհանրապես, ուսուցումը հեշտացնելու միտումով պետք չէ այս իմաստային դրսևորումները տարանջատել, և միանգամայն ճիշտ է դրանք բոլորը, անկախ դիրքից, բութով, իսկ միջադաս դիրքում բութ-ստորակետով տրոհելը:

*Պարագայական բացահայտիչը երբեմն ինքն էլ է ունենում իր բացահայտիչը, որն իրենից ևս տրոհվում է բութով:

Օրինակ՝ Հեռու սարերում՝ **վրանների տակ՝ չոր խսիրների վրա,** մի քանի ժամ միայն ննջում են հովիվները՝ ականջը դրսի ձայներին:

*Բացահայտիչները, իրենց հերթին, կարող են ունենալ հետադաս որոշիչ լրացում:

Օրինակ՝ **Որպես մի այլանդակ հրեշ՝ լի ամենայն զարհուրանքով,** կանգնած էր Անհուշ բերդը յուր բարձր քարեղեն ստորոտի վրա:

Դա հանգուցյալի երկրորդ որդին էր՝ **Միքայելը**՝ քսանութ տարեկան **մի երիտասարդ՝ նուրբ կազմվածքով, ածխի պես սև մազերով, նորաձև ընչացքով:**

*Չպետք է շփոթել բացահայտիչը բազմակի անդամի հետ, մանավանդ այն դեպքում, երբ բազմակի անդամը կրկնվում է նույն բառով՝ արտահայտելով ոճական սաստկացում:

Օրինակ՝ Զգացվեց, որ ծավալվելու է որևէ վեհ մի նվագ՝ **երկարահունչ մի խոսք, մեծ հոգու խոսք**:

Մոլեգնել սկսեց **կռիվը, այդ ռամկական անարվեստ կռիվը**:

Եվ հանկարծ լսեց նա **մի երգ, մի հիասքանչ ու թախծոտ երգ**:

Ու կանգնած էր նա բիբլիական երկնահաս լեռան գագաթին՝ **ամպերից ու աշխարհից բարձր, անհասանելի բարձր:**

Առաջադրանքներ

ա) Կետադրի՛ր տրված նախադասությունները՝ ընդգծելով բացահայտիչները:

բ) Որոշի՛ր բացահայտիչների տեսակները:

գ) Դո՛ւրս գրիր նախադասությունների ենթականերն ու ստորոգյալները՝ որոշելով ենթակայի արտահայտությունը և ստորոգյալի տեսակը:

Հաջորդ օրը շոգ կեսօրից հետո երբ մեղմ սյուքն էր շնկշնկում վերադառնում է երիտասարդը շքեղ կոստյումով փողկապը վզին:

Հայրս մեզ երեխաներիս համար գնում էր խաշխաշով զարդարված բլիթներ:

Իբրև փորձված զինվոր նա խրատում էր նրանց ու ոգևորում:

Հինավուրց բերդից դեպի հյուսիս-արևելք բլրի գառիթափ լանջին կանգնած է Առաքելոց եկեղեցին որպես քարից կառուցված մոխրագույն թռչուն:

Ու կա մի զարմանալի քարաշխարհ Զանգեզուր բյուրավոր աղբյուրների վրա շրջված մի վիթխարի քարաստան Ծաղկեվանք և կա հարթության մեջ ժայթքած քարե զույգ շատրվան Արարատ:

Այդ օրը դասերից հետո դպրոցի տեսուչը կանչեց ինձ որպես լավ աշակերտի և մանրամասն հարցեր տվեց:

Արթնանում էի վաղորդայնին լուսաբացի հետ երբ դեռ սարսռեցնող ցուրտ էր:

Ամբողջ մի դար հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը և տասնյակներով էին հաշվվում նրա թոռներն ու ծոռները:

Հազար ինը հարյուր վաթսունյոթ թվականին հունիսի քսանիններին Գառնու տաճարի շրջակայքում էինք ձորի լանջերին:

Ջոնսը սիրում էր ձյունը միլիարդավոր տարիների այդ առօրյա հրաշքը թեև մարդիկ ցրտից կուչուձիգ էին անում:

Վարժություններ

ա) Գտի՛ր բացահայտիչները, որոշի՛ր դրանց տեսակը:

բ) Դո՛ւրս գրիր որոշիչներն ու հատկացուցիչները՝ որոշելով դրանց արտահայտությունը:

1. Զմրուխտյա գետակի վրա մի խեղճ ջրաղաց կար: Ջրաղացի դռան առջև՝ կանաչ ուռենու տակ, թիկն էր տվել ջրաղացպանը և չիբուխը բերնին՝ գոհ ծխում էր. կողքին նստել էր կինը, իսկ նրանց աչքերի առջև մի սիրուն մանուկ՝ նրանց երեխան, խաղ էր անում (Ավ. Իս.):

2. Մենք՝ առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝

Երեք դասընկեր,

Նրրանց առաջին գլխաբաց կանգնած,

Ձեռքներրս խոնարհ սրրտներիս դրած,

Ձի՜լ, ուժեղ ձայնով նրանց ըսպասում-

Տաղ էինք ասում (Հ. Թ.):

3. Զգում էի, որ այդ բոլորը՝ հարազատներ, դպրոց, երջանիկ մանկություն, պետք է դառնային և արդեն դարձել էին խնկելի հիշողություններ:

Ամանորի նախօրեին՝ դեկտեմբերյան մի ճքճքան ցուրտ օրվա ճրագալույցին, տուն վերադարձավ հոգնած և ուժասպառ և անմիջապես պառկեց քնելու:

Հավաքվում ենք մենք՝ ես, Վահրամը, Սուքիասը, Գաբրիելը, և սպասում աղջիկներին՝ Ստելլային ու Մայրանուշին:

Կիրակնօրյա համեստ պաշարով՝ ձու, լավաշ, պանիր, կանաչեղեն, մածուն, գարնանային մի զրնգուն օր իջնում ենք այգեվետ Զանգվի ձորը:

Ձորի մեջ հորդացած գետն է, որի մեջ երևում են գարնան հեղեղի հետևանքները՝ փտած կոճղեր, երկաթալարեր, ինչ-որ անորոշ գույնի փալաս-փուլուսներ:

Ներքևում՝ լճի ծանծաղ ափերի մոտ, երևում էին գյուղի՝ տափակ երդիկներով խրճիթները:

Հանդիպակաց լանջից վերև՝ ձորափին՝ կապույտ երկնքի վրա, երևում էր կլորակ մի գմբեթ:

Ամալյայի եղբոր՝ մասնագիտությամբ վիրաբույժ Սարգիս Դանիելյանի առանձնասենյակը լեփ-լեցուն էր հիվանդի հարազատներով:

Այդ բոլորի փոխարեն ունեինք մի գեր ու անհաջող գեներալ՝ Վիկտորիո Էմանուելը՝ բարակ, երկար վզով:

Մենք՝ ես և սոճու գերանը, ջրապտույտի մեջ էինք ընկել:

Ջրարբի այգիներից լսվում էին թառի՝ հայկական կիթառի ռնգային հնչյունները:

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Տեքստային աշխատանք

Ե.Չարենց
Մեր լեզուն

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա՝ որպես մշտաբորբոք փարոս՝
Վառված հրով անշեջ դարերում հին:

Եվ վարպետներ՝ խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր՝ որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ,
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրա ժանգ չչոքի:

Հարցեր և առաջադրանքներ

Ա

ա) Անգի՛ր արտասանիր բանաստեղծությունը. ո՞ր քառատողը քեզ ավելի դուր եկավ. արտահայտվի՛ր բանավոր:

բ) Ի՞նչ չափով ես դու տիրապետում քո մայրենի լեզվին. ե՞րբ ես հատկապես զգում, որ դեռ շատ բան ունես սովորելու:

գ) Ուրիշ ի՞նչ բանաստեղծություն գիտես դու մայրենի լեզվի մասին:

դ) Գրի՛ր ասույթներ մայրենի լեզվի մասին:

Բ

ա) Առանձին-առանձին դո՛ւրս գրիր գոյականական անդամի լրացումները, ո՞ր տեսակն է առավել հաճախակի գործածված:

բ) Բնութագրի՛ր բոլոր որոշիչները. ինչո՞վ են արտահայտված. վերլուծի՛ր դրանք ձևաբանորեն:

Ամփոփիչ հարցեր

1. Որո՞նք են գոյականական անդամի լրացումները:

2. Ի՞նչ է ցույց տալիս որոշիչը: Ո՞րն է կոչվում հետադաս որոշիչ, և ի՞նչ կետադրություն է այն պահանջում:

3. Ի՞նչ է ցույց տալիս հատկացուցիչը, ո՞ր հոլովով է արտահայտվում և ի՞նչ հարցերի է այն պատասխանում. կետադրական ի՞նչ առանձնահատկություն ունի հատկացուցիչը:

4. Ի՞նչ է ցույց տալիս բացահայտիչը, և ի՞նչ խմբերի է այն բաժանվում:

5. Ինչպե՞ս են կետադրվում բացահայտչի տեսակները:

Բ. Բայական անդամի լրացումներ

Նախադասության մեջ բայական անդամները ունենում են երկու կարգի լրացումներ՝ **խնդիրներ և պարագաներ:**

Խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ և պատասխանում են առարկայական հարցերի՝ ***ի՞նչ(եր), ինչ(եր)ի՞, ինչ(եր)ի՞ն, ինչ(եր)ո՞վ, ո՞ւմ, ումի՞ց, ո՞ւմ կողմից, ումո՞վ:***

Պարագաները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող հանգամանքներ և պատասխանում են մակբայական-պարագայական հարցերի՝***որտե՞ղ, որտեղի՞ց, որտեղո՞վ, ո՞ւր, ե՞րբ, ինչպե՞ս, որքա՞ն*** և այլն:

Նշված երկու լրացումները հատուկ են բայի թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերին:

*Վարժություն

Տեքստից դո՛ւրս գրիր բայը՝ թե՛ դիմավոր, թե՛ անդեմ, իր լրացման կամ լրացումների հետ և տո՛ւր համապատասխան հարցը:

Այնտեղ օրերով ու տարիներով բազեն անում է նույն շրջանը գյուղի ու հավերի գլխին, բլուրների արանքից կարկուտը փախս է ընկնում՝ ջարդելու արտ ու լոր, քամին շպրտում է փեթակների տանիքները, և փեթակների մեջ անձրև է լցվում: Ձին բերելու գնացած երեխան ձորի այս լանջին մոլորվում է, մյուս լանջին կանգնել է թաց ձին, իսկ ձորը լցվել է սև հեղեղի վշշոցով: Հարյուր տարի է՝ ճաք է տվել մեծ ժայռը և չի փլվում ու չի փլվում, և մարդ չգիտի՝ տունը ժայռատակի տափարակի՞ն սարքի, թե՞ Սիմոնի տնից վերև՝ բացատի եզրին (Հ. Մաթ.)

Օրինակ՝

անում է *ի՞նչը* **- շրջանը**

անում է *որտե՞ղ* **- գլխին**

1. ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրները բաժանվում են երկու խմբի՝ **ուղիղ և անուղղակի**[10], և, ինչպես նշվեց, ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ:

Ուղիղ խնդիր՝
Գարնան առատ անձրևները ջրեցին չորացած **դաշտերն ու այգիները:**

Անուղղակի խնդիրներ՝
Նա հանգիստ զբոսնում էր **ընկերուհու հետ**:
Շունը անմիջապես մոտեցավ **հովվին:**
Ոչ մի կերպ չեմ կարողանում նրան հանել իմ **մտքից:**

Անուղղակի խնդիրներն են **ներգործող, հանգման կամ մատուցման, միջոցի, անջատման, միասնության, վերաբերության** խնդիրները:
Ուղիղ խնդիրն արտահայտվում է միայն հոլովական ձևով, իսկ անուղղակի խնդիրները թե՛ հոլովով և թե՛ հոլովակապային կապակցությամբ:

Իմացիր և հիշիր
Խնդիրները պատասխանում են առարկայական հարցերի՝ ***ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ, ի՞նչ, ինչե՞ր, ինչի՞, ինչերի՞, ո՞ւմ կողմից*** և այլն:

ՈՒՂԻՂ (ԿՐՈՂ) ԽՆԴԻՐ

Պապը (ենթակա) *սիրում է* ***թոռներին*** (կրող խնդիր)*:*
Արմենը (ենթակա) *բարձրաձայն կարդաց* ***նամակը*** (կրող խնդիր):

Այս նախադասություններում **թոռներին** և **նամակը** բառերը այն անձը և առարկան են, որոնք իրենց վրա կրում են **պապի** և **Արմենի** կատարած գործողությունները:

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա ուղղակիորեն կրում է ենթակայի կատարած գործողությունը:

Ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով և պատասխանում է **ո՞ւմ** և **ի՞նչ** հարցերին: **Ո՞ւմ** հարցին պատասխանելիս ուղիղ խնդիրը ձևով նման է տրական հոլովին, իսկ **ի՞նչ** հարցին պատասխանելիս՝ ուղղական հոլովին, ինչպես՝
Հրանոթի արկը սարսափահար է անում **մարդկանց (ո՞ւմ):**
մարդկանց - ուղիղ խնդիր, հայցական հոլով (ձևով նման է տրականին):

---

[10] Հաճախ խնդիրների տեսակները բնութագրվում են իբրև **սեռի և բնության խնդիրներ**, որի դեպքում **ուղիղ և ներգործող** խնդիրները համարվում են **սեռի**, իսկ մնացածը՝ **բնության խնդիրներ**:

Արևը վերևից **կրակ (ի՞նչ)** է թափում:
կրակ - ուղիղ խնդիր, հայցական հոլով (ձևով նման է ուղղականին):

Ուղիղ խնդիր պահանջում են ներգործական սեռի բայերը:

Հիշի՛ր

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է կրող առարկա, ինչպես՝

Երկրաշարժը (ենթակա) *քանդել է նրա խարխուլ* ***կացարանը*** (կրող խնդիր):

Անհրաժեշտ **դեղը** (ենթակա) բուժեց ծանր **հիվանդին** (կրող խնդիր):

Ամպերը (ենթակա) ծածկեցին **երկինքը** (կրող խնդիր):

Ուղիղ խնդիր են դառնում գոյականները և առարկայանիշ դերանունները, ինչպես՝

Ուղտերն արագացրին **քայլերը**:

Նա համառորեն տանջում էր **բոլորին:**

Մյուս խոսքի մասերը ուղիղ խնդրի պաշտոնով հանդես են գալիս փոխանվանաբար:

Օրինակ՝

Նկարիչը միշտ նախընտրում էր **նարնջագույնը:**

Վահագնը վերջապես ուսուցչից ստացավ սպասված **տասը**:

Այն նախադասությունը, որտեղ կիրառվում է ուղիղ խնդիր, կոչվում է **ներգործական կառուցվածքի նախադասություն:**

Ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորականի փոխելիս ուղիղ խնդիրը դառնում է ենթակա, իսկ ենթական դառնում է **ներգործող խնդիր:**

Վարժություններ.

ա) Գտի՛ր ուղիղ խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

Արքայազնը պաշտում էր ճոխությունը: Իր մայրաքաղաքը նա անընդհատ վերակառուցում էր և շուտով դարձրեց **ամենագեղեցիկ** քաղաքներից մեկը: Բայց մի անգամ նա հասկացավ, որ իրեն ամեն ինչ **ձանձրացրել է**: Եվ երբ լսեց Բուդդայի՝ քաղաք գալու մասին, շտապեց նրա մոտ (Հ. Ա.)

Մութը հյուսում է **տրտմության** ժանյակ,

Ծաղիկներն **անուշ** բույր են բուրվառում...(Վ. Տ.):

Նահապետը ներս հրավիրեց հարևաններին: Նուբարը սուփրա բացեց, սեղանին մի կուլա գինի դրեց: Ծերունի Մովսեսը, վերցնելով գավաթը, **օրհնանքի** խոսքեր ասաց, խրատներ կարդաց Նուբարին (Հր. Ք.):

Պառավը կարծում էր՝ Աղունը կախարդել է իր որդուն, և հիմա նա այնտեղ նրան է պարզում իր բարի ժպիտը և նրա հետ անում է տոհմական **իր** շռայլ կատակները: **Այդպես չէր**... (Հ. Մ.):

բ) Վերլուծի՛ր ընդգծված անդամները շարահյուսորեն:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր կապակցված խոսք՝ *«Իմ առօրյան»* վերնագրով՝ գործածելով ուղիղ խնդիր լրացումներ:

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ

Թոռները (ենթակա) *սիրվում են* ***պապի կողմից*** (ներգործող խնդիր)*:*

Նամակը (ենթակա) *բարձրաձայն կարդացվեց* ***Արմենի կողմից*** (ներգործող խնդիր):

Այս նախադասություններում **պապի կողմից** և **Արմենի կողմից** բառերը այն անձերն են, որոնցից գործողությունն անցնում է **թոռները** և **նամակը** ենթականերին:

Ներգործող խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կատարած գործողությունը իր վրա ուղղակիորեն կրում է ենթական:

Նրա խարխուլ ***կացարանը*** (ենթակա) *քանդվել է* ***երկրաշարժից*** (ներգործող խնդիր):

Հոսող ***արյունը*** (ենթակա) *կտրվեց անհրաժեշտ* ***դեղով*** (ներգործող խնդիր)*:*

Հիշի՛ր

Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը խնդրից անցնում է ենթակային:

Այս պատճառով էլ ներգործող խնդիրը անվանվում է նաև **կրավորական սեռի խնդիր**:

Այն նախադասությունը, որտեղ կիրառվում է ներգործող խնդիր, կոչվում է **կրավորական կառուցվածքի նախադասություն:**

Ներգործող խնդիրը դրվում է՝

1. Բացառական հոլովով, ինչպես՝

Ես անչափ հուզվել էի ծնողներիս անակնկալ **այցից**:

2. Սեռական հոլովով և ***կողմից*** կապով, ինչպես՝

Երիտասարդի համազգեստը կարվել էր Թիֆլիսից հրավիրված հատուկ **դերձակի կողմից:**

3.Գործիական հոլովով, ինչպես՝

Ուշ երեկոյան երկինքը միանգամից ծածկվեց **ամպերով**:

Ներգործող խնդիրը չպետք է շփոթել միջոցի անուղղակի խնդրի հետ. ներգործող խնդիրը անմիջապես գործողություն կատարողն է, ինչպես՝

Փողոցները փակվել էին **մեքենաներով:**

Մեքենաները փակել էին փողոցները:

(Հմմտ.՝ Ցուցարարները փողոցը փակել էին **մեքենաներով:** Այստեղ գործողություն կատարողը **ցուցարարներն** են):

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր ներգործող խնդիր ունեցող հինգ նախադասություն:

բ)* Տրված ուղիղ խնդիրները դարձրո՛ւ ներգործող, իսկ ներգործող խնդիրները՝ ուղիղ և նշի՛ր, թե ինչով են դրանք արտահայտվում:

Սիմոնը փռից հինգ հաց վերցրեց (Հ. Մ.)

Քամին հալածում էր մառախուղի թանձր քուլաները (Ակ. Բ.):

Այսպիսի դեպքերում Նահապետը բահը կամ փոցխը ցած էր դնում մարգի թմբին (Հր. Ք.):

Արյունաթաթախ ու քրտնած զինվորները բերում էին Զոհրակին (Դ. Դ.):

Մղկտացող սրտի զարկերը խլացնելով՝ նա ամեն գիշեր հանգստությամբ լուսավորում էր ամրոցի աշտարակները (Ր.):

Պարսպի ներսը ծածկված էր բերրի պտղածառերով, խաղողի որթերով և ծաղկող թփերով (Ստ. Զ.):

Տան կողքին կար մի բարձրահասակ բարդի, որ թեթև օրորվում էր գիշերային մեղմ քամուց (Ն. Զ.):

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ

Եվ նա **աշխարհին** պատմեց իր գլխով անցածը:

Խենթացած մարդիկ նետվեցին **գերիների վրա:**

Այս նախադասություններում ընդգծված անդամները՝ **աշխարհին** և **գերիների վրա**, ցույց են տալիս այն առարկան և անձերին, որոնց հանգում է ենթակաների (**նա**, **մարդիկ)** կատարած գործողությունը:

Այն առարկան, որին տրվում կամ որին հանգում է մի բան, կոչվում է հանգման խնդիր:

Ունկնդիր եղա հողմի խենթ **երգին**...(Վ. Տ.)

Հանգման խնդիր են պահանջում ***հասնել, հանգել, մոտենալ, հավասարվել, մերձենալ, նվիրել, տալ, վճարել, նետել, դիպչել, բախվել, վաճառել, մատակարարել*** և այլ բայեր:

Հանգման խնդիրը արտահայտվում է տրական հոլովով կամ կապային կապակցություններով (**ընդդեմ, դեմ, վրա**) և պատասխանում է ***ո՞ւմ, ինչի՞ն*** հարցերին, ինչպես՝

Աշակերտը մի անգամ հարց ուղղեց **վարպետին (ո՞ւմ):**

Կարճ ժամանակում նա տիրապետեց **անգլերենին (ինչի՞ն):**

Նրա խոսքերը մեծ տպավորություն գործեցին **ներկաների վրա (ո՞ւմ վրա):**

Հանգման խնդիր կարող է դառնալ այն անձը, առարկան, որին՝

ա) մոտենում կամ հանգում է մի բան, ինչպես՝

Փոքրիկը անսպասելի փաթաթվեց իր **կատվին (ինչի՞ն):**

բ) տրվում, հանձնվում է որևէ բան, ինչպես՝

Գիրքը հանձնիր **երեխային (ո՞ւմ):**

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր հանգման խնդիր ունեցող հինգ նախադասություն *վճարել, նվիրել, ներկայացնել, առանձնացնել, հավասարվել* բայերով:

բ) Գտի՛ր հանգման անուղղակի խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

Գերու դեմքով մի վախվորած ժպիտ անցավ և փոխանցվեց մյուս գերիներին (Բ. Վ.):

Այդ խոսքերը խեղճ աշակերտին գցեցին ավելի մեծ շփոթության մեջ:

Իմ մտքում հրաժեշտի խոսքեր եմ ասում քաղաքին, Գյունեյ թաղին, մեր Ցից քարին և իմ մանկության ընկեր Անդոյին (Ակ. Բ.):

Հուզմունքից շփոթված Նահապետն առաջին անգամ չհավատաց իր ականջներին (Հր. Ք.):

Նրանք արդեն հասել էին իրենց երազանքին: Բանավեճը արդեն հասել էր իր գագաթնակետին: Մեր հարևանը մի տեսակ խուսափուկ էր բոլորին ասում՝ բարև:

Մեր ուսուցչուհին շատ դժվարությամբ է տղաներին տասը գնահատական դնում: Աստված Մովսեսին պատվիրում է մոլորյալ ժողովրդին դարձի բերել:

Քեզ կրմնա միշտ օտար
Նաիրական իմ հոգին...

Էլ չեմ հավատում այդ ջինջ աչքերին
Եվ խորունկ ձայնիդ նվագին քնքուշ,
Որ հնչում էր միշտ այնքան մտերիմ

Եվ այնքան, այնքան, այնքան փաղաքուշ... (Վ. Տ.):

Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան...
...Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով,
Լամ ու խընդամ, մայրի՛կ ջան...

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին ու անցել (Ավ. Իս.)

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ

Վարդանը **քարերով** ամրացրել էր իր նկուղը:
Սպիտակ ձին՝ սպիտակ վրեժը, թռչում էր, **ոտքերով** դոփում գետինը:

Այն առարկան, որի միջոցով կամ որով կատարվում է գործողությունը, կոչվում է միջոցի անուղղակի խնդիր:

Միջոցի անուղղակի խնդիրը դրվում է գործիական հոլովով և պահանջում է ***ումո՞վ, ինչո՞վ*** հարցերը, ինչպես՝

Աղջկա վարսերը կապված էին ժապավենով **(ինչո՞վ):**

Միջոցի անուղղակի խնդիրը արտահայտվում է նաև **սեռական հոլովի** և **միջոցով, ձեռքով** կապական բառերի կապակցությամբ, ինչպես՝

Ծանոթների միջոցով նա վերջապես տեղավորվեց մի հարմար աշխատանքի:

Նա իր սև գործն անում էր **ուրիշների ձեռքով**:

Առաջադրանքներ

ա) Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր ուղիղ և անուղղակի խնդիրներով մի քանի նախադասություններ՝ նշելով յուրաքանչյուրի տեսակը:

բ) Գտի՛ր միջոցի անուղղակի խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

***գ) Գտի՛ր՝ ուրիշ ի՞նչ խնդիրներ կան տրված նախադասություններում:**

Արտերում հասած ցորենները ծլում էին, հողի մշակները մրսում էին խրամատներում և անվարժ ձեռքերով շարժում էին հրացանի փակաղակը (Ակ. Բ.):

Արյունը արյունով չեն լվանա: Մի ծաղկով գարուն չի գա (ժող.):

Հավաքվածները կռվում էին քարերով ու փայտերով: Միջոցառմանը այս անգամ նա մասնակցում էր իր նոր երգացանկով: Մենք՝ երեխաներս, հիանում էինք նորելուկ գառնուկով: Ես երկու ձեռքով գրկել էի նորածին երեխային և վախենում էի ցած դնել նրան: Բարձր դասարանի աշակերտները զբաղվում են

ձեռքի աշխատանքով, հատկապես փորագրությամբ: Ընկերս շրջապատում հայտնի էր իր անասելի չարություններով:

Եվ լուսաբացին, երբ հոգնած լինեք,
Երբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
Արևածագի ցնծությամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճրչամ՝ եղբայրնե՛ր, ելե՛ք (Վ. Տ.):

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ

Արսենը **քեզնից** երբեք չի կարող բաժանվել:

Մարդիկ սարսափահար փախչում էին այդ անսահման **ստից ու կեղծիքից**:

Տրված նախադասություններում ընդգծված անդամները՝ **քեզնից, ստից ու կեղծիքից**, այն առարկաներն են, որոնցից անջատվում, բաժանվում, հեռանում է մի բան:

Ըստ այդմ՝ անջատման անուղղակի խնդիր են պահանջում ***հեռանալ, անջատվել, բաժանվել, թաքցրեց, խուսափել, փախչել, պոկել, փախցնել, հեռացնել, զրկել, ձանձրանալ, հրաժարվել, զզվել*** և այլ բայեր:

Այն առարկան, որից անջատվում, ծագում կամ սկսվում է գործողությունը, կոչվում է անջատման անուղղակի խնդիր:

Օրինակ՝

Նա վաղուց էր ձանձրացել իր **ընկերներից**:

Անջատման անուղղակի խնդիրը դրվում է բացառական հոլովով և պատասխանում է **ումի՞ց, ինչի՞ց, ինչերի՞ց** հարցերին, ինչպես՝

Նա թաքցրեց իր անհանգստությունը ծնողներից:

Հիշի՛ր

Շփոթելի են **անջատման անուղղակի խնդիրը, ներգործող խնդիրը և պատճառի պարագան**: Երեքն էլ ստանում են ***ինչի՞ց*** հարցը:

Ես նրան չեմ զրկի այդ **հաճույքից** (անջատման խնդիր):

Ես վիրավորվեցի նրա **խոսքից** (ներգործող խնդիր):

Ես լալիս էի **վիրավորանքից** (պատճառի պարագա):

Առաջադրանք

Կազմի՛ր անջատման խնդիր ունեցող հինգ նախադասություն *հրաժարվել, բաժանվել, զրկել, փախցնել, զգուշանալ* բայերով:

Վարժություն

Գտի՛ր տրված նախադասություններում անջատման անուղղակի խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

Աշխարհն էս է, ի՞նչ ես ուզում աշխարհից: Համբերությունից լրիվ զրկված մարդը մի օր մտավ գինետուն (Հրչ. Մաթ): Ինձ հանդիպած մարդկանցից իմացա, որ դեռևս շատ հեռու է գյուղը, ուր գնում էի ես: Նա արդեն շատ վաղուց էր ձանձրացել իր կեղծավոր ու սուտ բարեկամներից: Հայրը խորշում էր զավակների վարած ցոփ ու աննպատակ կյանքից:

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ տարե՛ք,
Ինձ տարե՛ք այս երկրից անարեգ...

Փրկեցե՛ք մտքերից այս անծայր,
Փրկեցե՛ք խոսքերից այս խելոք,
Դարձրե՛ք ինձ մանուկ և անհոգ:

Փրկեցե՛ք սրերից այս սուրսայր,
Խորախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարե՛ք, տարե՛ք տուն... (Վ. Տ.)

Բախտը ինձնից թռավ, գնաց
Վերջալույսի շողերի պես... (Ավ. Իս.)

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Վերջապես ի՞նչ է բամբասում քամին
Ցուրտ ծիծաղների **արոտների հետ**.
Ապակիները ի՞նչ են զնգզնգում
Խեղճ, անապաստան **կարոտների հետ** (Ռ. Դ.):

Բանաստեղծական այս քառատողում ընդգծված **արոտների հետ** և **կարոտների հետ** կապային կապակցությունները ցույց են տալիս այն առարկաները, որոնց հետ միասին կատարվում է գործողությունը:

Այն առարկան, որի հետ միասին, ընկերակցությամբ կատարվում է գործողությունը, կոչվում է միասնության խնդիր:

Անուղղակի այս խնդիրը արտահայտվում է **սեռական հոլովի** և **հետ, հետ միասին** կապային կապակցությամբ և պատասխանում է **ո՞ւմ հետ, ինչ(եր)ի՞ հետ:**

Նուբարը Մովսեսի **կնոջ հետ** գնում էր նրանց հոտի մոտ, կթում էր իրենց երկու մաքին (Հր. Ք.):

Արտահայտվում է նաև գործիական հոլովով, **հանդերձ** կապային կապակցությամբ, ինչպես՝

Հարազատներով հանդերձ մասնակցեցինք նրա մեծարման երեկոյին:

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր միասնության խնդիր ունեցող հինգ նախադասություն:

բ) Գտի՛ր տրված նախադասություններում միասնության անուղղակի խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

Շների հետ որսի էր գնում Մթնաձորի խորքերը (Ակ. Բ.): Նրա խոսքերը միաձուլված են իրականացման հետ: Ես զգում էի, որ այդ ամբարտավան մարդու հետ ընկերակցելը Արմենին քայլ առ քայլ կործանում էր: Վարդգեսը ժամանակ չուներ ամեն մեկի հետ այդ հարցը քննարկելու: Նա միշտ որսի էր գնում ընկերների ու հատուկ վարժեցրած շների հետ: Մինչև ուշ երեկո դաշտում աշխատեց ծնողների հետ միասին:

Է՜յ դու, ջահել, հպարտ հասակ,
Անցար ոսկի ամպի պես.
Քեզ հետ տարար երգեր ու սեր,
Տարար գարունն իմ սրտես...(Ավ. Իս.)

Կգար հայրս Շիրակի հովերի հետ իրիկվա,
Կշողշողար բահն ուսին, սարից ելնող լուսնի պես...(Հ. Շ.)

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Դպրոցական ավարտական **զանգի մասին** բոլորը մոռացել էին:

Կանայք անհանգստացած պատմում էին այդ օրվա **անցուդարձից**:

Տրված նախադասություններում ընդգծված անդամները ցույց են տալիս այն առարկան՝ **զանգ** և **անցուդարձ**, որոնց **մասին**, որոնց **շուրջը** կամ **վերաբերմամբ** տեղի է ունենում գործողությունը:

Այն առարկան, որի մասին, վերաբերմամբ կամ շուրջը կատարվում է գործողությունը, կոչվում է վերաբերության անուղղակի խնդիր:

Վերաբերության խնդիրը դրվում է՝

ա) **բացառական հոլովով**, ինչպես՝

Խոսում են Լոռվա հին-հին **քաջերից:**

բ) **սեռական հոլովով** և **մասին, շուրջը, վերաբերմամբ** կամ **վերաբերյալ** կապերի կապակցությամբ, ինչպես՝

Ես **նրա մասին** վատ կարծիք երբեք չեմ ունեցել:

Նրա շուրջը զանազան պատմություններ էին պտտվում:

Քո վերաբերյալ իմ ձեռքի տակ եղածը արդեն իսկ բավական է գործը սկսելու համար:

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր վերաբերության խնդիր ունեցող հինգ նախադասություն:

բ) Գտի՛ր տրված նախադասություններում վերաբերության անուղղակի խնդիրները և նշի՛ր, թե ինչով են արտահայտված:

գ) Որոշի՛ր ընդգծված բառերի պաշտոնը:

Արիության, փառքի ու սխրանքի մասին
Ես մոռանում էի այս դառնագին հողում...(Ա. Բլոկ)

Դու իմ մասին **ուրիշից**
Կարծիքներ ես հավաքում...
Չես հավատում ինքդ **քեզ,**
Ուրիշի ես հավատում (Ա. Ս.):

Երբեմն **ինձ** հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:

Ու խորին **հառաչանքով** ինքն իր համար մտածում էր իր երկրի մասին:

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են ցույց տալիս բայական անդամի լրացումները:

2. Ի՞նչ խմբերի են դրանք բաժանվում:

3. Ի՞նչ են ցույց տալիս խնդիրները և ի՞նչ տեսակների են բաժանվում:

4. Ո՞ր խնդիրներն են կոչվում սեռի խնդիրներ. բնութագրի՛ր դրանք և բե՛ր համապատասխան օրինակներ:

5. Ի՞նչ առանձնահատկություն ունեն անուղղակի խնդիրները. թվարկի՛ր դրանց տեսակները և բե՛ր օրինակներ:

6. Արտագրի՛ր գծապատկերը՝ յուրաքանչյուրի տակ նշելով նրա հարցը:



Վարժություն

Դո՛ւրս գրիր բոլոր խնդիրները՝ նշելով տեսակը, արտահայտությունը, հոլովը:

Սողոմոնը փակեց աչքերը. օտար բառերի միջից նա լսում էր հին-հին մի զրույց բարության, լավի ու մարդկայնության մասին, որը, սակայն, տկար էր ու անզոր, երբ աշխարհը լի էր չարությամբ և աշխարհը լի էր դաժանությամբ... Քահանան չէր հոգնում և կշարունակեր անվերջ, քանզի պետք էր մաքրել մեղսագործի հոգին: Բայց մի րոպե բացեց աչքերը և սարսափով նկատեց, որ Սողոմոնի դեմքին լոկ խղճահարություն էր այդ բոլոր սրբերի անզորության համար: Եվ նրա դեմքին ոչ մի զղջում, և նրա դեմքին երանություն միայն, որ եղել է լինելին:

- Տերը փրկի քեզ, որդյա՜կս...

Ձեռքը ցույց տվեց միջանցքը՝ գնա՛: Բանտարկյալները պատասխանում են հարցերին, հարցեր չեն տալիս: Միջանցքն ավարտվեց, հետո աստիճանները տարան վար, հետո մի դուռ բացվեց... Սողոմոնը նայեց պահակին, իսկ պահակը վառեց ծխախոտը...

Վարդապետը մոտենում էր...

-Մեր Տեր Հիսուս Քրիստոսի բերնով և մեր ժողովրդի բերնով օրհնում եմ քե՛զ, Սողոմո՛ն, որ սպանեցիր գազանին...

- Օտար լեզվով խոսել չի թույլատրվում:

Սողոմոնը ծունկի իջավ և շուրթերը ջերմեռանդորեն հպեց վարդապետի խորշոմած ձեռքին...

- Հա՛յր սուրբ, ես ծառա եմ այդ հավատքին (Բ. Վ.):

Առաջադրանքներ

ա) Գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր խնդիրների երկուական օրինակ: Ո՞ր խնդիրներն են առավել հաճախ քեզ հանդիպում: Ո՞ր խնդիրն է սակավ գործածված:

բ) Պատմության, կենսաբանության, աշխարհագրության քո դասագրքերից դո՛ւրս գրիր խնդիրների երկուական օրինակ: Ո՞ր խնդիրներն են առավել հաճախ քեզ հանդիպում: Ո՞ր խնդիրն է սակավ գործածված:

Ստեղծագործական աշխատանք

Գրի՛ր շարադրություն՝ *«Ի՞նչն է ինձ անհանգստացնում»* վերնագրով. ո՞ր խնդիրն ես դու ավելի հաճախ կիրառել գրածդ տեքստում:

2. ՊԱՐԱԳԱՆԵՐ

Կարծես թե դարձել եմ ես **տուն**
Բոլորն առաջվանն է **կրկին**.
Նորից դու հին **տեղը** նստում,
Շարժում ես իլիկը մեր հին.
Մանում ու հեքիաթ ես ասում,
Մանում ես **անվերջ ու արագ**.

Սիրում եմ պարզկա քո լեզուն,
Ձեռներդդ մաշված ու բարակ:
Նայում եմ, մինչև որ **անզոր**
Գլուխդս **ծնկիդ** է թեքվում.
Նորից ես մանուկ եմ **այսօր**,
Դրախտ է **նորից** իմ **հոգում**:

Արևը հանգչում է **հեռվում**,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթը **անվերջ** օրորում,
Իլիկը խոսում է **անուշ**... (Վ. Տ)

Ընդգծված այդ բառերը արտահայտում են գործողության կատարման տեղը, ժամանակը, ձևը:

Բայի այն լրացուները, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող հանգամանքները, կոչվում են պարագաներ:

Առաջադրանք

Դո՛ւրս գրիր տրված բանաստեղծությունից ընդգծված բառերը և յուրաքանչյուր անդամի դիմաց գրի՛ր նրան տրվող հարցը, ինչպես՝

ո՞ւր – ***տուն:***

Պարագաները պատասխանում են **ե՞րբ, երբվանի՞ց, ի՞նչ պատճառով, ինչո՞ւ, ինչպես, որտե՞ղ, որտեղի՞ց, որտեղո՞վ, ո՞ւր, որքա՞ն, ո՞ր դեպքում,** և նման այլ հարցերի:

Պարագաներն արտահայտվում են մեկ բառով կամ բառակապակցությամբ, ինչպես՝

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք
Հրրճվում էր **անզուսպ** ամբոխը գյուղի (Հ. Թ.):
Արմենը **չափազանց արագ** լուծեց այդ բարդ խնդիրը:

Պարագաներն արտահայտվում են գրեթե բոլոր նյութական իմաստ ունեցող խոսքի մասերով՝ **գոյականով, ածականով, դերանվամբ, անկախ դերբայներով, մակբայներով,** ինչպես նաև **կապի և հոլովի կապակցություններով:**

Օրինակ՝

Կանչում էր, կանչում ձյունոտ **լեռներում**
Մեկը կարոտի **իրիկնամուտին** (Ե. Չ):
Ծաղիկներն ահա **քնքուշ** փակվեցին (Վ. Տ.):
Դու **այնպես** դանդաղում ես, արև՛,
Այնպես պաղ, դժկամ ես արևում (Ս. Կ.):
Հիմա ո՞վ է ձեզ համբուրում,
Ծովասարիս ծաղիկներ,
Ի՞նչ որսկան է ձեզ **ցած** բերում,
Իմ Սիփանի եղնիկներ (Հ. Շ.):
Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք **միշտ** իրար,
Միշտ իրար հետ, բայց **միշտ բաժան** և **հեռու**,
Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար (Վ. Տ.):

Պարագաները լինում են **տեղի, ժամանակի, ձևի, պատճառի, նպատակի, պայմանի, չափ ու քանակի և այլն:**

Առաջադրանքներ

ա) Տրված նախադասություններից դո՛ւրս գրիր ընդգծված անդամները՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով, թե ինչ խոսքի մասով է արտահայտված և ինչ հարցի է պատասխանում:

Կացարանի **պատուհանից** պոկված լույսի բույլը խճճվել էր ծիրանենու **սաղարթում**, և **ծառի տակ** ու տղաների **գլխներին** լույս էր կաթկթում: Սողոմոնի հայացքը ընկերոջ **ափում** բնակալած նամակի ճոթին էր, **ուր նույնպես** լույսի փշուրներ կային: **Կիսամութի մեջ** նրանք նման էին կաթիլների. շարժուն ու տաք էին:

Տիգրանը **աչքերը կիսախուփ** երգում էր՝ **թիկունք ու գլխով հենված** ծիրանենու բնին. **այնտեղից** զովություն էր առնում, Սողոմոնը **հակված** լսում էր: Երգը ծավալվում էր, և գարնան **երկնքի տակ**՝ կացարանի **այգում,** դատարկվում էր մշեցի մանչի կարոտը: Իսկ նրանց **գլխավերևում՝ մթան մեջ**, զորեղացել էր ձայնը՝ «խաղաղությո՜ւն ամենեցուն»...

«Մարեի աղոթքը երգի նման է»,- **նորից** հիշեց:

Հետո հնչյունները պոկվեցին **երկնքից**, նրանք դարձան կապույտ հուլունքներ... **Հիմա** նրանք կայծկլտում են կացարանի դիմացի **պարտեզի վրա**, ծիրանենու **սաղարթում**, որի **հովանու տակ** կանգնած են ինքն ու Տիգրանը, ապա հավաքվեցին, եկա՜ն, թռվռացին **պատուհանի մոտ**... Սողոմոնը աչքերը փակեց, և հնչյունները սոսափեցին **ականջներում**. ամեն մեկը իր **հանգով** զրնգաց, ապա **փերթ-փերթ** ալիքվեց մեղեդին: Այդպիսին նա **երբեք** չէր լսել (Մ. Գ.):

բ) Գեղարվեստական գրականությունից ինքդ դո՛ւրս գրիր տարբեր խոսքի մասերով արտահայտված պարագաների օրինակներ:

գ) Բառարանի օգնությամբ բացատրի՛ր *բնակալել, ճոթ, մանչ, մարե, փերթ-փերթ* բառերի նշանակությունները, դրանց ոճական արտահայտությունը:

Տեղի պարագա

Ես թողել եմ **հեռվում** դալարագեղ այգին՝
Բլուրների վրա փռված ալիք-ալիք,
Քեզ եմ թողել **այնտեղ**, իմ մանուշա՛կ անգին...(Հ. Ս.)

Բերված օրինակում ընդգծված անդամները՝ **հեռվում, բլուրների վրա** և **այնտեղ,** ցույց են տալիս գործողության կատարման տեղը և պատասխանում են **որտե՞ղ** հարցին:

Տեղի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման տեղը:

Այս պարագան արտահայտվում է **տեղի մակբայներով, դերանուններով, գոյականի տարբեր հոլովաձևերով և կապային կապակցություններով:**

Հիշի՛ր

Տեղի պարագան արտահայտվում է

տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով:

Առաջադրանքներ

ա) Վերհիշի՛ր տեղի մակբայները:

բ) Կազմի՛ր տարբեր հոլովաձևերով՝ տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական, տեղի պարագա ունեցող նախադասություններ:

գ) Կազմի՛ր նախադասություններ՝ *երթևեկել, շրջագայել, անցնել, զբոսնել, որոնել, թափառել* բայերի հետ գործածելով տեղի պարագաներ:

Վարժություններ

ա) Տրված նախադասություններից դո՛ւրս գրիր տեղի պարագաները՝ նշելով, թե ինչով են դրանք արտահայտված:

Հնձանի ստվերում՝ ուռենու կողովների մեջ, սև խաղողը շողշողում էր (Ակ. Բ.): Նրա հայացքը գնաց մթության **մեջ** պարզված ձեռքի **ուղղությամբ**: Ուղիղ երկու շաբաթ Մաշտոցը գրեթե դուրս չեկավ իր կացարանից: Կապույտ ու լուսավոր երկնքի **տակ** սլացիկ ծառեր են: Արարատյան դաշտի հնագույն գյուղերից **մեկում** ապրում էր մի պատկառելի ծերունի: Մեր բազմադարյան պատմության մեջ որևէ այլ քաղաք թերևս այնպիսի դեր չի կատարել մեր հոգևոր կյանքում, ինչպես Էջմիածինը: Մսր քաղաքում ապրող Մելիքը մարդիկ ուղարկեց Սասուն: Լիալուսինը հանդարտ սահում էր երկնքի վրայով, ինչպես մի առագաստանավ՝ խաղաղ ծովի **վրա**: Նա մերթ թեքվում էր սև ամպերի տակ և մերթ դուրս գալով ամպերի **տակից**՝ շարունակում էր իր օդային ճանապարհը: Մենք թաքնվեցինք խիտ եղեգների մեջ: Ներքևից լսվեց մի անսովոր աղմուկ, և ճանապարհի ոլորանում երևացին ավազակները: Երբ նա վսեմաքայլ մտավ ներս, գնացքի վագոնում գտնվողները մի պահ զարմանքից լռեցին: Գյուղով անցնող մի ծերունի եկավ եղբայրների **մոտ**:

բ) Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը, որոշի՛ր դրանց խոսքիմասային արժեքը և նախադասության մեջ կատարած դերը:

գ) Կազմի՛ր նախադասություններ, որոնցում տեղի պարագաները արտահայտված լինեն *դիմաց, դեպի, ի վեր, ի վար, առաջ, հեռու* կապերի կապակցություններով:

Ժամանակի պարագա

Խաղաղ **գիշերով** դու կըգաս ինձ մոտ,
Քնքուշ ձեռներըդ ես կըհամբուրեմ...(Վ. Տ.)

Բերված օրինակում ընդգծված անդամը՝ **գիշերով,** ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը և պատասխանում է **ե՞րբ** հարցին:

Ժամանակի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը:

Այս պարագան արտահայտվում է **ժամանակի մակբայներով, գոյականի տարբեր հոլովաձևերով, կապային կապակցություններով, դերբայական ձևերով:**

Հիշի՛ր

Ժամանակի պարագան արտահայտվում է

տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով:

Առաջադրանքներ

ա) Վերհիշի՛ր ժամանակի մակբայները:

բ) Կազմի՛ր տարբեր հոլովաձևերով՝ տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական, ժամանակի պարագա ունեցող նախադասություններ:

գ) Կազմի՛ր նախադասություններ՝ *ժամանել, հավաքվել, մեկնել, հուսադրել, համախմբվել* բայերի հետ գործածելով տեղի պարագաներ:

Վարժություններ

ա) Տրված տեքստերից դո՛ւրս գրիր ժամանակի պարագաները՝ նշելով, թե ինչով են դրանք արտահայտված:

Երբ կհոգնեմ, տարե՛ք ինձ երկիրն իմ հեռու,
Այնտեղ կա նուրբ երեկո, մեղմախոս առու...(Վ. Տ.)

Մութ վշտերիդ ժամին, սի՛րտ իմ,
Մի՛ որոնիր սիրտ մտերիմ (Հ. Շ):

Մթնաձոր տանող միակ ուղին առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան... Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան՝ մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող...

Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները (Ակ. Բ.):

Այժմ էլ՝ լուսադեմին, եթե բարձրանաք մեր գյուղի վերին բլուրները, ուր ամռան լուսնկա գիշերներին եզները մեղմ որոճացել են, դուք կհանդիպեք մեր հանդերի ամենախորամանկ կենդանուն՝ աղվեսին:

Հանկարծ ճանապարհին փոշի բարձրացավ, և երևաց ձիավորների մի խումբ: Բանուկ մասերով անցնելիս նրանք արագ ձիավարում էին:

Հիշում էր՝ մի երեկո խոստովանեց իր սերը, բայց մի քանի օր անց աղջիկն ասաց, որ ավելի լավ է չհիշել այդ խոստովանությունը:

բ) Տրված նախադասություններից դո՛ւրս գրիր գոյականական անդամի լրացումներ և որոշի՛ր դրանց պաշտոնը:

Ձևի պարագա

Գարնան լուսե **ամպի նըման**՝
Այս խավար կյանքում,
Դու նետել ես մի թովչական
Ժըպիտ իմ հոգուն (Վ. Տ.):

Բերված օրինակում ընդգծված անդամը՝ **ամպի նըման,** ցույց է տալիս գործողության կատարման ձևը և պատասխանում է **ինչպե՞ս** հարցին:

Ձևի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման ձևը:

Այս պարագան արտահայտվում է **ձևի մակբայներով, գոյականի տարբեր հոլովաձևերով, որակական ածականներով, կապային կապակցություններով, դերանուններով, դերբայական ձևերով:**

Առաջադրանքներ

ա) Վերհիշի՛ր ձևի մակբայները:

բ) Կազմի՛ր ձևի պարագա ունեցող նախադասություններ:

Վարժություններ

ա) Տրված տեքստերից դո՛ւրս գրիր ձևի պարագաները՝ նշելով, թե ինչով են դրանք արտահայտված:

Ուզում եմ քեզ այնպե՛ս երգել,
Գոնե խոսքեր՝ այնքա՛ն անգին,
Այնպես, ինչպես չի գովերգել
Դեռ ոչ մի մայր իր զավակին (Ս. Կ):

Վազն է լալիս այգում, լալիս հուլունք-հուլունք (Վ. Դ.):

Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը: Մի հրեշ էր նա՝ անտառապետի տարազով...

Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ... Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ... Միրհավի պես էր Սոնան՝ աչքերը խաղողի սև հատիկներ, տարիներ առաջ՝ մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտները պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը, և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով (Ակ. Բ.):

բ) Ուրիշ ի՞նչ պարագաներ կան գործածված այս նախադասություններում. դո՛ւրս գրիր և նշի՛ր տեսակը:

Պատճառի պարագա

Տիկինը սարսռաց սեփական **մտքից** (Ս. Խ.):

Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին **քամուց** (Ակ. Բ.):

Բերված օրինակներում ընդգծված անդամները՝ **մտքից, քամուց,** ցույց են տալիս գործողության կատարման պատճառը և պատասխանում են **ինչի՞ց** հարցին:

Պատճառի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման պատճառը:

Պատճառի պարագան պատասխանում է **ինչի՞ց, ի՞նչ պատճառով** հարցերին:

Հիշի՛ր

Պատճառի պարագան արտահայտվում է հիմնականում **գոյականի բացառական հոլովով, կապային կապակցություններով, դերբայական ձևերով՝ անորոշ դերբայի բացառական և գործիական հոլովներով**:

Օրինակներ՝

Վախից կուչ էր եկել սենյակի մի անկյունում:

Նրա աչքերում արցունքներ **տեսնելով**՝ բոլորը միանգամից հուզվեցին:

Շատ **աշխատելուց** նրա մկանները ամրացել էին:

Հիշի՛ր

ճիշտ	սխալ
ինչո՞ւ	
ինչի՞ համար	**ինչու՞ համար**

Առաջադրանքներ

ա) Կազմի՛ր պատճառի պարագա ունեցող նախադասություններ՝ *առթիվ, դիմաց, շնորհիվ, տակ, պատճառով* կապերով ու կապական բառերով:

բ) Կազմի՛ր նախադասություններ՝ *արտասվել, հուզվել, շիկնել, շփոթվել, խելագարվել* բայերի հետ գործածելով պատճառի պարագաներ:

գ) Տրված բանաստեղծական օրինակները արտագրի՛ր քո տետրում՝ ընդգծելով պատճառի պարագաները:

Ազնի՛վ եղիր ամեն ինչում-ո՞վ է կյանքում սովից մեռել:
Անկեղծ ասած՝ այս ամենից ես հոգնել եմ...
Անկեղծ ասած՝ հեքիաթներից ես հոգնել եմ...
Սի՛րտ իմ, ինչո՞ւ ես նորից խռովել,
Իզուր ինձ ու քեզ ինչո՞ւ ես տանջում...
Քո աչքերի՛, քո աչքերի՛, քո աչքերի՛ պատճառով
Իմ աչքերը ամբո՛ղջ գիշեր, ամբո՛ղջ գիշեր չեն փակվում:
Սենակություն բառից դողում է օդն իմ սենյակի,
Ու ես հասկանում եմ,
Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը... (Պ. Ս.)

Պայմանի, նպատակի, չափ ու քանակի պարագաներ

Քո **մերժման դեպքում** նրանք կհայտնվեն անելանելի դրության մեջ:

Աղջիկները գնացին աղբյուրը՝ **ջրի**:

Այսօր **կրկին** վերսկսվեց մրցամարտը:

Բերված օրինակներում ընդգծված անդամները՝ **մերժման դեպքում, ջրի, կրկին** ցույց են տալիս գործողության կատարման պայմանը, նպատակը, չափ ու քանակը:

Պայմանի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման պայմանը:

Պահանջում է ***ի՞նչ պայմանով, ո՞ր դեպքում*** հարցերը:

Պայմանի պարագան հիմնականում արտահայտվում է անորոշ դերբայի տրական հոլովով և ***դեպքում*** կապով:

Նպատակի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման նպատակը:

Պահանջում է ***ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով*** հարցերը:

Նպատակի պարագան արտահայտվում է **առավելապես անորոշ դերբայի տրական հոլովով,** ինչպես նաև **կապային կապակցություններով՝** ***համար, նպատակով, հանուն:***

Չափ ու քանակի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման չափը, աստիճանը:

Պահանջում է ***ինքա՞ն, որքա՞ն*** հարցերը:

Չափ ու քանակի պարագան արտահայտվում է
մակբայներով՝ ***կրկին, նորից, բազմիցս, անընդհատ...***
ածականներով՝ ***երկար, շատ, քիչ...***
թվական դերանուններով՝ ***այսքան, այդքան, այնքան, նույնքան***
բառակապակցություններով՝ ***տասն անգամ, կիսով չափ, այն աստիճան***

Առաջադրանքներ

ա) Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր համապատասխան նախադասություններ նշված պարագաներով:

բ) Գտի՛ր տրված նախադասություններում պարագաները և որոշի՛ր նրանց տեսակը:

Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխալ,
Հանուն վաղվա ճշմարտության թող որ այսօր լինեմ սխալ... (Պ. Ս.)
Կապույտ երեկոն այնքա՜ն է խաղաղ,
Երգում է ծառից մի հավք սրտագոհ... (Ավ. Իս.)
Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով (Ավ. Իս.)
Հեքիաթդ անվերջ օրորում,
Իլիկդ խոսում է անուշ... (Վ. Տ.)

Կ ր կ ն ո ղ ա կ ա ն

Հարցեր

1. Որո՞նք են կոչվում երկրորդական անդամներ:
2. Ի՞նչ են ցույց տալիս բայական անդամի լրացումները:
3. Ի՞նչ խմբերի են դրանք բաժանվում:
4. Ի՞նչ են ցույց տալիս պարագաները և ի՞նչ տեսակների են բաժանվում:
5. Ի՞նչ հարցեր են պահանջում պարագաները:

Վարժություններ և առաջադրանքներ

ա) Դո՛ւրս գրիր բոլոր պարագաները՝ նշելով տեսակը, ինչով են արտահայտված և ինչ հոլովով են դրված:

1. Կանաչ **արտերի միջով** հոսում էին շարքերը, գալիս, գալիս կուտակվում էին: Դիրքերում պապանձվել էին: Ի՞նչ կար ներքևում՝ դաշտավայրում:

Քարաբեկորների հեղեղ իջավ լեռան կատարն ի վար՝ **գոռոցով, ահեղ դղրդյունով**: Ասկյարների շարքերն ընկրկեցին և բեկբեկուն փախան ետ, թաղվեցին ցեխոտ **արտերում**, ճագարաձև **փոսերի մեջ...** Ու բզկտված **արտերի միջից կատաղությամբ առաջ** նետվեցին շարքերը. թույն կար այդ **սլացքի մեջ** (Բ. Վ.):

Երկար նայում եմ հմայված, ու թվում է՝ լեռը կարդում է մտքերս, ուզում է շոյել ճերմակող գլուխս (Վ. Պ.):

2. Ֆիզիկայի օրենքներն անապատում անվավեր են համարված: Լճափից արևածագը երկու անգամ է երևում: Խիտ եղեգնուտներից աղմուկով վեր են բարձրանում սուզահավերը...և հպարտորեն պտտվում լճակի հայելու վրա: Մակույկը մեղմ ճողփյունով առաջ է շարժվում: Աղջիկը ժպտում է բավականությունից: Ավազը փախչում է ոտքերիդ տակից: Ավազի վրա իր ճկուն մարմնի հետքերը թողնելով՝ սողում է մի երկար օձ (Ռ. Հ.):

3. Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ՝ ինչու է այդպես (Հ. Ս.):

Կրկին անձրևն է տեղում գիշերային մայթերին... (Պ. Ս.)
Եվ քարավանը Աբու-Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝
Քայլում էր հանգիստ նիրհած գիշերով հնչուն զանգերի անուշ ղողանջով(Ավ. Իս.):

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով (Հ. Թ.)

բ) Գեղարվեստական տեքստերից դո՛ւրս գրիր պարագաների երկուական օրինակ: Ո՞ր պարագաներն են առավել հաճախ քեզ հանդիպում: Ո՞ր պարագան է սակավ գործածված:

գ) Պատմության, կենսաբանության, աշխարհագրության քո դասագրքերից դո՛ւրս գրիր պարագաների երկուական օրինակ: Ո՞ր պարագաներն են առավել հաճախ քեզ հանդիպում: Ո՞ր պարագան է սակավ գործածված կամ չես գտնում այդ տեսակից:

Դերբայական դարձված

Նրա համար ամենից մեծ հաճույքը **այգին ու արտերը ջրելն** էր:

Առվի ջուրը կապելիս նա ջրի հետ էլ գնում էր:

Արևից չորացած հողը, **տեղ-տեղ ճաքճքած**, ագահությամբ ծծում էր ջուրը (Ակ. Բ.):

Տրված օրինակներում ընդգծված կապակցությունները բայական բառակապակցություններ են, որոնց գերադաս անդամը անկախ դերբայ է՝ ***ջրելն, կապելիս, չորացած, ճաքճքած,*** որոնցից յուրաքանչյուրը ունի իրեն լրացնող ստորադաս անդամ՝ ***այգին ու արտերը, ջուրը, արևից, տեղ-տեղ:***

Դերբայն իր լրացումներով կոչվում է դերբայական դարձված:

Հիշի՛ր

Դերբայական դարձվածը նախադասության մեջ մեկ անդամ է:

Դերբայական դարձվածի գերադաս անդամը՝ դերբայը, ունենում է չորս տեսակ լրացում՝

ենթակա.

Օրինակ՝ ***Արամի*** (կողմնակի ենթակա) **գրածը** ոչ ոք չկարողացավ կարդալ:

ստորոգելի կամ վերադիր.

Օրինակ՝ Փորձառու **որսորդ** (ստորոգելի) **համարվող** Համո քեռին անսպասելի հիվանդացավ:

խնդիր.

Օրինակ՝ Նրան այդպես էլ չհաջողվեց որևէ **առաջադրանք** (ուղիղ խնդիր) **կատարել:**

պարագա.

Օրինակ՝ **Իրիկնապահին** (ժամանակի պարագա) **պատի տակ** (տեղի պարագա) **նստելը** պապիս հին սովորությունն էր:

Այս լրացումները կոչվում են **կողմնակի**, որովհետև սրանք ոչ թե նախադասության ստորոգյալի, այլ դերբայի լրացումներ են: Դերբայի լրացումներն իրենց հերթին կարող են ունենալ լրացումներ, որոնք այլևս կողմնակի չեն: Վերևում տրված օրինակներում լրացման լրացումներ են **փորձառու** և **որևէ** բառերը:

Դերբայական դարձվածի շարադասությունը և կետադրությունը

Դերբայական դարձվածը դրվում է նախադաս, միջադաս և վերջադաս:

Առաջադաս և վերջադաս դերբայական դարձվածները նախադասությունից տրոհվում են բութով, իսկ միջադասը՝ երկու կողմից ստորակետով:

Օրինակ՝

Առաջադաս

Ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից՝ *ես մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը:*

Վերջադաս

Ես մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը՝ ***ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից:***

Միջադաս

Ես, ***ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից,*** *մտնում եմ ճամփեզրի՝ մեծ-մեծ փեղկերով սրճարանը:*

Առաջադրանք

Դո՛ւրս գրիր դերբայական դարձվածները՝ առանձնացնելով գերադաս անդամը:

Առատ լույսից շլացած՝ անընդմեջ այս ու այն կողմ էին ցատկում խայտացող ձկներ:

Եկան երկու նավաստի՝ ձեռքներին տախտակներ բռնած:

Վաղ առավոտյան՝ ժամը վեցին, նա գնաց գետափ՝ աշխատելու այնտեղ գտնվող արհեստանոցում:

Նա հիշեց Հռոմի կայսր Ներոնին, որը, իր իսկ աթոռանիստ քաղաքն այրելով, կամենում էր բանաստեղծական ներշնչանք ստանալ դրանից:

Սմբատը, ակամա գրավված Շուշանիկի պայծառ աչքերով, համակրելի դեմքով, դիտում էր նրան:

Բոլորը նայեցին իրար՝ ապարդյուն փորձելով կռահել՝ ինչ կարող է պատահած լինել:

Իմացի՛ր

***Եթե դերբայական դարձվածը հաջորդում է *և, ու, կամ* շաղկապներին, կարող է կետադրվել թե՛ առաջադաս, թե՛ միջադաս:

Օրինակ՝

Անցավ ու **տեսնելով փթթող երկիրը՝** նախանձից քարացրեց այն:

Անցավ ու, **տեսնելով փթթող երկիրը,** նախանձից քարացրեց այն:

***Եթե առաջադաս կամ միջադաս դերբայական դարձվածին հաջորդում է օժանդակ բայը՝ *եմ,* ապա դերբայական դարձվածը չի տրոհվում:

Օրինակ՝

Ամանները լվանալով էր անցկացրել իր առաջին օրը հյուրանոցի խոհանոցում:

Դեռ լույսը չբացված էին հեռացել զինվորները գյուղից:

Առաջադրանքներ

ա) Գտի՛ր դերբայական դարձվածները, որոշի՛ր նրանց պաշտոնը:

բ) Կետադրի՛ր տրված նախադասությունները:

Ընդարձակ քարե սանդուղքով վեր բարձրանալով նրանք մտան մի մութ միջանցք:

Այդ մտքից անհանգստացած ու փոքր-ինչ երկյուղած շուռ եկավ դեպի խորհրդավոր ուղևորը կարծես պաշտպանվելու նրանից:

Տեսնելով նրանց կյանքի փորձից բխած իմաստությունը մտա խիտ թփուտների տակ ու լավ թաքնվեցի:

Գուցե փրփրահոս Բասուտա գետը խառնվելով մի ուրիշ կարկաչուն գետի հասնում է այն լազուր ծովին որի ափին գույնզգույն ավազի վրա մի օր նստել էին կինը և նկարիչը անէացած լիովին ու կտրված առօրյայից:

Վարպետ Սարգիսն էր այդ որը ճակատի քրտինքը սրբելով հողոտ բաճկոնը մեջքին գցելով նստեց մի քարի ծխելու իր նախշազարդ ծխամորճը:

Լիլիթը ականակիտ աղբյուրի մոտ նստած ականջ դրած նրա բյուրեղյա նվագին անէացած նայում էր աստղազարդ երկնքին:

Վարժություն

Կետադրությունից ելնելով՝ բաց թողած տեղերում տեղադրի՛ր տրված բայերի դերբայական այն ձևը, որը քերականորեն և տրամաբանորեն կհամապատասխանի նախադասությանը.

տեղավորել, շրջապատվել, հասնել, նայել, հեռանալ, հայտարարել, կանգ առնել, օժտվել, մեկուսանալ

Սմբատ Բագրատունին, Դվինից --------- , առանց որևէ տեղ --------- , գնաց հայրական կալվածքը, ուր նրա եղբայրներն էին՝ իր պես անվեհեր ռազմավարի հմտություններով ---------: Տեղ --------- պես նրան պատշաճ ընդունելության արժանացրին՝ --------- ամենաշքեղ սենյակում:

Ամրոցը հին էր, -------- ամրակուռ պարիսպներով, բարձր աշտարակներով՝ արթուն աչքի նման շուրջը ------- դիտանցքերով:

Երեկոյան, իր սենյակում --------, զորավարը խորհում էր, որ մայրաքաղաքում կարող էին արքայի ականջը լցնել, թե ինքը թողել է Դվինը՝ բացեիբաց -------- իր դժգոհությունը նոր գահ բարձրացած արքայի թագադրման առթիվ:

(ըստ Ստ. Զորյանի)

ՏԵՔՍՏ

Մենախոսություն և երկխոսություն

Խոսքի դրսևորման կարևոր ձևերից են մենախոսությունը և երկխոսությունը:

Առօրյա կյանքում մարդկանց փոխադարձ շփումը իրականացվում է նախ և առաջ **զրույցի միջոցով**, իսկ զրույցը ոչ այլ ինչ է, քան մարդկանց միջև մտքերի փոխանակություն, խոսակցություն կամ երկխոսություն: Առօրյա խոսքում, կենցաղում դա զրույց է:

Օրինակ՝

Երբ Նասրեդինը սովորում էր դպրոցում, ուսուցիչը երեխաներին հաճախ պատմում էր բնության, տարվա ժամանակների, ցերեկը գիշերվա փոխվելու մասին: Մի անգամ էլ նա դասի ժամանակ ասաց.

- Ահա այժմ գարուն է: Օրերը երկարում են, գիշերները՝ կարճանում: Իսկ մեկ ամիս անց, երբ սկսվի ամառը, օրը կերկարի մի ամբողջ ժամ...

Անցավ մեկ ամիս. դասի ժամանակ նորից խոսք բացվեց տարվա ժամանակների մասին, և ուսուցիչը հարցրեց Նասրեդինին.

- Դե՛, Նասրեդի՛ն, ասա՛ մեզ՝ օրը քանի ժամ ունի:

- Հիմա օրերն ունեն քսանհինգ ժամ, չնայած մնացած ժամանակ նրանք բաղկացած են քսանչորս ժամից,- համարձակ պատասխանեց Նասրեդինը:

Գիտական երկխոսություն. մտքերի փոխանակություն, բանավեճ

Այս երեք հասկացությունները սերտ շաղկապված են միմյանց, պայմանավորված են մեկը մյուսով:

Մասնագիտական բնագավառում, աշխատանքային միջավայրում զրույցը դառնում է **երկխոսություն, բանավեճ՝** ամենատարբեր թեմաներով՝ աշխատանքի ընդունում, կարգապահական հարցի քննարկում, կազմակերպական միջոցառում, փոխադարձ հարաբերությունների պարզաբանում, ստեղծագործության քննարկում և այլն:

Գեղարվեստական ստեղծագործություններում հերոսների խոսակցությունն իրար հետ ներկայանում է իբրև **երկխոսություն,** իսկ միայնակ խոսող հերոսի մտքերի արտահայտությունը՝ **մենախոսություն,** որոնք սերտ ձուլված են հեղինակային խոսքին:

Իմացի՛ր

Առաջին դեմքով ներկայացվող քնարական յուրաքանչյուր խոսք կարելի դիտարկել իբրև **մենախոսություն** ՝ ամենատարբեր թեմաներով:

Յուրատեսակ մենախոսություն է երկիր Նաիրիի ճակատագրով մտահոգ բանաստեղծի խոսքը՝

Մի՞թե վեջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի
Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ
Պատել պայծառ Նաիրի:

Երկխոսությունը բնորոշ է գեղարվեստական արձակին, բայց այն հանդիպում է նաև չափածոյում, հատկապես պոեմներում, բալլադներում, չափածո առակներում:

Ավ. Իսահակյան

Առակ

Ժողվեցան *մի օր ծառ ու ծիլ բոլոր,*
Որ իրենց համար ընտրեն թագավոր.
Շատ խորհուրդ արին ու դարձան ապա
Ասին *ձիթենուն.*
- Եղի՛ր թագավոր, իշխի՛ր ***մեր վրա****:*
- Իմ ինչի՞ն է պետք, -ասաց ձիթենին,-
Ես իմ գործն ***ունիմ****. չէ՞ որ ամենին*
Սնունդ եմ բաշխում իմ պտուղներով.
Ես ինչպե՞ս իշխեմ իմ բարությունով:

Նորից խորհեցին ու դարձան ապա
Ասին *թզենուն.*
-Եղի՛ր թագավոր, իշխի՛ր ***մեր վրա****:*
- Ո՛չ, ինձ համար չէ,- ասաց թզենին,-
Ես հաճելի եմ չէ՞ որ ամենին՝
Քաղցրիկ ու անուշ իմ պտուղներով.
Ես ինչպե՞ս իշխեմ իմ քաղցրությունով...

Խորհրդի ***նստան*** *և խաղողենուն*
Եկան դիմեցին.
- Ինչե՞ր եք ասում,
Թողնեմ իմ գինին՝ ոսկի ու պայծառ,
Որ ցնծությունով ***լեցնում է*** *աշխարհ,*
Զվարթ երգերով թնդում սար ու ձոր.

Ո՛չ, իմ բանը չէ լինել թագավոր:

Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,
Որ չար տատասկին անեն թագավոր...
***- Կրլնիմ** թագավոր, և դրա համար*
Իմ սուր փշերով ես շա՜տ եմ հարմար.
***Կը խոցեմ** խորին, վա՜յ նրա օրին,*
*Որ **չընդունվանդի** իմ օրենքներին.*
*Եկե՛ք, **թուփիս** տակ մտե՛ք ապաստան...,-*
Ասաց և սրեց փշերը դաժան...

Առաջադրանք և հարց

ա) Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ դրանց դիմաց գրելով համապատասխան ճիշտ ձևը:

բ) Ինչպե՞ս կմեկնաբանես այդ ձևերի գործածությունը Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ:

Դրամատիկական ժանրի ստեղծագործություններում՝ դրամա, կատակերգություն, ողբերգություն, **երկխոսությունն ու մենախոսությունը** գեղարվեստական պատկերման **միակ ձևն** են:

Ոսկու կարասը

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն էլ՝ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ:

Ձմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարունքը վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզը չի ունենում, թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս՝ մեջը լիքը ոսկի: Եզները լծած թողնում է, վազում է գյուղը՝ հողատիրոջ մոտ:

– Հե՜յ, աչքդ լուս. – ասում է, քո հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տա՛ր:

– Չէ՜, ախպե՛ր, էդ իմը չի, – պատասխանում է հողատերը: – Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դուրս գա, քունն է. ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե չէ՝ քունը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ, աչքերը չորս է բաց անում: Ասում է.

– Ո՛չ քունն է, ո՛չ դրանը. իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել՝ իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է, կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում – ի՞նչ ոսկի – կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած ետ է գալի: Հրամայում է՝ պատժեն անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

– Չէ՜, թագավորն ապրած կենա, – գոռում են խեղճերը, – մեզ ինչո՞ւ ես սպանում, լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի, թե՝ ճշմարիտ, ոսկի է:

– Վա՜հ, – զարմանում է թագավորը: Ասում է՝ երևի լավ չտեսա, կամ տեսածս էն կարասը չէր: Վեր է կենում, մին էլ գնում:

Կարասը բաց է անում... դարձյալ մեջը լիքը օձ:

Էս ի՛նչ հրաշք է, ի՜նչ միտք ունի՝ չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

– Բացատրեցե՛ք, – ասում է, – ո՛վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: Էն հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում՝ կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում՝ ոսկի: Էս ի՞նչ կնշանակի:

– Դրա բացատրությունն էս է, թագավո՛ր, եթե չես բարկանալ, – ասում են իմաստունները: – Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես՝ ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

– Լա՛վ, – ասում է, – դե հիմի է՛ն որոշեցեք, թե էդ երկուսից որի՞ն է պատկանում գտած ոսկին:

– Իհարկե հողատիրոջը, – ձայն է տալի վարող գյուղացին:

– Չէ՛, վարողինն է, – մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

– Լա՛վ, լա՛վ, կացե՛ք, – կանգնեցնում են իմաստունները, – ի՞նչ ունեք դուք՝ տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք գնան, իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին՝ էստեղ, չարը՝ էն ագահ թագավորի մոտ:

Բառերի բացատրություն

խոփ- *գութանի՝ հողի մեջ խրվող մասը*

ռանչպար-*հողագործ*
օխտը-*յոթ*
օրավար-*մեկ օրվա ընթացքում կատարած վար*

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հնարավո՞ր է այս տեքստը վերապատմել առանց երկխոսությունների:

բ) Քանի՞ հոգու միջև է տեղի ունենում խոսք ու զրույցը:

գ) Դո՛ւրս գրիր հեքիաթից կոչական ու բառ-նախադասություն պարունակող նախադասությունները՝ ընդգծելով դրանք:

դ) Գրի՛ր ***տղա, բարի, չար, իմաստուն, թագավոր, ագահ, բացատրել, վճռել, զարհուրել, ուղարկել, վիճել*** բառերի հոմանիշ և հականիշ մեկական տարբերակ:

Խմբային աշխատանք-մրցույթ

Փորձե՛ք բեմականացնել այս հեքիաթը երկու տարբերակով:

Իմացի՛ր

Երկխոսություններում էլ ավելի ընդգծվում է անհատականությունը:

Հետաքրքիր է

Մարդիկ երկխոսության ընթացքում դիմում են տարբեր ժեստերի, որոնց իմացությունը օգնում է երկխոսության պահին խոսակցին ճիշտ հասկանալ:

*-եթե խոսակիցը ցուցամատի և բութ մատի օգնությամբ շոշափում է ծնոտը, ուրեմն **գնահատողական** է նրա վերաբերմունքը,*

*-եթե խոսակիցը մատները բուրգի ձևով միահյուսում է, ուրեմն զգում է **վստահություն**,*

*-եթե խոսակիցը ձեռքերով բռնում է արմունկները, ուրեմն դարձյալ **ինքնավստահ** է,*

*-եթե խոսակիցը շոշափում է ձեռքի ափերը, մատների ծայրերով սեղանին թխկթխկացնում, ուրեմն զգում է **անվստահություն**,*

*-եթե խոսակիցը փախցնում է հայացքը, ուրեմն **անազնիվ է և ստում է:***

(ըստ Ա. Ադիլխանյանի)

Առաջադրանք.

Քո կարդացած գեղարվեստական ստեղծագործությունից դո՛ւրս գրիր ըստ քեզ առավել հետաքրքրություն ներկայացնող երկխոսություն. հիմնավորի՛ր, թե ինչով է այն կարևորվել քեզ համար:

Տեղեկատվական տեքստ
Հարցազրույց

Հարցազրույցի ընթացքում կարևոր է յուրաքանչյուր կողմի պահվածքը:

Եթե դու հարցազրույց կազմակերպող ես.

Նկատի ունեցի՛ր, թե ինչ նպատակ ես հետապնդում քո հարցազրույցով, ով է քո զրուցակիցը, արդյոք դու նրան լավ ճանաչո՞ւմ ես, ունե՞ս ձեռքիդ տակ անհրաժեշտ հարցեր և այլն: Հարցը տալուց հետո կարողացի՛ր համբերատար լինել, լսելու ունակություն դրսևորի՛ր, մի՛ ոգևորվիր և թույլ մի՛ տուր, որ զգացմունքները քեզ իշխեն:

Հիշի՛ր

Խոսքը արծաթ է, լռությունը՝ ոսկի:

Դու պետք է կարողանաս մինչև վերջ հասցնել քո հարցազրույցը, տալ վերջին հարցը և համոզվել, որ քո հարցազրույցը կայացել է:

Եթե դու հարցազրույց տվողն ես.

Քեզ համար պարզի՛ր առաջնայինը. ո՞րն է քեզնից հարցազրույց վերցնելու նպատակը, և ըստ այդմ՝ դրսևորի՛ր առավել զգոնություն: Դու պետք է զինված լինես անհրաժեշտ տեղեկատվությամբ, որ կարողանաս յուրաքանչյուր հարցի պատասխանել հնարավորինս կարճ, փաստերով, բայց հանգամանալից:

Օրինակ վերցրո՛ւ Շառլ Ազնավուրից

(Շ. Ազնավուրի «Անցած օրեր» գրքից)

Երբ հարցնում են՝ ինձ ավելի շատ հա՞յ եմ զգում, թե՞ ֆրանսիացի, միայն մի հնարավոր պատասխան եմ տալիս. հարյուր տոկոսով ֆրանսիացի և հարյուր տոկոսով հայ: Ես կաթով սուրճի եմ նման. հենց որ երկու բաղադրիչները խառնում ես իրար, բաժանելն այլևս անհնար է: Այս երկու ազդեցությունները, ավելացրած բոլոր մյուսները, ինձ շատ բան են տվել ու անկախ ինձնից ձևավորել մի ոճ, որը հատուկ է ինձ: Երբ ուրիշները պետք է իրենց նեղություն տային ուսումնասիրելու, ես արդեն այս երկու մշակույթներն իմ արյան մեջ ունեի:

Մոսկվայից Նյու Յորք, Ռիո դե Ժանեյրոյից Սինգապուր, Փարիզից Միդնեյ ես ակոսել եմ աշխարհը լայնքով ու երկայնքով՝ բազում անգամ պտտվելով երկրագնդի շուրջը միշտ նույն ցանկությամբ՝ տեսնել, սովորել և ճանաչել ժողովուրդներին, լեզուներ, կրոն, կենսակերպ, հանդուրժողականություն և ըմբռնում: Սովորեցի երբեք չդատապարտել և մանավանդ խրատաբանել: Այդքան բան տեսնելով, այդուհանդերձ, կարծում եմ, թե դեռ ոչինչ չեմ տեսել, և հայտնագործելու ծարավս մնում է անհագ:

Ինչքան շատ եմ անում,
Այնքան շատ է մնում անելու...

Առաջադրանք.

Հարցազրույց վերցրու՛ արցախյան ազատամարտի որևէ մասնակցից՝ նախապես կազմելով տրվող հարցերը:

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտական ոճ

Ըստ **բովանդակային-իմաստային, բառապաշարային, քերականական, հուզաարտահայտչական** հատկանիշների՝ հայերենում առանձնացվում են հետևյալ հիմնական գործառական ոճերը.

Առօրյա-խոսակցական
Գեղարվեստական
Գիտական
Պաշտոնական
Հրապարակախոսական

Գիտության ոլորտում գործածվող խոսքը դիտարկվում է իբրև **գիտական ոճ:**

Այս ոճին բնորոշ են՝

*խոսքի մենախոսական բնույթը,
*խոսողի անձնական վերաբերմունքի բացակայությունը,
*խոսքի հուզականության և պատկերավորման բացակայությունը,
*խոսքի ճշգրտությունը,
*տրամաբանական դատողությունները,
*բառերի գործածությունը ուղղակի իմաստով,
*տերմինների, մասնագիտական բառերի գործածումը,
*շարահյուսական բարդ կառույցների կիրառումը:

Գիտական ոճն ունի ենթաոճեր.

1. բուն գիտական (ակադեմիական) - մենագրություն, ատենախոսություն, գիտական զեկուցում, հոդված, գիտական կարծիք, գրախոսություն
2. գիտաուսումնական - դասագիրք, ուսումնական ձեռնարկ, բանավոր դասախոսություն,
3. գիտահանրամատչելի - գիտահանրամատչելի գիրք, հոդված, դասախոսություն, զեկուցում, բանավեճ:

Հետաքրքիր է

Քաղաքատնտեսագետը, զինվելով վիճակագրական թվերով, **ապացուցում է**՝ ներգործելով իր ընթերցողների կամ ունկնդիրների մտքի վրա, թե հասարակության մեջ այս կամ այն դասակարգի դրությունը բարելավվել է կամ

շատ է վատացել... Պոետը, զինվելով իրականության կենդանի ու վառ պատկերացմամբ, ճշմարիտ պատկերով **ցույց է տալիս**՝ ներգործելով իր ընթերցողների երևակայության վրա, թե հասարակության մեջ այս կամ այն դասակարգի դրությունը բարելավվել է կամ շատ է վատացել...

Մեկը ապացուցում է, մյուսը ցույց է տալիս, և **երկուսն էլ համոզում են**, միայն թե մեկը տրամաբանական փաստարկներով, մյուսը՝ պատկերներով (Բելինսկի):

1.Վերլուծական շարադրություն

Հետևի՛ր մեր խորհուրդներին

Սիրելի՛ աշակերտ, դու արդեն բավական մեծ ես և կարող ես տարբեր թեմաների մասին քո դատողություններն ու պատկերացումները ստեղծագործաբար, առավել մանրամասն ու հանգամանալից արտահայտել: Քո մտքերի այդ շարադրանքը ընդունված է անվանել **շարադրություն,** որը սովորաբար բաժանում են մի քանի տեսակների՝

բառ-շարադրություն - սա շարադրության պարզագույն ձևն է, երբ քեզ տրվում է որոշակի բառացանկ, և դու դրանցով կազմում ես այնպիսի նախադասություններ, որոնք իմաստով լրացնում են միմյանց ու ստեղծում կապակցված խոսք,

ազատ շարադրություն - դու ես ընտրում շարադրության թեման ու վերնագիրը, և դրա մասին կամ դրա շուրջ արտահայտում ես մտքերդ,

թեմատիկ շարադրություն - քեզ տրվում է կոնկրետ որևէ թեմա. այդ թեման կարող է լինել գրական որևէ ստեղծագործության, նրա գլխավոր հերոսների մասին, ինչպես՝ «Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը», «Դանիել Վարուժանի «Ձոն» բանաստեղծությունը», «Լևոնի կերպարը «Արտիստը» պատմվածքում»: Եվ կամ ուսուցիչն ինքն է որոշում այդ շարադրության վերնագիրը, ինքն է տալիս թեման, ասենք՝ «Ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը», «Իմ հայրենիքը», «Խոհեր քննությունից առաջ», «Ես նախանձ չեմ» և այլն:

Դրանց տարբերությունն այն է, որ **առաջին դեպքում** շարադրությունը հենվում է գրականության փաստական նյութի վրա, և կատարվում է այդ նյութի գնահատում և արժևորում քո կողմից. այս դեպքում դու առավել պետք է դրսևորես վերլուծական մտածողություն:

Եթե քեզ հանձնարարված է գրել շարադրություն՝ գրական ստեղծագործության կամ նրանում գործող հերոսների մասին, ապա դու՝

չպետք է մեխանիկորեն վերաշարադրես դասագրքային վերլուծությունը,

նախ և առաջ պետք է կարդաս բնագիրը՝ բանաստեղծություն, պատմվածք և այլն,

անպայման մտապահես ստեղծագործության բովանդակությունը,

ճիշտ ընկալես հերոսներին ու նրանց գործելակերպը,

համադրես քո ընկալումը դասագրքային նյութի հետ,

շարադրանքում ըստ պատշաճի մեջբերումներ կատարես բնագրից:

Իսկ **երկրորդ դեպքում** դու ավելի ստեղծագործաբար ես մոտենում թեմային, առավել անկաշկանդ ես քո մտքերն արտահայտելու տեսանկյունից. դրանցում բացահայտվում է քո ներաշխարհը, քեզ շրջապատող մարդկանց, քո ընկերների, հարազատների, դպրոցի ու ծննդավայրի հանդեպ քո վերաբերմունքն ու աշխարհընկալումը: Քեզ պետք է օգնի քո վառ երևակայությունը և հարուստ բառապաշարը:

Թվարկված այս տեսակները **վերլուծական** են, նաև **ստեղծագործական,** քանի որ յուրաքանչյուրի դեպքում դու պետք է թեման վերլուծելու, ավելի գեղեցիկ, պատկերավոր ներկայացնելու հմտություն դրսևորես, հարուստ բառապաշարով արտահայտես մտքերդ, ավելի անկեղծ լինես և այլն:

Հիշի՛ր

Շարադրությունը քո մտածելու, վերլուծելու ունակությունն է՝ ներքին խոսքը, և այդ խոսքը գրավոր վերարտադրելու կարողությունը:

Ինչ թեմայի շուրջ էլ գրելիս լինես, ինչպես էլ գրելիս լինես՝ պատմողաբար, նկարագրելով, ստեղծագործաբար թե վերլուծաբար, հաստատ իմացի՛ր, որ կհաջողես, եթե՝

***լինես անկեղծ ու անկաշկանդ,**

***անհրաժեշտ չափով տիրապետես թեմայիդ առնչվող փաստական նյութին,**

***ունենաս խոսքդ ճիշտ կառուցելու հմտություն,**

***մտքերդ ունենան տրամաբանական հաջորդականություն,**

***ունենաս անհրաժեշտ բառապաշար,**

***խուսափես երկարաշունչ նախադասություններից,**

***տիրապետես ուղղագրությանն ու կետադրությանը:**

Առաջադրանքներ

Տրված թեմաների շրջանակներում զարգացրո՛ւ շարադրություն գրելու քո կարողությունները:

* ***«Ծննդյան նվերը»***

Ուշադի՛ր կարդա քեզ տրված տեքստը:

Աղջիկս հրավիրված էր ընկերուհու ծնունդին: Մտահոգված էր, թե ինչ նվեր պետք է գնի:

Ես սկսեցի խորհուրդներ տալ. միջամտեց տատիկը՝ ասելով.

- Մեր ժամանակ նվիրում էինք միայն մեր ձեռքի աշխատանքը:

Ես ևս պնդեցի, քանի որ դուստրս հրաշալի ասեղնագործում էր: Բայց նա մեզ հակադրվեց՝ ասելով, որ ընկերները կմտածեն բոլորովին այլ կերպ, կասեն, որ ինքը ընդամենը ժլատություն է արել:

- Ես չեմ ուզում վատ ընկերուհու տպավորություն թողնել,- եզրափակեց ծննդյան թեման աղջիկս:

Օգնող հարցեր

1. Ի՞նչ խոհեր արթնացրեց քո մեջ այս փոքրիկ միջադեպը. ո՞վ է ճիշտ՝ տա՞տը, թե՞ թոռնիկը:
2. Նման իրավիճակում եթե դու լինեիր. ինչպե՞ս կվարվեիր:
3. Սիրում ես նվիրե՞լ, թե՞ ստանալ նվերներ:

* **Ուշադի՛ր նայիր գարունը պատկերող որևէ բնանկար:**

Դու կարող ես գրել շարադրություն՝ ***«Գարուն»*** ընդամենը վերարտադրելով նկարից ստացած քո տպավորությունները. գարնան ո՞ր պահն է՝ արևոտ, պայծառ բնությո՞ւն, թե՞ գարնան վարար անձրև, կենդանիներ կա՞ն, թե՞ մարդիկ են իրենց ծաղկած այգիներում և այլն:

Մի՛ մոռացի՛ր ամենակարևորը՝ գույները:

Ի՞նչն է քեզ ամենից ավելի դուր գալիս այդ նկարում:

Այդ ամենին ավելացրո՛ւ քո երևակայությունը, հարուստ բառապաշարը:

Խուսափի՛ր բառերի կրկնությունից, մի՛ երկարաբանիր, հիշի՛ր, որ քո նախադասությունները շատ երկար չպետք է լինեն, և քո միտքը չպետք է լինի խրթին:

* ***«Գույների կախարդը»***

Դու հավանաբար եղել ես Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում, տեսել ես նրա կտավները, հիացել նրա կախարդական գույներով: Մեկ անգամ ևս այցելի՛ր՝ այս անգամ հստակ նպատակ ունենալով գրել մեծ նկարչի և նրա արվեստի մասին:

Որպեսզի քո շարադրությունը վերացական չլինի, և դու կարողանաս լրջորեն ներկայացնել քո վերլուծական աշխատանքը, ապա ցուցասրահում եղի՛ր խիստ ուշադիր: Տետրումդ նշի՛ր, թե հատկապես որ կտավները քեզ դուր եկան, որ տարիքում է նկարել Սարյանը դրանք:

Անհրաժեշտության դեպքում անպայման հարցեր տո՛ւր արվեստագետ-ուղեվարին:

Բառերի շտեմարան

Բառարանի օգնությամբ բացատրի՛ր տրված բառերը:

էքսկուրսավար, ուղեվար, գիդ

* **«Իմ հայրենակիցն է Շառլ Ազնավուրը»**

Թեման քո մեջ արթնացնում է խոհեր Մեծ եղեռնի, կորցրած հայրենիքի, աշխարհով մեկ սփռված քո հայրենակիցների մեծ կարոտի մասին:

Դու պետք է կարդաս և նյութեր հավաքես Ազնավուրի մասին, լսես նրա երգերը, իմանաս նրա բանաստեղծություններից:

Դու պետք է ի մի բերես քո դատողությունները հայրենիքի ու հայրենասիրության, նաև խաղաղության մասին:

Իսկ ամենակարևորն այն է, որ քո շարադրության մեջ պետք է զգացվի, թե ինչ է հայրենիքը մեր Սփյուռքի հայրենակիցների, մանավանդ Շառլ Ազնավուրի համար: Ինչպե՞ս են նրանք ցուցաբերում իրենց սերը հայրենիքի հանդեպ:

Օգնող նյութ

«...Ինչո՞ւ եմ դարձել այն, ինչ կամ: Իմ կողմից ես համոզմունք ունեմ, որ մի ձայն էր պետք, որ հիշեցներ, թե հայ ժողովուրդը գոյություն ունի դեռևս, հակառակ այն բանի, ինչ նա ապրել է...

Քեզ համար, Հայաստա՛ն...

Երկիրը ցնցվեց Հայաստանում, եվ մթամած հորիզոնը մթագնեց առավել... Ես երբեք չեմ զգացել, որ շատ հետաքրքրված եմ, թե ինչ է կատարվում այնտեղ՝ մեր հիշողության ծայրին, երբ հանկարծ գիտակցեցի արմատներս, գիտակցեցի, որ դարեր առաջ հարազատներիս համար ամեն ինչ սկսվել է այս հողի վրա, որը հենց նոր շուռ էր եկել և դարձել բաց գերեզման շատ ու շատ հայերի համար, դարձել թշվառության ու սգի նոր անդունդ...

Մենք հիմնեցինք «Ազնավուրը Հայաստանին» միությունը, իսկ ես գրեցի.

Գարուններդ կծաղկեն նորեն,
Լավ օրեր կծնվեն նորեն,
Ցմռանից հետո,
Դժոխքից հետո,
Կվերընձյուղվի ծառդ կենաց
Քեզ համար, Հայաստա՛ն:

Գալիք օրերդ նորեն կերգեն,
Ջավակներդ նորեն տուն կշինեն,
Սարսափից հետո,
Վախից հետո,
Աստված կբուժի լկված հողը քո
Քեզ համար, Հայաստա՛ն»:

(հատված «Անցած օրեր» գրքից)

Բառերի շտեմարան

Իբրև հասարակ անուն՝ ***ազնավուր***-ը ածական է և գոյական, որի նշանակություններն են՝ 1. ***Ազնիվ, ազնվական***, 2. (փխբ.) ***քաջ, կտրիճ***, 3. ***Գեղեցիկ***, 4.Հեքիաթներում՝ ***քաջք, երևակայական էակ***:

*Գրի՛ր շարադրություն հացի մասին և ի՛նքդ ընտրիր վերնագիրը:

Հասկը

Արտի եզրին մի հասկ ընկավ ոտքիս տակ,
Տրորեցի անփութորեն ու անցա,
Մանուկ էի՝ ամեն ինչին անգիտակ,
Մի հասկն ի՞նչ էր, տրորեցի ու անցա:
Հայրս տեսավ, մտերմորեն նախատեց.
«Հացն ափսոս է, չեն տրորի ու անցնի,-
Ու խնամքով թաշկինակում փաթաթեց,-
Հողի մարդը խեթ չի նայի սուրբ հացին»:
Ես մանկական անհոգությամբ զարմացա.
«Ինչո՞ւ է ինձ հայրս այդպես նախատում»:
Ու տարիներ հետո միայն հասկացա
Հողի մարդու խոսքերը խոր, իմաստուն:
Ու երբ հիմա գետնին մի հասկ է ընկնում,
Արտի ցավով հորս խոսքն եմ միշտ կրկնում.
-Հացն ափսոս է, չեն տրորի ու անցնի,
Հողի մարդը խեթ չի նայի սուրբ հացին:
(Ս. Մուրադյան)

Օգնող հարցեր

ա) Ի՞նչ խոհեր արթնացրեց քո մեջ այս բանաստեղծությունը:

բ) Ինչպե՞ս կբացատրես *«Ամեն ինչի առատությունը դեռ հաց չէ, բայց հացի առատությունը ամեն ինչ է»* նախադասության իմաստը:

գ) Ձեր ընտանիքում արդյոք խնայո՞ւմ են հացը:

դ) Դարձվածաբանական բառարանի օգնությամբ գրի՛ր *հաց* բառով կազմված դարձվածքներ և գործածի՛ր դրանք քո շարադրանքում:

*Գրի՛ր շարադրություն *«Ես նույնն եմ մնացել», «Մանկության հուշեր», «Եթե նորից փոքրիկ լինեի...»* թեմաներից որևէ մեկով:

Օգնող հարցեր

1. Ո՞րտեղ է անցել քո մանկությունը. ի՞նչ խոհեր է քո մեջ արթնացնում ծննդավայրդ, եթե դու արդեն այնտեղ չես ապրում:

2.Հաճա՞խ ես հիշում քեզ փոքր հասակում. որ՞ւ ես հիշում, թե քեզ հիշեցնում են դեպքեր քո մանկական չարաճճիություններից:
3. Ո՞րն է մանկությանդ հետ կապված առաջին հիշողությունը՝ լավ կամ վատ:
4.Հիշո՞ւմ ես մանկությանդ ընկերներին. արդյոք նրանք այժմ քո կողքի՞ն են:

2.Գիտական հոդված և հաղորդում

* Գիտական աշխատանքների մեջ մեծ կիրառություն ունի գիտական **հոդվածը**, որը, լինելով համեմատաբար փոքր ծավալի աշխատանք, ունի մեկ կամ մի քանի հարց առաջադրելու և լուծելու նպատակ:

Գիտական հոդվածները հրատարակվում են գիտական ամսագրերում, հանդեսներում և ժողովածուներում:

Հոդվածը կարող է նախատեսված լինել զուտ գիտական՝ տվյալ բնագավառի մասնագետների համար և գրված լինել բուն գիտական-ակադեմիական ոճով. նման հոդվածները հասարակության լայն խավերի համար մատչելի չեն:

Հասարակության լայն զանգվածներին ուղղված հոդվածը գրվում է գիտահանրամատչելի ոճով և տպագրվում է հենց նմանատիպ լրագրերում ու հանդեսներում:

Հոդվածի կարևոր ու պարտադիր հիմքերն են՝

-հիմնախնդրի առկայություն - Հոդվածը պարտադիր պետք է անդրադառնա տվյալ գիտական բնագավառում չուսումնասիրված կամ տարբեր տեսակետների առիթ տված որևէ խնդրի

-հիմնախնդրի կարևորություն և արդիականություն - Հոդվածը պետք է անպայմանորեն կարևորություն ներկայացնի գիտական տվյալ բնագավառում, և նրանից ակնկալվի գիտական արդյունք:

-անհրաժեշտ փաստեր - Միայն լուրջ փաստերով, թվերով, ձեռք բերված ապացույցներով, տվյալ խնդրի շուրջ առկա տեսակետների համադրմամբ կարելի է հիմնախնդիրը լուծել:

-եզրահանգում և ամփոփում - Գիտական խնդրի մանրակրկիտ վերլուծությունը պետք է ամփոփվի եզրափակիչ դրույթներով:

-գիտական ոճի շարադրանք - Ամբողջ հոդվածը սկզբից մինչև վերջ պետք է գրված լինի գիտական ոճին բնորոշ բառապաշարով, քերականական ճշգրիտ կառույցներով:

* **Գիտական հաղորդումը** ոչ շատ ծավալուն զեկուցում է որևէ մասնավոր հարցի, գիտական հայտնագործության, նոր փաստի հայտնաբերման վերաբերյալ: Առանց գիտահետազոտական լուրջ աշխատանք կատարելու, հիմնարար խնդիրը բացահայտելու՝ հնարավոր չէ գիտական հաղորդում գրել:

Ամենահինը՝ Արենի գյուղում

Վայոց Ձորի մարզում գտնվող Արենիի քարանձավներից մեկում հայտնաբերվել է աշխարհի ամենահին գինեգործարանը: Այս մասին ի լուր աշխարհի հայտարարել է ԱՄՆ-ի աշխարհագրական միությունը: «Journal of Archaeological Science» ինտերնետային պարբերականում տեղադրված տեղեկատվության համաձայն՝ հնագետների միջազգային խումբը քարանձավային համալիրում հայտնաբերել է 6000 տարվա հնության խաղող ճզմելու տարա, թթվեցման կժեր, գավաթներ և փիալաներ: Հնէաբանները նաև հայտնել են, որ քարանձավում հայտնաբերվել են խաղողի կորիզներ, ճզմված խաղողի մնացորդներ, չորացած ողկույզներ: Պեղումներ իրականացնող ղեկավարներից մեկի՝ Կալիֆոռնիայի համալսարանը ներկայացնող գիտնական Գրիգոր Արեշյանի հավաստիացմամբ գտածոները գինեգործության ամենավաղ նմուշներ են: Իսկ Փենսիլվանիայի համալսարանին կից բիոմոլեկուլյար հնէաբանության լաբորատորիայի գիտական ղեկավար Պատրիկ Մաքհուերնը պնդում է, որ գինու մշակույթը, այդ թվում՝ եվրասիական խաղողի յուրացումը, սկիզբ են առել Հայաստանի լեռնային շրջաններում:

Մինչև այժմ գինեգործությանը առնչվող ամենահին նմուշներ էին համարվում եգիպտական Ակորպիոն Առաջին փարավոնի դամբարանում հայտնաբերված 5100 տարվա հնության գտածոները:

Նշենք, որ այս ամենը հայտնաբերվել է հենց այն տեղում, ուր 2010թ. ամռանը հայտնաբերվել էր աշխարհի ամենահին՝ 5500 տարվա հնություն ունեցող կաշվե ոտնամանը:

(մամուլից)

Առաջադրանք

Կարդա՛ տրված տեքստը և փորձի՛ր ներկայացնել քո ընկալումը. գիտական ոճի ո՞ր տեսակը կարելի է համարել սա՝ գիտական հաղորդո՞ւմ, թե՞ գիտական հոդված:

Ամենահին բուրգերը

Նեղոսի հովիտը ընդունված է համարել օրրանը ամենահին քաղաքակրթության մեր մոլորակի վրա:

Եգիպտական կուլտուրան գալիս է շատ հեռվից, և այն ուղղակիորեն կապված է Նեղոսի հետ: Հեռավոր անցյալում եգիպտացիները սովորեցին հետևել Նեղոսի վարքագծին, սովորեցին նշումներ անել նրա մակարդակի տատանումների և ըստ այնմ էլ կանխատեսել իրենց անելիքները: Դա էլ նպաստեց երկրաչափության առաջացմանը և զարգացմանը, և թերևս դա էլ եղավ առաջին ազդակը գրության՝ հիերոգլիֆների առաջացման: Այսպես ձևավորվեց վաղ շրջանի եգիպտական կուլտուրան...

...Վերին Եգիպտոսը, նվաճելով Ներքին Եգիպտոսը, ստեղծում է միասնական Եգիպտական թագավորություն. դա եղավ 5200 տարի առաջ: Այդ պահից սկսվում է Եգիպտոսի հնագույն շրջանը՝ փարավոնների շրջանը: Եվ առաջին բուրգերի շրջանը...

Բուրգը դասվում է մարդկության խոշորագույն հայտնագործությունների շարքում...

Իմհոթեփը հսկա մի տարածություն վերցնում է բարձր պարսպի մեջ, ու այդ տարածքի ներսում հիմնում տաճարային բնույթի կառույցներ, բայց հիմնականը լինում է 60 մ բարձրությամբ վեցաստիճան բուրգը, իրականում վեց հատած բուրգեր իրար վրա դրված՝ աստիճանաբար փոքրացվող չափերով: Բոլոր վեց բուրգերը եղել են ամբողջովին քարից, բոլորն էլ՝ երեսպատված հղկված կրաքարե սալերով... Դա դեռ բոլորը չէ: Իմհոթեփը հղանում է նաև դամբարանի գաղափարը ու ստեղծում առաջին դամբարանը առաջին փարավոնի՝ Ջոսերի համար, նույն այդ աստիճանավոր բուրգի տակ՝ 30 մ խորության վրա: Բուն դամբարանը մի սրահ էր՝ գրանիտյա վիթխարի բլոկներից ագուցված, ուր կարելի է հասնել մեծ դժվարությամբ ու շատ հեռվից սկիզբ առնող անհաշիվ թունելների, վար ու վեր հորերի խիստ բարդ, խիստ խճճված սիստեմի միջով միայն: Ու այդ ամենը քողարկված, թաղված էր ավազի հաստ շերտի տակ...

Ջոսերի աստիճանավոր բուրգը... Դրա թողած տպավորությունը անհնար է համեմատել ինչ-որ բանի հետ. այդ տպավորությունը շատ ավելի հզոր է, շատ ավելի պրկող, քան շատ հետո հայտնված քառանիստ սրածայր բուրգերինը՝ Քեոփսի, Քեփրենի և այլն:

(Ըստ Գր. Գուրզադյանի)

Հարցեր և առաջադրանքներ

ա) Ո՞ր բառերն են պայմանավորել այս տեքստի գիտական ոճը:

բ) Բուն գիտակա՞ն, թե՞ գիտահանրամատչելի կհամարես տրված նյութը. հիմնավորի՛ր:

գ) Դո՛ւրս գրիր գիտական ոճին բնորոշ բառերը քո տետրում:

դ) Նախադասության ո՞ր տեսակն է գերակշռում հոդվածում:

Գիտե՞ք, որ...

Խաչքարը կոթող-հուշարձան է, որը բացառապես հայկական է: Դրանք հայ արվեստի ինքնատիպ նմուշներ են, որ դրվել են եկեղեցիների մոտ և գավիթներում, գերեզմանոցներում, բլուրների վրա, ժայռերին: Դրանք կոչվում են խաչքար, քանի որ կենտրոնում պատկերված է խաչ՝ քրիստոնեական հավատի խորհրդանիշը: Ամենաշատ խաչքարեր եղել են Ջուղա քաղաքի (այժմյան Նախիջևանի) գերեզմանատանը՝ շուրջ 10 000 խաչքար: Հայաստանի Հանրապետության տարածքում ամենաշատ խաչքարերը Նորատուս գյուղում

են, որտեղ դրանց թիվը հասնում է հազարի: Թվագրություն ունեցող ամենահին խաչքարը, որ հասել է մեզ, 9-րդ դարի է, որը կանգնեցված է Գառնիում:

(Մանկական հանրագիտարանից)

Օրինակ վերցրու

ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿԸ

(Շամպոլյոնը՝ եգիպտական հիերոգլիֆների վերծանող)

Մարդիկ հիերոգլիֆները ստեղծել են մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, այսինքն՝ շուրջ հինգ հազար տարի առաջ: Սկզբնական շրջանում դրանք եղել են սոսկ նկարային, սակայն հետագայում դրանք դառնում են հնչյունային. նկարներն այլևս նշանակում են ոչ թե առարկա, այլ դրա անվան առաջին բաղաձայն տառը: Այս ձևով եգիպտացիները ստացել են 24 հնչյունական նշան, և դրանց վերծանումը պիտի համարել մարդկային մտքի խոշորագույն նվաճումը: Այս յուրահատուկ գրի վերծանողը դարձավ ֆրանսիացի Ժան Ֆրանսուա Շամպոլյոնը:

1801 թվականին այցելելով Գրենոբլի դպրոցներից մեկը՝ Ժան Բատիստ Ֆուրիեն ուշադրություն դարձրեց տասնմեկամյա մի աշակերտի՝ Շամպոլյոնի վրա, որին ընկերները արևելյան դիմագծերի համար «եգիպտացի» էին անվանում: Ֆուրիեն զարմանքով նկատեց, որ վտիտ տղան միանգամայն ազատ խոսում է հունարեն և լատիներեն, իսկ հիմա էլ սկսել է ուսումնասիրել հին եբրայերենը: Փոքրիկ տղայի արտասովոր զարգացումը այնպիսի տպավորություն թողեց Ֆուրիեի վրա, որ իր մոտ հրավիրեց նրան: Նա տղային ման ածեց բոլոր սենյակներում, ցույց տվեց Եգիպտոսից բերված հուշահիրերի հարուստ հավաքածուն: Շամպոլյոնը ամբողջ ժամանակ լուռ էր, բայց երբ տեսավ հիերոգլիֆներով ծածկված պապիրուսի պատառիկներ, վեհերոտ հարցրեց.

-Որևէ մեկն արդեն կարդացե՞լ է սա:

-Ավա՜ղ, ո՛չ...

-Երբևէ ես կկարդամ սա,-ասաց տղան:

Տասներեք տարեկանում պատանին տիրապետում էր հունարենին, լատիներենին, հին եբրայերենին, արաբերենին, ասորերենին, սանսկրիտին և էլի՛ մի քանի հին լեզուների: Այդ հրաշամանուկի համբավը շատ շուտ հասնում է Փարիզ: Իր քաղաքի դպրոցներից մեկում քննություն տալիս, որպեսզի մեկնի Փարիզ՝ սովորելու, Շամպոլյոնի ներկայացրած «Եգիպտոսը փարավոնների իշխանության տակ» վերնագրով աշխատանքը այնքան լուրջ գիտական արժեք է ներկայացնում, որ պատանուն միանգամից ընտրում են դասախոսական կոլեգիայի անդամ: Այդ իմանալով՝ Շամպոլյոնը հուզմունքից կորցնում է գիտակցությունը:

Փարիզ մեկնելիս, հանրակառքում նստած, նա իր ավագ եղբորը խոստովանում է, որ իր կյանքի մեծագույն երազանքը Ռոզեթյան արձանագրությունը վերծանելն է: Եվ այդ երազանքին Շամպոլյոնը նվիրեց իր ողջ կյանքը:

1799 թվականին Նապոլեոնի՝ Եգիպտական արշավանքի ժամանակ հայտնաբերվում է Ռոզեթյան քարը՝ վրան երեք լեզվով՝ հիերոգլիֆային/հին եգիպտական/, նոր եգիպտական և հունարեն տեքստեր: Վերջին երկու լեզուները շատ արագ կարդացվում են: Իսկ հիերոգլիֆները հաջողվում է կարդալ Շամպոլյոնին. արդյունքում ստեղծվում է եգիպտերենի քառահատոր բառարանը, և 1822թ. սեպտեմբերի 14-ը համարվում է եգիպտագիտության ծնունդ: Այդ օրը Շամպոլյոնը վերծանում է *Ռամզես* և *Թութմոս* անունները:

1828-29 թվականներին իր հավատարիմ աշակերտների հետ նա ոտք է դնում Նեղոսի հովիտը, ուր ամենուրեք մեծ խանդավառությամբ դիմավորում են նրան ՝ իբրև հին քարերի գիրը ընթերցողի:

(ըստ Զ.Կոսիդովսկու)

Բառերի բացատրություն

հիերոգլիֆ-*պատկերային գրանշան*

պապիրուս-*մի տեսակ բույսի կեղևից պատրաստվող գրելու թուղթ, որ գործածում էին Հին Եգիպտոսում*

սանսկրիտ-*հին հնդկերեն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Շամպոլյոնը և ինչի՞ շնորհիվ հասավ հաջողության:
2. Փորձի՛ր թվարկել Շամպոլյոնի բնավորության այն գծերը, որոնք նրան հասցրին հաջողության:
3. Ի՞նչ է սովորեցնում քեզ այս փոքրիկ պատմությունը:
4. Հանրագիտարանի օգնությամբ պատմի՛ր հիերոգլիֆների և եգիպտական փարավոնների մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Արձանագրություն

Յուրաքանչյուր հիմնարկում որոշակի կոնկրետ ժամանակահատվածում հրավիրվում են ժողովներ ու նիստեր: Ժողովում կամ նիստում քննարկված բոլոր հարցերը անպայմանորեն գրի են առնվում: Գրառված այդ փաստաթուղթը կոչվում է **արձանագրություն:**

Հետաքրքիր է

Արձանագրություն **-** ***Արձան*** բառացի նշանակում է **«կոթող, սահմանաքար, մեծ քար, կուռք»**[11]:

Հնում **արձան** ասելով հասկանում էին ***փորագրված քարե տախտակ,*** հետագայում՝ *մարդու կամ կենդանու քանդակ*: Այս արմատից առաջանում են **արձանագիր, արձանագրություն, արձանագրե**լ բառերը, որոնց իմաստը բխում է ամենահին նշանակությունից՝

Արձանագրություն- 1. Քարի՝ աղյուսի և նման կարծր առարկաների վրա փորագրված գրություն, 2. Ժողովում, նիստում ասվածների գրանցումը պարունակող փաստաթուղթ:

- Իրավաբանական-հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքների կամ դատական նիստի ողջ ընթացքը
- Որևէ փաստ՝ իրողություն հավաստող, վավերացնող փաստաթուղթ, օրինակ՝ վթարի արձանագրություն
- քաղաքացիական դրության, ծնունդի ու մահվան մասին կատարվող գրանցում
- դիվանագիտության ոլորտում՝ համաձայնագիր՝ որևէ օտար պետության հետ կնքված համաձայնության գրավոր փաստաթուղթ
- Փոխաբերորեն՝ դեպքերի, փաստերի չոր ու ցամաք, առանց ստեղծագործական մշակման նկարագրություն, շարադրանք

Արձանագրությունը, լինելով տեղեկատվական տեքստ, ցանկացած հիմնարկի ու կազմակերպության, լինի դա դպրոց թե հիվանդանոց, կուսակցության գրասենյակ թե դատարան, կառավարություն թե Ազգային ժողով, գործավարության հիմքն է, քանի որ այդ փաստաթղթում է վերջնական որոշում կայացվում:

Արձանագրությունը գրառվում է նիստի քարտուղարի կողմից, ձևակերպվում է ճշգրիտ, հստակ, կազմվում է խնամքով և հաստատվում, վավերացվում է նիստի կամ ժողովի նախագահի ու քարտուղարի ստորագրություններով և տվյալ հիմնարկի կնիքով:

Արձանագրությունը պաշտոնական գրագրության կաղապարային փաստաթուղթ է, որն ունի որոշակի ձև, կառուցվածք, և յուրաքանչյուրը, ով կազմում է արձանագրություն, պահում է այդ որոշակի ձևն ու կաղապարը:

Եթե հիմնարկը ունի իր պաշտոնական բլանկը, ապա արձանագրության առաջին էջը գրառվում է այդ բլանկի վրա:

Էջի մեջտեղում գլխատառերով գրվում է արձանագրության վերնագիրը, հաջորդ տողերում նշվում է հիմնարկի որերորդ նիստի արձանագրությունն է:

Նիստի հերթական համարը սովորաբար գրում են հենց **Արձանագրություն** ձևակերպման կողքին՝ **Արձանագրություն- թիվ 10**

---

[11] Բացատրությունը տրվում է ըստ Հր.Աճառյանի: Տե՛ս *Հայերեն արմատական բառարան*, հ I, էջ 325:

Նոր տողից՝ սկզբնամասից իրար տակ գրվում է

Նախագահ

Քարտուղար, որոնց դիմաց գրվում է տվյալ անձանց անուն-ազգանունները (անվան՝ սկզբնատառը, ազգանունը՝ լրիվ):

Հաջորդ տողից՝

Ներկա էին կամ

Նիստին մասնակցում են, որին հաջորդում են ներկաների անուն-ազգանունները՝ նշելով նաև պաշտոնը:

Սրան հաջորդում է՝

Օրակարգ, որի ներքևի տողից համարակալմամբ նշվում են այն բոլոր հարցերը, որոնք դրված են քննարկման: Եթե օրակարգի տվյալ հարցը պետք է ներկայացնի որևէ մեկը, ապա անպայման հարցի տակ նշվում է նաև ելույթ ունեցողի անուն- ազգանունը, պաշտոնը:

Տեղեկատվական այս մասին հաջորդում է ժողովի կամ նիստի ընթացքը, ելույթ ունեցողների հիմնական խոսքը՝

Լսեցին- քննարկվող հարցի մասին զեկուցողին (անուն- ազգանունը)

-Եթե հարցի վերաբերյալ զեկուցումը երկար է, այն կցվում է արձանագրությանը:

-Եթե զեկուցողին տրվում են հարցեր, ապա արձանագրության մեջ նշվում է՝

Հարց-հարցի բովանդակությունը,

Պատասխան- հարցին տրվող պատասխանը զեկուցողի կողմից:

Արտահայտվեցին- տվյալ հարցի շուրջ յուրաքանչյուր ելույթ ունեցողին(անուն-ազգանունը)

Որոշեցին- ձևակերպվում է կայացված որոշումը, ընդ որում, որոշումը կարող է բաղկացած լինել մի քանի կետից. այդ դեպքում յուրաքանչյուր կետը նշվում է նոր տողից՝ համարակալմամբ:

Արձանագրության ավարտին հաջորդում է մեկ տող ներքևում դարձյալ՝

Նախագահ- (ստորագրություն) անուն- ազգանուն

Քարտուղար- (ստորագրություն) անուն-ազգանուն

Նմուշ

Արձանագրություն թիվ 7

Երևանի թիվ 15 դպրոցի մանկավարժական խորհրդի
ժողովը

Նախագահ - դպրոցի տնօրեն Ա. Սահակյան

Քարտուղար - ուսմասվար Գ. Դանիելյան

Ներկա են թիվ 15 դպրոցի մանկավարժական ողջ կոլեկտիվը, ծնողներ...

Օրակարգ՝

1. Դպրոցի՝ հատուկ հսկողության տակ գտնվող աշակերտների վարքագիծը մեկ ուսումնական տարում:

(զեկուցող՝ դպրոցի տնօրեն Ա. Սահակյան)

2. Աշակերտների ամառային հանգստի կազմակերպումը Սևանում

(զեկուցող՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ Կ. Մնացականյան)

Լսեցին դպրոցի տնօրեն Ա. Սահակյանի և ֆիզկուլտուրայի ուսուցիչ Կ. Մնացականյանի ելույթները...

Արտահայտվեցին՝

ուսուցիչ Գ. Մելքոնյանը- ելույթի տեքստը...

ոստիկանության օպեր-լիազոր Ա. Պողոսյանը -ելույթի տեքստը...

ծնողներ Բ. Ազատյանը, Կ. Մովսիսյանը- ելույթի տեքստերը...

Որոշեցին՝

ա) հատուկ հսկողության տակ գտնվող աշակերտների վարքագիծը համարել բավարար և դիմել ոստիկանության ներքին գործերի բաժին՝ նրանց հաշվառումից հանելու համար:

բ) հավանություն տալ Կ. Մնացականյանի՝ աշակերտների ամառային հանգստի կազմակերպման նախագծին և աջակցել դրա իրականացմանը:

Ժողովի նախագահ՝ (ստորագրություն) Ա. Սահակյան

Ժողովի քարտուղար՝ (ստորագրություն) Գ. Դանիելյան

Առաջադրանք

Փորձի՛ր ներկայացնել արձանագրության մեջ հիշատակված ելույթների տեքստերը քո տրամաբանությամբ:

2.Հաշվետվություն

Հաշվետվությունը հիմնարկի կամ կազմակերպության՝ որևէ ժամանակահատվածում որևէ հարցի կապակցությամբ կատարած աշխատանքների գրավոր ներկայացումն է ավելի բարձր, վերադաս օղակի առջև:

Հաշվետվությունը գրավոր փաստաթուղթ է, որը, սակայն, ժողովի ընթացքում կարող է ներկայացվել նաև բանավոր:

Հաշվետվություն գրելու համար որևէ գրավոր կաղապար կամ ստանդարտ չկա:

Տվյալ փաստաթղթում կարևորվում է տեքստի հիմնական ասելիքը՝ աշխատանքային գործունեությունը ճիշտ մատնանշող ուղղությունները՝ սկսած առաջնայինից մինչև վերջին հարցը: Այն պետք է ներառի գործունեությունը ցույց տվող փաստացի թվական տվյալներ, հստակ վիճակագրություն և ընդհանրացնող եզրահանգումներ:

Առաջադրանք

Քանի որ դու, սիրելի՛ աշակերտ, դեռ ընդամենը դպրոցական ես, ապա քեզ առաջարկում ենք գրել հաշվետվություն հետևյալ պայմանական թեմաներով՝

ա) հաշվետվություն հայրիկին՝ մեկ ամսվա ընթացքում քո կատարած աշխատանքի, պահվածքի մասին,

բ) քո դասարանի անունից հաշվետվություն դպրոցական ժողովում՝ ձեր կատարած աշխատանքների (արտադասարանական թե դասարանային), դասարանի ընդհանուր առաջադիմության, այդ առաջադիմությունը բարձրացնելուն ուղղված ձեր քայլերի մասին:

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Տեքստային աշխատանք.

Խորհրդավոր ծերունին

- Այդ դո՞ւ ես,- ասաց նա և գլուխս թեթև շոյելով շարունակեց իր ճամփան առանց կանգնելու:

- Դու որտեղի՞ց գիտես ինձ, ծերունի՛:

- Քո ծնված օրից:

- Ուրեմն դու ճանաչո՞ւմ ես ինձ:

- Ես քո հորն էլ էի ճանաչում փոքրուց:

- Վա՛հ, մի՞թե...

- Ես քո պապին էլ եմ տեսել. ա՜խ, ի՜նչ չարաճճի երեխա էր:

- Դու իմ պապին տեսել ես երեխա ժամանա՞կ:

- Է՜հ, բայց քո պապի պապը ավելի կայտառ երեխա էր:

- Դու իմ պապի պապին էլ ես տեսե՞լ:

- Հա՛, հա՛, հա՛, հա՛. զարմանում ես դու, դեռ նրանց պապերի պապերին էլ ...

- Դե որ այդպես է, պատմի՛ր, խնդրում եմ, պատմի՛ր, ծերունի՛. ի՞նչ տեսակ մարդիկ էին նրանք, ի՞նչ գիտես նրանցից:

- Նրանք էլ քեզ նման մարդիկ էին: Քեզ նման երազներ էին երազում, մեծ-մեծ հույսեր էին փայփայում: Գալիս էին՝ ոգևորված իրենց հույսերով և մեկ-մեկ դրանք կորցնում ճանապարհին: Ոմանք շուտ էին վիատվում ու բեկվում, ոմանք ավելի հանդուգն ու համառ էին գալիս, մինչև մի տեղ ընկնում էին ուժասպառ ու... Օ՜, շատ եմ ծիծաղել նրանց վրա:

- Վա՜յ, խե՜ղճ պապեր:

- Բայց ես ականատես եմ եղել նրանց կյանքի ողջ ընթացքին, տեսել եմ նրանց զավակների խաղերն ու լսել եմ նրանց առաջին թոթովանքները, մասնակցել եմ նրանց զվարթ խրախճաններին, ձայնակցել եմ նրանց հաղթանակների աղաղակներին, ես պսակել եմ նրանց առաքինություններն ու մեծագործությունները...

- Ո՜վ բարի ծերունի:

- Հա՛, նրանք ինձ հետ էին: Մի քիչ տեղ եկան. մեկը մի տեղ գտավ իր գերեզմանը, մյուսը նրանից մի փոքր հեռու իր ալևոր գլուխը դրեց. որը՝ դեռ մատաղ, որը՝ ծերունի, որը՝ ցրտահար... Քո բոլոր պապերն ինձ հետ անցել են, ու ամեն մեկը մի տեղ մնացել:

- Ո՛ւհ, ինչքա՜ն մեծ ես դու:

- Մե՜ծ, աչքդ ինչ տեսնի, նրա սկիզբն եմ ես, միտքդ ուր հասնի, նրանից առաջ եմ ես...

- Եվ դեռ այդպես արա՞գ ես գնում. ես չեմ կարողանում քեզ հասնել:

-Հա՛, հա՛, հա՛, հա՛, հոգնեցի՞ր... Օ՜, տեսնում եմ՝ արդեն քեզ էլ եմ թողնում ... Ե՜կ, ե՜կ...

-Սպասի՛ր, ծերունի՛, իմ ուժը, իմ եռանդը... Ես հոգնեցի, էլ չեմ կարողանում գալ:

- Ե՜կ, ե՜կ...

(Ըստ Հովհ. Թումանյանի)

Հարցեր

ա) Ի՞նչ խոհեր արթնացրեց այս փոքրիկ ստեղծագործությունը. արտահայտվի՛ր բանվոր:

բ) Ո՞վ կարող է լինել խորհրդավոր ծերունին. ի՞նչն է նա խորհրդանշում:

Խմբային աշխատանք

Բեմականացրե՛ք «Խորհրդավոր ծերունին». ո՞վ ավելի ճիշտ և գեղեցիկ կներկայացնի իր խոսքը:

Դասարանային աշխատանք

Անցկացրե՛ք քննարկում *«Արդյո՞ք քեզ համար թանկ է յուրաքանչյուր րոպեն»* թեմայով:

Առաջադրանքներ

ա) Կետադրի՛ր տրված համր բնագիրը:

Սաղարթախիտ անտառի թավուտի վրա պտտվեց արծիվը, բազմեց իր ժայռեղեն գահին և ծանրորեն հավաքելով իր ժանգագույն թևերը գիշատչի ամբարտավան հայացքով նայեց իր թագավորության ընդարձակ սահմաններին: Երևի բան նկատեց թևերը կրկին թափ տվեց և սուրաց օդի մեջ թռիչքի շրջանակն ավելի մեծացնելով: Եվ հենց այդ միջոցին էլ մի նետ սուրալով մխրճվեց արծվի կուրծքը: Մնացած տարածությունն արծիվն անցավ նետի հետ կախված թևերով և թրմփաց ինչ-որ տեղ: Թավուտում մարդիկ երևացին, որոնք անթարթ հետևում էին նետահարված արծվին: Նրանցից մեկը իշխանական հագուստով մի երիտասարդ էր տասնինը-քսան տարեկան, մյուսները հինգ-վեց հոգի գյուղական երիտասարդներ էին առնական դեմքերով նետերի պարկերը ուսերից կախ:

բ) Դո՛ր գրիր գոյականական և բայական անդամի լրացումներ՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով պաշտոնը:

գ) Տեքստից դո՛ր գրիր դերբայական դարձվածները, որոշի՛ր դրանց պաշտոնը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Նախադասության շարահյուսական վերլուծություն

Նախադասության շարահյուսական վերլուծությունը ընդգրկում է մի քանի փուլ, որոնցից յուրաքանչյուրի իմացությունը խիստ կարևոր է.

1. Որոշել նախադասության կառուցվածքային տեսակը՝

պարզ (համառոտ, ընդարձակ) *թե* ***բարդ*** (համադասական, ստորադասական)

միակազմ (անենթակա, անդեմ) *թե* ***երկկազմ***

հաստատական *թե* ***ժխտական:***

2. Որոշել նախադասության տեսակը ՝ ըստ հաղորդակցման նպատակի՝

պատմողական, հարցական, բացականչական, հրամայական:

3. Գտնել բառակապակցությունները և որոշել դրանց բնույթը՝

ազատ թե կայուն (դարձվածային և ոչ դարձվածային),

ըստ բաղադրիչների քանակի,

ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության:

4.Նախադասության անդամների շարահյուսական պաշտոնը

ենթակա- ստորոգյալ



Օրինակ 1.

Մեր միակ պաշտպանը Մարիամ տատն էր - պարզ ընդարձակ, երկկազմ, հաստատական, պատմողական նախադասություն

Բառակապակցությունները՝

մեր միակ պաշտպանը-ազատ, բազմաբաղադրիչ, գոյականական

մեր պաշտպանը- ազատ, երկբաղադրիչ, գոյականական

միակ պաշտպանը- ազատ, երկբաղադրիչ, գոյականական

Մարիամ տատը- *ազատ, երկբաղադրիչ, գոյականական*

Իմացիր

Ենթակա-ստորոգյալ կապակցությունը *չի համարվում* բառակապակցություն. նրանք միշտ կապվում են ստորոգական կապակցությամբ:

Նախադասության անդամների շարահյուսական պաշտոնը

Մեր- *գոյականական անդամի լրացում՝ հատկացուցիչ*

միակ- *գոյականական անդամի լրացում՝ որոշիչ*

պաշտպանը- *ենթակա*

Մարիամ- *գոյականական անդամի լրացում՝ որոշիչ*

տատն էր- *բաղադրյալ ստորոգյալ*

Օրինակ 2.

Ես և ընկերս ծրարի մեջ կրկին զգուշորեն փակեցինք Մարիամ տատի գանձը:

պարզ ընդարձակ, երկկազմ, հաստատական, պատմողական նախադասություն

Ես և ընկերս - փակեցինք- ստորոգական կապակցություն

Բառակապակցությունները՝

Ես և ընկերս-համադասական

Իմացիր

Նախադասության բազմակի անդամները իրար հետ կապվում են *համադասական* կապակցությամբ, իսկ լրացում- լրացյալ կապակցությունները՝ *ստորադասական:*

ծրարի մեջ կրկին զգուշորեն փակել- ազատ, բազմաբաղադրիչ, բայական

զգուշորեն փակել- *ազատ, երկբաղադրիչ, բայական*
ծրարի մեջ փակել-*ազատ, երկբաղադրիչ, բայական*
կրկին փակել- *ազատ, երկբաղադրիչ, բայական*
Մարիամ տատի գանձը փակել- *ազատ, բազմաբաղադրիչ, բայական*
Մարիամ տատի գանձը-*ազատ, բազմաբաղադրիչ, գոյականական*
Մարիամ տատ- *ազատ, երկբաղադրիչ, գոյականական*
տատի գանձը-*ազատ, երկբաղադրիչ, գոյականական*
գանձը փակել-*ազատ, երկբաղադրիչ, բայական*

Նախադասության անդամների շարահյուսական պաշտոնը

Ես և ընկերս- բազմակի ենթակա
փակեցինք- պարզ ստորոգյալ
զգուշորեն- բայական անդամի լրացում՝ ձևի պարագա
ծրարի մեջ- բայական անդամի լրացում՝ տեղի պարագա
կրկին- բայական անդամի լրացում՝ չափ ու քանակի պարագա
Մարիամ- գոյականական անդամի լրացում՝ որոշիչ
տատի- գոյականական անդամի լրացում՝ հատկացուցիչ
գանձը- բայական անդամի լրացում՝ ուղիղ խնդիր

Օրինակ 3.

Մենք՝ այսօրվա հասուն տղամարդիկս, գիժ ուլերի նման ոտնատակ էինք անում գյուղի բանջարանոցները:

Մենք՝ այսօրվա հասուն տղամարդիկս, գիժ ուլերի նման ոտնատակ էինք անում գյուղի բանջարանոցները- պարզ ընդարձակ, երկկազմ, հաստատական, պատմողական նախադասություն

Մենք - ոտնատակ էինք անում-ստորոգական կապակցություն

Բառակապակցությունները՝

Մենք՝ այսօրվա հասուն տղամարդիկս - *ազատ, բազմաբաղադրիչ, դերանվանական*

այսօրվա հասուն տղամարդիկս - *ազատ, բազմաբաղադրիչ, գոյականական*

այսօրվա տղամարդիկս - *ազատ, երկբաղադրիչ, գոյականական*

հասուն տղամարդիկս - *ազատ, երկբաղադրիչ, գոյականական*

գիժ ուլերի նման - *ազատ, երկբաղադրիչ, գոյականական, միջնորդավորված*

գիժ ուլեր - *կայուն, երկբաղադրիչ, գոյականական*

գիժ ուլերի նման ոտնատակ անել- *ազատ, բազմաբաղադրիչ, բայական*

ոտնատակ անել գյուղի բանջարանոցները - *ազատ, բազմաբաղադրիչ, բայական*

գյուղի բանջարանոցները - *ազատ, երկբաղադրիչ, գոյականական*

Նախադասության անդամների շարահյուսական պաշտոնը

Մենք - ենթակա

այսօրվա - գոյականական անդամի լրացում՝ որոշիչ

հասուն - գոյականական անդամի լրացում՝ որոշիչ

տղամարդիկս - գոյականական անդամի լրացում՝ բուն բացահայտիչ

գիժ - գոյականական անդամի լրացում՝ որոշիչ

ուլերի նման - բայական անդամի լրացում՝ ձևի պարագա

ոտնատակ էինք անում - պարզ ստորոգյալ

գյուղի - գոյականական անդամի լրացում՝ հատկացուցիչ

բանջարանոցները - բայական անդամի լրացում՝ ուղիղ խնդիր

դ) Վերլուծի՛ր տրված նախադասությունները շարահյուսորեն:

1. Կիսախավարում մոմի ոսկեղեն լեզվակն է պարում
Աշնան բարդենու մի տերևի պես:

2. Այդ սուրբ մտքերը ինձ ներշնչողը
Ամենից առաջ կույս էր մի անբիծ,
Կույս մի հիասքանչ և սակայն դաժան...

3. Պատերազմին՝ առաջին ձմռանը, Գիքորը գոմում կարտոֆիլով պահեց Սիմոնի հինգ երեխային ու կնոջը:

4. Իրար մեղադրելով անգրագիտության մեջ՝ նրանք իրար ձեռքից խլխլեցին ձիերի սանձերը:

5. Հեքիաթները նա պատմում է ցածրաձայն, խորհրդավոր տոնով՝ նայելով աչքերիս լայնացած բիբերով, կարծես լցնելով սիրտս ինձ բարձրացնող ինչ-որ ուժով:

6. Քթախոտ քաշելով՝ սկսում է պատմել ինձ ինչ-որ հրաշալի հեքիաթներ բարի ավազակների ու սուրբ մարդկանց մասին, ամեն տեսակ գազանների ու սատանաների մասին:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակ. Բ. - Ակսել Բակունց
Ա. Ղ. - Արամ Ղանալանյան
Աղ. - Աղավնի
Ա. Ս. - Անահիտ Սահինյան
Ա. Ս. - Արամայիս Սահակյան
Ար. - Արազի
Ավ. Իս. - Ավետիք Իսահակյան
Բ. Վ. – Բոգդան Վերդյան
Գ. Ս. - Գեղամ Սարյան
Դ. Դ. - Դերենիկ Դեմիրճյան:
Ե. Չ. - Եղիշե Չարենց
Էդ. Ավ. - Էդուարդ Ավագյան
Լ. Տ. - Լև Տոլստոյ
Հ. Թ. - Հովհաննես Թումանյան
Հ. Մաթ. - Հրանտ Մաթևոսյան
Հրչ. Մաթ. – Հրաչյա Մաթևոսյան
Հ. Շ. - Հովհաննես Շիրազ
Հ. Ս. - Համո Սահյան
Հր. Ք. - Հրաչյա Քոչար
Ղ. Աղ. - Ղազարոս Աղայան
Մ. Ա. - Մկրտիչ Արմեն
Մ. Մ. - Մարո Մարգարյան
Մ. Ն. - Միքայել Նալբանդյան
Մ. Ս. - Մկրտիչ Սարգսյան
Մուր. - Մուրացան
Ն.-Դ. - Նար-Դոս
Ն. Զ. - Նաիրի Զարյան
Շ. - Շեքսպիր
Շիրվ. - Շիրվանզադե
Չ. Ա. – Չինգիզ Այթմատով
Պ. Ս. - Պարույր Սևակ
Ջ. Լ. – Ջեկ Լոնդոն
Ռ. Դ. - Ռազմիկ Դավոյան
Ռ. Հ. - Ռուբեն Հովսեփյան
Ս. Ա. - Ստեփան Ալաջաջյան
Ս. Խ. - Սերո Խանզադյան
Ս. Կ. - Սիլվա Կապուտիկյան
Ս. Զ. - Ստեփան Զորյան
Ս. Շ. – Սբատ Շահազիզ
Վ. Ա. - Վախթանգ Անանյան
Վ. Այգ.- Վարդան Այգեկցի
Վ. Դ. - Վահագն Դավթյան
Վ. Թ. - Վահան Թոթովենց
Վ. Մ. - Վահագն Մուղնեցյան
Վ. Պ. - Վարդգես Պետրոսյան
Վ. Ս. - Վանո Սիրադեղյան
Վ. Տ. - Վահան Տերյան
Վ. Փ. - Վրթանես Փափազյան
Ռաֆ. - Ռաֆֆի

ած. - ածական
բրբ. - բարբառային
գ. - գոյական
գռհ. - գռեհկական
գվռ.- գավառական
թարգմ. - թարգմանական
ժող. - ժողովրդական
կ. - կապ
ձ. - ձայնարկություն
մկ. - մակբայ
շ. - շաղկապ
վ. – վերաբերական